ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

39ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 27 (1927) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 13, 2019
VOLUME 39, NO. 27 (1927) SATURDAY JULY 13, 2019

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### Յակառակ Յամակարգուած Արշաւին

Միացեալ Նահանգներու կառավարութեան կողմէ ֆինանսաւորուող Միջազգային Յանրապետական Յիմնարկը հրապարակած է իր հերթական հարցախոյզը՝ Յայաստանի քաղաքական, տնտեսական ու ընկերային իրավիճակին նուիրուած: Յարցախոյզին մասնակցած են Երեւանի ու շրջաններուն մէջ բնակող 1200 քաղաքացիներ՝ տարբեր տարիքի, սեռի եւ տարեկան եկամուտի: Ի տարբերութիւն Ամերիկայի մէջ տեղի ունեցող հարցախոյզերուն, որոնք կը կատարուին հեռաձայնի եւ կամ առցանց, ինթըրնէթի վրայ, այս հարցախոյզը իրականացուած է դէմ-դիմաց հարց ու պատասխանի միջոցաւ:

Յայաստանի մէջ, յատկապէս նախորդ կառավարութիւններուն օրօք, ժողովուրդը թերահաւատութեամբ կը մօտենար հրապարակուող հարցախոյզերուն, զանոնք նկատելով քաղաքական պատուէրով պատրաստուած: Անցեալին կար այլ հանգամանք մը եւս, որ կը խանգարէր ժողովուրդի մասնակցութիւնը նման հարցախոյզերու եւ անկեղծ պատասխանելու հարցերուն՝ երկրէն ներս տիրող վախի մթնոլորտին պատճառաւ:

Միջազգային Յանրապետական Յիմնարկը բաւականին հեղինակաւոր կազմակերպութիւն մըն է, որ ունենալով հանդերձ քաղաքականապէս պահպանողական ուղղուածութիւն, անոր կողմէ հրապարակուած արդիւնքները կասկած չեն յառաջացներ ու կ՚արտացոլացնեն Յայաստանի ժողովուրդի տրամադրութիւնները տուեալ պահուն:

Յուլիս 8-ին հրապարակուած հարցախոյզի արդիւնքները կը հաստատեն, որ Նիկոլ Փաշինեանի գլխաւորած կառավարութիւնը կը շարունակէ վայելել ժողովուրդի մօտ 70 տոկոսի վստահութիւնը, որոնք շատ դրական եւ կամ մասամբ դրական կը գնահատեն անոր գործունէութիւնը: Այս արդիւնքը 12 տոկոսով նուազ է անցեալ տարի հրապարակուած նոյնանման հարցախոյզին հետ բաղդատած: Միւս կողմէ, դժգոհներու տոկոսը 13-էն բարձրացած է 25 տոկոսի: Այս տոկոսները բնական են եւ յաջորդ ամիսներուն կրնան ենթարկուիլ նոր փոփոխութիւններու: Ժողովրդավարական երկիրներու հետ համեմատած այս թիւերը բաւական նպաստաւոր են կառավարութեան համար, մանաւանդ որ դժգոհներուն մէջ կան բաւական թիւով մարդիկ, որոնք կը խորհին որ, Փաշինեան շատ թոյլ կը գտնուի նախկին համակարգի ներկայացուցիչներուն հանդէպ ու կ՛ակնկալեն, որ ան աւելի արմատական միջոցներու դիմէ, 20 տարի երկիրը թալանած եւ տակաւին իրենց

Շար.ը էջ 8

# Նոր Յարցախոյզի Յամաձայն Յայաստանի Կառավարութիւնը Կը Շարունակէ Վայելել Բնակչութեան 70 Տոկոսի Վստահութիւնը




*Միջազգային Հանրապետական Հիմնարկի հրապարակած նոր հարցախոյզի համաձայն, Հայաստանի կառավարութիւնը կը շարունակէ վայելել բնակչութեան մեծամասնութեան վստահութիւնը:*

*Հարցումներու համաձայն, բնակչութեան մեծամասնութիւնը լաւատես է նաեւ երկրի ապագայի նկատմամբ՝ հակառակ ժողովուրդի մօտ շարունակուող տնտեսական մտահոգութիւններուն:*

*Հարցերուն պատասխանածներուն աւելի քան 60 տոկոսը ցանկութիւն յայտնած է, որ կառավարութիւնը տնտեսական եւ քաղաքական բարեփոխումները իրականացնէ ոչ թէ աստիճանաբար, այլ արագ կերպով: 72 տոկոսը վստահութիւն յայտնած է վարչապետի նկատմամբ, 60 տոկոսի կարծիքով՝ երկիրը կ՚ընթանայ ճիշդ ուղիով:*

*«Հակառակ որ այս վերջին ցուցանիշը անկում ապրած է 12 կէտով, ի համեմատ անցած տարուան Հոկտեմբեր ամսուն, այնուամենայնիւ, այս ցուցանիշը կառավարութեան նկատմամբ վստահութեան արտայայտման նշանակալի արտայայտութիւն է: Վստահութեան այս բարձր մակարդակի մէկ այլ վկայութիւն է հարցուածներու աջակցութիւնը բարեփոխումներու իրականացման. անոնց 59 տոկոսը կը կարծէ, որ կառավարութիւնը բաւականաչափ ջանքեր կը գործադրէ փտախտի եւ կաշառակերութեան դէմ պայքարին: Հակառակ լաւատեսութեան այս դրսեւորումներուն՝ կան նաեւ շարք մը հանրային մտահոգութիւններ», - ըսուած է կեդրոնի հաղորդագրութեան մէջ:*

*Կառավարութեան ամենամեծ ձախողումներու վերաբերեալ հարցին պատասխանելով, հարցախոյզի մասնակիցները առաւել յաճախ նշած են վատ կառավարումը (22 տոկոս):*

*Հարցախոյզը կատարուած է 2019-ի Մայիսի 6-31 ժամանակաշրջանի եւ մասնակցած են Հայաստանի 18 տարեկան եւ բարձր, ընտրելու իրաւունք ունեցող 1200 մշտական բնակիչներ:*

# Գոնկրէսական Սփիր Եւ Քիմ Քարտաշեան Միասին Պիտի Գործեն Յանուն Յայոց Ցեղասպանութեան Ճանաչման

*Պատկերասփիւռի ամերիկահայ աստղ Քիմ Քարտաշեան հարցազրոյց տուած է* The Wall Street Journal*-ին, ուր նաեւ ըսած է, թէ կը ցանկայ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը դարձնել իր առաքելութիւնը:*

*Քիմ, որ կը զբաղի Միացեալ Նահանգներու մէջ քրէական արդարադատութեան բարեփոխումներու հարցերով, ըսած է, որ ցանկայ ուշադրութիւնը կեդրոնացնել ցեղասպանութեան ու վերջերս հաղորդագրութիւն ուղարկած է ԱՄՆ նախագահ Տանըլտ Թրամփի փեսային՝ Ճարետ Քուշներին, որ նաեւ նախագահին խորհրդականն է՝ խնդրելով քննարկել հարցը:*

*«Ես կը ցանկամ գալն դարձնել իմ առաքելութիւնը: Հայրիկս շատ պիտի հպարտանար»,ըսած է ան՝ նկատի ունենալով ամերիկահայ իրաւաբան Ռապըրթ Քարտաշեանը:*

*WSJ-ը նաեւ յայտած է, որ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցով Քիմ Քարտաշեանին զանգահարած է Գոնկրէսական Ճեքի Սփիր՝ ակնկալելով այս հարցի շուրջ Քարտաշեան-Ուեսթի աջակցութիւնը: Եթէ դուն կարենաս*



Ամերիկահայ աստղ Քիմ Քարտաշեան

*համնիլ հոն, որ նախագահը ճանչնայ ցեղասպանութիւնը, ատիկա պիտի ըլլայ բեկումնային՝ Գոնկրէսի մէջ ցեղասպանութեան բանաձեւերու ընդունման համար», ըսած է Սփիր Քարտաշեանին:*

*Կը նշուի, որ մօտ օրէն Քարտաշեան պիտի ըլլայ Սպիտակ տուն՝ քննարկելու քրէական արդարադատութեան հետ կապուած հարցերը եւ խոստացած է նաեւ անդրադառնալ Հայոց Ցեղասպանութեան հարցին:*

# «Ղարաբաղեան Յակամարտութեան Ռազմական Լուծում Չկայ». Տանըլտ Թուսք

*Ղարաբաղեան հակամարտութիւնը կրնայ կարգաւորուիլ միայն քաղաքական ճանապարհով եւ միջազգային իրաւունքի եւ սկզբունքներու համաձայն: Այս մասին յայտարարած է Եւրոխորհուրդի նախագահ Տանըլտ Թուսքը Պաքուի մէջ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ հանդիպումէն ետք, կը հաղորդէ «Ինթըրֆաքս Ատրպէյճան»-ը:*

*«ԵՄ-ն կ՚աջակցի Ատրպէյճանի ինքնիշխանութեան, անկախութեան եւ տարածքային ամբողջականութեան: Խօսեր ենք տարածաշրջանին մէջ կայունութեան մասին, քննարկեր ենք չլուծուած ղարաբաղեան հակամարտութիւնը: Ռազմական լուծում չկայ, կայ միայն քաղաքական լուծում՝ միջազգային իրաւունքի եւ սկզբունքներու համաձայն: ԵՄ-ն կը շարունակէ լիովին աջակցիլ Մինսքի խումբի համանախագահներու՝ արդար եւ երկարատեւ կարգաւորմանն ուղղուած ջանքերուն՝ հիմնուած Հելսինքեան եզրափակիչ սկզբունքներու վրայ»,- ըսած է Թուսքը:*

Շար.ը էջ 4

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Յունիսն Էլ Անցաւ՝ Հող Չյանձնեցինք

ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

*Յունուար-Փետրուար ամիսներին՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի դաւոսեան հանդիպումից յետոյ, մամուլում տեղեկատուութիւն տարածուեց, թէ իբր կողմերը մօտ են համաձայնութեան եւ Յունիսին փաստաթուղթ են ստորագրելու, որով հայկական կողմը զիջելու է ազատագրուած շրջանների մի մասը: Իշխանութիւնների կողմից, ընդ որում ոչ միայն ներկայիս՝ հող յանձնելու վերաբերեալ խօսակցութիւնները եղել են միշտ: Սակայն այս դէպքը իւրայատուկ է նրանով, որ այս տեղեկութիւնը եկել էր ռազմավարական դաշնակից Ռուսաստանից: Այդ կարծիքը յայտնած փորձագէտը՝ Ստանիսլավ Տարասովը, հարցազրոյց էր տուել նաեւ հայկական կայքերից մեկին՝ կրկնելով առաջ քաշած թեզը: Նման պնդման համար հիմք էին հանդիսացել Փաշինեան-Ալիեւ՝ «անգամ ամենահամեստ դիւանագիտական չափանիշներով երկար տեւած» մէկուկէս ժամանոց զրոյցը եւ այն, որ «Ալիեւը չափազանց ուրախ էր, իսկ Փաշինեանը՝ ճնշուած»:*

*Սակայն Յունիսն անցաւ, իսկ առարկայական բանակցութիւնների վերսկսման մասին խօսք չկայ, ընդ որում, դրա մեղաւորը հենց Ատրպէյճանն է, որը դեռեւս Մայիսի սկզբից սկսեց լարել իրավիճակը առաջնագծում եւ, ըստ էութեան, հետ շպրտեց քննարկումները մինչեւ նախորդ տարուայ Սեպտեմբերին՝ Դուշանբէի պայմանաւորուածութիւններից առաջ եղած պահը: Յունիսի առաջին կէսին տեղի ունեցած լարումը եւ դրան յաջորդած ՀՀ եւ Ատրպէյճանի արտգործնախարարների հանդիպումն արձանագրեցին, որ կողմերը նոյնքան հեռու են որեւէ հարցի շուրջ պայմանաւորուածութեան գալուց, որքան հեռու էին, օրինակ, նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածում: Դրա օգտին են խօսում նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների մայիսեան յայտարարութիւնում տեղ գտած ձեւակերպումները: Խօսքը մասնաւորապէս Վիեննայի եւ Մոսկուայի հանդիպումների մասին է, որոնք որակուել էին որպէս «քննարկումներ»՝ ի հեճուկս ատրպէյճանական քարոզչութեան շարունակական փորձերի դրանք որպէս «բանակցութիւնների վերսկսում» ներկայացնելու: Չկան բանակցութիւններ՝ չի կարող լինել փաստաթուղթ:*

*Ներկայիս իրավիճակը եւ դրա դինամիկան յուշում են, որ քանի դեռ չկան վստահութեան ամրապնդման մեխանիզմների շուրջ պայմանաւորուածութիւններ ու դրանք կեանքի կոչելուն ուղղուած յստակ քայլեր՝ աւելորդ է խօսել ստատուս-քուոյի փոփոխութեան, կամ առհասարակ որեւէ տեսակի առարկայական բանակցութիւնների մասին: Իսկ ստատուս-քուոյի փոփոխութեանը գնալը, որքան էլ զարմանալի հնչի, ինչ-որ առումով ձեռնտու չէ նաեւ Ալիեւին: Բանն այն է, որ առարկայական բանակցութիւնների ճանապարհն ընկած է փոխվստահութեան մթնոլորտի ապահովման մեխանիզմների եւ հասարակութիւններին խաղաղութեանը նախապատրաստելու միջով, ինչն այսօրուայ Ատրպէյճանում գործնականում անհնար է. յայտնի չէ, թէ ինչպէս Ատրպէյճանի հասարակութիւնը կ՛ընդունի հայի ներկայութիւնը, օրինակ, Պաքւում, «չկան երաշխիքներ, որ հիւրանոցում, երբ պարզուի, որ նա հայ է՝ նրան չեն մորթի»: Վերջին միտքը, ըստ յայտնի ռուսաստանցի լրագրող Վլադիմիր Սոլովիովի, պատկանում է Իլհամ Ալիեւին: Ուստի, թէեւ ստատուս-քուոյի փոփոխութիւնը շատ ցանկալի սցենար է Պաքուի համար՝ ճանապարհը, որով պէտք է անցնել դրան հասնելու համար՝ անընդունելի է:*

*Վերադառնալով «հող յանձնելու» թեմային հարկ է նշել, որ Տարասովի կանխատեսումը մի պահ սկսեց միս ու արիւն ստանալ ՀՀ եւ Ատրպէյճանի արտգործնախարարների՝ Յունիսի 20-ի Ուաշինգտոնեան հանդիպումից յետոյ, երբ Էլմար Մամեդիարովը յայտարարեց, թէ իբր «համանախագահները առաջարկել են դուրս բերել (հայկական) զօրքերն ու խաղաղապահներ մտցնել»: Սակայն ՀՀ ԱԳՆ-ի հերքումից յետոյ Մամեդիարովի յայտարարութիւնն ատրպէյճանական լրատուամիջոցները կա՛մ ընդհանրապէս հեռացրեցին իրենց լրահոսից, կա՛մ յաւելեցին հերքմամբ, որ Մամեդիարովը նման յայտարարութիւն չի արել: Այդպիսով, Յունիսին հողերը յանձնելու թեզը եւս «ժամկետանց» դարձաւ, թէեւ որոշակի ազդեցութիւն Յունուարին արդէն թողել էր:*

*Իհարկէ, յետագայում նման «կանխատեսումներից» եւ կարծիքներից ապահովագրուել հնարաւոր չէ: Ի վերջոյ ամէն ինչ հանգում է նրան, թէ որքանով է հասարակութիւնը վստահում սեփական երկրի իշխանութիւններին, հաւատում հակառակորդ երկրի իշխանութիւններին կամ երրորդ երկրի փորձագէտներին: Խնդրի զգայուն բնոյթը հաշուի առնելով՝ վստահութիւնն ու հաւատը եւս բաւարար չափորոշիչներ չեն տեղեկատուութիւնն ընկալելու համար: Ամենավստահելի դաշնակիցն այս հարցում, թերեւս, սեփական քննադատական մտածելակերպն է՝ ներքին ու արտաքին քաղաքական քարոզչութիւնը իրականութիւնից տարբերելու ունակութիւնը: Իսկ ինչ վերաբերում է բուն արցախեան խնդրի լուծմանը՝ հայկական իշխանութիւնները չեն կարող որեւէ քայլ կատարել առանց հայ ժողովրդի, մասնաւորապէս Հայաստանի հասարակութեան կարծիքը հաշուի առնելու, որն, ի դէպ, ամենեւին միտուած չէ տարածքներ յանձնել հանուն ինչ-որ խաղաղութեան:*

*«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»*

# Արցախի Պատմական Ընտրութիւնը. Շահառուները Յայտնի Են

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

*Արցախի ազգային անվտանգութեան ծառայութիւնը յայտարարութիւն է տարածել, զգուշացնելով նախագահի եւ խորհրդարանի ընտրական գործընթացում ապակայունացման, հակասահմանադրական քայլերի մտադրութիւն ունեցողներին, որ թոյլ չեն տա այդպիսի որեւէ զարգացում:*

*Օրերս Կեդրոն հեռուստաընկերութեան Հայելի հաղորդաշարի եթերում Արցախի պաշտպանութեան նախկին նախարար Սամուէլ Բաբայեանն էր արել յայտարարութիւններ, որոնք արցախեան տարբեր շրջանակներ գնահատել էին սադրիչ, բռնութեան ակնարկ պարունակող: Բաբայեանն ի հարկէ խօսել էր ընդամէնը հնարաւոր հանրահաւաքային ակցիաների մասին, որով, ըստ նրա, մի քանի հազար մարդ Արցախի իշխանութեանը կը պարտադրեն գնալ Սահմանադրութեան փոփոխութեան: Սամուէլ Բաբայեանին այդ փոփոխութիւնն անհրաժեշտ է Հայաստանում գրանցուած անձանց ընտրութեան հնարաւորութիւն տալու համար: Այլապէս, Բաբայեանն օրինակ դրա պատճառով զրկուած է առաջադրուելու հնարավորութիւնից:*

*Սպառնու՞մ է Սամուէլ Բաբայեանն ապակայունացմամբ, թէ ոչ: Արցախի անվտանգութեան ծառայութեան արձագանքը յուշում է, որ յամենայն դէպս տեսնում են այդպիսի սպառնալիք:*

*Արցախի իշխանութեան ձեւաւորման 2020 ընտրական փուլը՝ եթէ չլինի արտահերթ ընտրութիւն, ստացել է հիմնարար նշանակութիւն: Գործնականում, խօսքը պատմական նոր շրջափուլի մեկնարկի մասին է, որով ամբողջանալու է Հայաստանում տեղի ունեցած թաւշեայ յեղափոխութեան ռազմա-քաղաքական տրամաբանութիւնը, ինչի գերակայ խնդիրը պատերազմի յաղթանակից յետոյ ռազմա-քաղաքական անկման շրջափուլում յայտնուած հայկական պետականութիւնը դրանից դուրս բերելն ու ռազմական յաղթանակին համարժէք դիւանագիտական-քաղաքական հուն տեղափոխելն է:*

*Սկզբունքօրէն դա է նշաձողը, որ պէտք է գերիշխի Արցախի նախագահի եւ խորհրդարանի ընտրութեան առանց չափազանցութեան պատմական գործընթացում:*

*Արդեօք գործընթացին մասնակցելու յայտ եւ հաւակնութիւն ներկայացնող ուժերը, կամ նրանց այսպէս ասած բաց կամ աներեւոյթ աջակցութեամբ զբաղուած ներքին ու արտաքին սուբիեկտները այդ պատմական խնդրի շահառու են:*

*Յատկապէս, որ հաւակնորդների շարքում են ուժեր եւ անձինք, որոնք անցնող քառորդ դարում այս կամ այն բարձր կարգավիճակում պատասխանատուութիւն են կրել ռազմական յաղթանակից յետոյ քաղաքական-դիւանագիտական անկման համար: Եւ նրանցից որեւէ մէկը դեռեւս չի տուել այդ փուլի եւ դրա որեւէ դրուագում իր մասնակցութեան քաղաքական գնահատականն ու չի ստանձնել պատասխանատուութիւն այդ կորսուած ժամանակի եւ կուտակուած ռիսկերի համար:*

*«ԼՐԱԳԻՐ»*

# Նախկինների Ակտիւացած «Չէզոքները»

ՊԱՐԳԵՒ ԱՊՐԵՍԵԱՆ

*Սպասելի հետեւողականութեամբ Սահմանադրական դատարանի շուրջ ստեղծուած իրավիճակը «միաւորել» է նախկին իշխանութիւններին հարող մի շարք իրաւաբանների:*

*Եթէ աւելի կոնկրետ, ապա Հրայր Թովմասեանին ՍԴ-ում «պահելու» եւ սահմանադրական ճգնաժամի չգոյութեան մասին են հայտարարում (համատեղ, առանձինառանձին) ոչ միայն նախկին իշխանութիւնների մաս կազմած իրաւաբանական կրթութիւն ունեցող անձինք, այլեւ այնպիսիք, որոնք փորձում են ներկայանալ իբրեւ թէ չէզոք դիրքերից:*

*Բայց ամբողջ հարցն այն է, որ այդ թիմում իրականում չկան եւ չեն էլ կարող լինել չէզոքներ:*

*Նախկին իշխանութիւնները, իրենց իշխանութիւնը պահելու ժանրի դասական կանոններով, ինչպէս այլ ոլորտներում, այնպէս էլ «իրաւունքի ոլորտը» քիչ թէ շատ իրենով անելու համար յստակ քաղաքականութիւն է վարել. հաշուի առնելով, որ ԱԱԾ-ն ու գրեթէ ամբողջ տեղեկատուական դաշտը իրենց ենթակայութեան տակ է եղել, ապա այս կամ այն ոլորտի մասնագէտներին յայտնի դառնալու, այս կամ այն կառոյցում աշխատելու, այս կամ այն ԲՈՒՀ-ում դասաւանդելու, այս կամ այն հարցում լծակ ունենալու միայն մէկ ուղի էին թողել՝ լծուել իշխանութիւնների վարած քաղաքականու-*

Շար.ը էջ 19

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# «Կը Գործեմ Սահմանադրութեան Ծիրէն Ներս, Ո՛չ Անկէ Դուրս». Արմէն Սարգսեան



Նախագահ Արմէն Սարգսեան

«Աշխատում եմ Սահմանադրութեան սահմաններում, ո՛չ դրանից դուրս», - Սիւնիքի մարզի Քարահունջ համայնքին մէջ բնակիչներու հետ հանդիպման ժամանակ ըսած է Նախագահ Արմէն Սարգսեանը:

Ներկաներէն մէկը, մասնաւորապէս, հետաքրքրուած է Նախագահէն, թէ արդեօ՞ք Սահմանադրութեամբ Հանրապետութեան Նախագահին վերապահուած լիազօրութիւնները բաւարար են իրեն, Արմէն Սարգսեանը պատասխանած է. - «Անկախ նրանից, թէ տուեալ պաշտօնն ինչ նկարագրութիւն ունի, պաշտօնը զբաղեցնող անհատն է ձեւաւորում արդիւնքը: Անկախ նրանից՝ ինչքան իրաւասութիւն ունես, եթէ լաւ ես անում՝ լաւ է, եթէ վատ ես անում՝ վատ է: Ես փորձում եմ Հանրապետութեան Նախագահի գործունէութեան մէջ դնել այն իմաստը, որը կարծում եմ ճիշդ: Աշխատում եմ Սահմանադրութեան սահմաններում, ո՛չ դրանից դուրս»:

Նախագահը ընդգծած է՝ նոյն Սահմանադրութեան սահմաններուն մէջ աշխատելով՝ բաւականին բան կրնաս ընել:

«Կարող ես ունենալ աշխարհի ամենամեծ պատասխանատուութիւնը, բոլոր մեծ հնարաւորութիւնները, բայց ոչինչ չանել: Եւ հակառակը՝ ունենալ մէկը եւ այն օգտագործել: Պէտք չէ մտածել, թէ ինչ լծակ, գործիք ունես, կարեւորը՝ հասնես նպատակին: Իսկ իմ նպատակը շատ պարզ է՝ երկիրը բարգաւաճ լինի, երեխաներն ուրախ լինեն, ես էլ իմ փոքր ներդրումն ունենամ իմ հնարաւորութիւնների սահմանում», - Հայաստանի Նախագահի գրասենեակի փոխանցմամբ՝ ըսած է Արմէն Սարգսեանը:

Հայաստանի ապագայի մասին հարցին ի պատասխան՝ Նախագահը վստահեցուցած է. - «Մեր երկիրը փայլուն ապագայ ունի: Նայէք այս երեխաներին, եւ ամէն ինչ պարզ կը լինի: Մեր պարտականութիւնն է նրանց համար հնարաւորութիւններ ստեղծել»:

# Սահմանադրութեան Տօնին Առթիւ Զինուորական Բարձրագոյն Կոչումներ



Բարձրագոյն Կոչումներու արժանացած զինուորակաները

Ըստ Նախագահի Յուլիս 3-ի հրամանագրերի, Հայաստանի ազգային անվտանգութեան ծառայութեան տնօրէն, գնդապետ Արթուր Վանեցեանին, Ազգային անվտանգութեան ծառայութեան պետական պահպանութեան ծառայութեան պետ, գնդապետ Գրիգորի Հայրապետովին, Ոստիկանութեան պետ, ոստիկանութեան գնդապետ Վալերի Օսիպեանին, Զինուած ուժերու գլխաւոր շտապի պետի առաջին տեղակալ, զօրավար-մայոր Օնիկ Գասպարեանին, Զինուած ուժերու կապի զօրքերու պետկապի եւ կառավարման համակարգերու վարչութեան պետ, գնդապետ Թեմուր Շահնազարեանին, Յատուկ քննչական ծառայութեան պետ, արդարադատութեան առաջին դասի խորհրդական Սասուն Խաչատրեանին, Քննչական կոմիտէի նախագահ, արդարադատութեան առաջին դասի խորհրդական Հայկ Գրիգորեանին, գլխաւոր դատախազ, արդարադատութեան առաջին դասի խորհրդական Արթուր Դաւթեանին շնորհուած են բարձրագոյն զինուորական կոչումներ եւ դասային աստիճաններ:

Նախագահի նստավայրին մէջ տեղի ունեցած հանդիսաւոր արարողութեան ժամանակ Արմէն Սարգսեանը շնորհաւորած է ներկաները Սահմանադրութեան օրուան, ինչպէս նաեւ բարձրագոյն զինուորական կոչումներ եւ դասային աստիճաններ ստանալու կապակցութեամբ:

«Դուք արժանապատուօրէն եւ նուիրուածութեամբ էք իրականացնում հայրենիքի սահմանների պաշտպանութեան, երկրում սահմանադրական եւ հասարակական կարգի պահպանութեան, օրինապահութեան ամրապնդման ձեր առաքելութիւնը», - ըսած է Նախագահը՝ շարունակելով. - «Այն, ինչ դուք կատարում էք, պարզ պարտականութիւն չէ, այլ՝ դժուարին ու պատուաբեր աշխատանք եւ ծառայութիւն, որն ուղղակի եւ անուղղակի առնչւում է մեր երկրի ու ժողովրդի թէ՛ ներկային, թէ՛ ապագային:

Ձեր պարտականութիւնները պատշաճ կատարելով ՝դուք պաշտպանում էք թէ՛ երկրի անվտանգութիւնը, թէ՛ քաղաքացիների իրաւունքներն ու ազատութիւնը, եւ թէ՛, ի հարկէ, Սահմանադրութիւնը:

Համոզուած եմ, որ դուք այսուհետ աւելի մեծ պատասխանատուութեամբ եւ նուիրումով էք ձեռնամուխ լինելու ձեր աշխատանքին ու ծառայութեանը՝ նպատակակէտ ունենալով Հայաստանի Հանրապետութեան, մեր քաղաքացիների եւ մեր ողջ ժողովրդի շահերը»:

# Մարդատար Փոխադրամիջոցները Պէտք Է Տիզըլ Օգտագործեն, Որպէսզի Նման Բռնկում Չըլլայ. Ֆելիքս Ցոլակեան



Արտակարգ իրավիճակներու նախարար Ֆելիքս Ցոլակեան

Փրկարարները ժամանակին հասած են դէպքի վայր, ոչ մէկ վայրկեան ուշացում չէ եղած: Այս մասին լրագրողներու հետ ճեպազրոյցի ժամանակ ըսած է Արտակարգ իրավիճակներու նախարար Ֆելիքս Ցոլակեանը՝ անդրադառնալով Արարատի մէջ՝ Ջրդի կամուրջի վրայ տեղի ունեցած ողբերգական վթարին, որ խլեց 6 անձերու կեանքը:

Անոր խօսքով՝ կանչ ստանալէն ետք ընդամէնը 4-5 վայրկեան տեւած է դէպքի վայր հասնիլը. «Ցաւօք սրտի, չեն կարողացել մարել, հրդեհը շատ արագ է արել իր գործը»:

Ինչ կը վերաբերի վթարի պատճառին, Ֆելիքս Ցոլակեանը ըսած է՝ չի կրնար ըսել, թէ պատճառը ինչ եղած է, միայն կան վարկածներ. «Այսպիսի վարկած կայ, որ «Թոյոթա» մակնիշի մեքենան դիմացէն խփած է «Գազելին», որմէ ետք ետեւէն եկող «06-ը» միւս կողմէն հարուածած է, ինչի հետեւանքով ալ կազի արտահոսք եղած է եւ բռնկում տեղի ունեցել: Շատ արագ է վառուել, նոյնիսկ փրկարարները չեն կարողացել մօտիկ կանգնել, 5-6 մեթրից են կատարել մարման աշխատանքները: 5 րոպէի ընթացքում կրակն իր գործն արել է, դժբախտութիւնն արդէն կատարուած է եղել»:

«Թեխնիքական խնդիր է եղել, արտահոսքը կազի ամբարանից է (պալոն) եղել: Այստեղ խնդիր կայ նաեւ, թէ ինչ վառելիք պէտք է օգտագործուի մարդատար փոխադրամիջոցների համար: Երեւի ճիշդ կը լինի ոչ թէ կազ, պենզին օգտագործել, այլ տիզըլ, որ այդպիսի բռնկում չլինի»,- ըսած է Ֆելիքս Ցոլակեանը:

Ան նաեւ չէ բացառած, որ օրէնսդրական նախաձեռնութեամբ հանդէս գան. «Պէտք է վարքագիծ մշակուի, որ հնարաւոր լինի խուսափել այդպիսի դժբախտ դէպքերից»:

Արտակարգ իրավիճակներու նախարար Ֆելիքս Ցոլակեանը նաեւ անդրադարձած է Վրաստանի մէջ տեղի ունեցած ողբերգական վթարին, նշելով, որ վթարի հետեւանքով ունինք երեք զոհ. վիրաւորներէն երկուքը ծանր վիճակի մէջ են՝ վարորդը եւ իր որդին: Ցոլակեանը նշած է, որ ինք Վրաստան եղած է եւ վիրաւորներուն այցելած են առողջապահութեան եւ Արտակարգ իրավիճակներու փոխնախարարները:

# «Կ’ուզէք Ճգնաժամ Անուանէք, Խոց Անուանէք, Բայց Սահմանադրական Դատարանէն Ներս Այսօր Խնդիր Կայ». Գագիկ Ջհանգիրեան

Սահմանադրական դատարանի ներկայիս անդամները չեն կրնար դատաւորի գործառոյթ իրականացնել, որովհետեւ Սահմանադրութեամբ եւ օրէնքներով սահմանուած կարգով դատաւոր չեն ընտրուած, ըսած է իրաւագէտը:

Ըստ նախկին զինուորական դատախազ, գլխաւոր դատախազի նախկին տեղակալ, իրաւագէտ Գագիկ Ջհանգիրեանի, Սահմանադրական դատարանէն ներս (ՍԴ) այսօր իսկապէս խնդիր կայ, ինչպէս յայտարարած է Սահմանադրական դատարանի դատաւոր Վահէ Գրիգորեանը:

«Խնդիրը կայ: Ցաւօք, մեր իրաւաբանների զգալի մասը նաեւ ասում է՝ ճգնաժամ չի: Ես չգիտեմ՝ ճգնաժամը պոզով-պոչով է լինում, ինչով է լինում, բայց Սահմանադրական դատարանն այսօր ունի 7 անդամ եւ երկու դատաւոր, որոշումներ կայացնելու լիազօրութիւններ ունեն միայն դատաւորները: Հիմա ոնց ուզում էք անուանէք՝ ուզում էք խնդիր անուանէք, ճգնաժամ անուանէք, խոց անուանէք, բայց փաստը մնում է փաստ, որ էդ վիճակը կայ», - «Ազատութեան» «Կիրակնօրեայ վերլուծական Հրայր Թամրազեանի հետ» հաղորդման ժամանակ ըսած է Ջհանգիրեանը:

Հարցին, թէ Դատաւորներու ժողովը իրաւունք ունի՞ պահանջելու ունենալ երեք դատաւոր, Ջհանգիրեանը պատասխանած է. - «Պահանջելու կարիք չկայ, որեւէ մէկից չպէտք է պահանջեն, նրանց էդ իրաւունքը տալիս է Սահմանադրութիւնը: Ես կարծում եմ, որ նրանց հաւաքուելիք ժողովում էդ հարցը կը քննարկուի եւ թեկնածուներ կ՛առաջադրեն: Որեւէ մէկից չպէտք է պահանջել էդ իրաւունքը, էդ իրաւունքը նրանց տալիս է մեր Սահմանադրութիւնը, լաւ է, վատ է, քոռ է, քաչալ է, տալիս է, պէտք է դրանով էլ ղեկավարուել»:

## ԼՈՒՐԵՐ

# Աւարտեցաւ Վարչապետ Փաշինեանի Սինկափուր եւ Վիեթնամ Այցելութիւնը




Սինկափուրի վարչապետ Լի Սիէն Լու կ՚ո՛ջունէ վարչապետ Նիկոլ Փաշինեանին

Յուլիս 9-ին աւարտեցաւ Հայաստանի Վարչապետ Նիկոլ Փաշինեանի պաշտօնական այցը Վիեկթնամ եւ Սինկափուր:

Սինկափուրի վարչապետի հետ հանդիպումէն ետք Փաշինեան յայտարարած էր.

«Մեր պատուիրակութիւնը Սինկափուր ժամանել է նոր էջ բացելու մեր յարաբերութիւններում: Սինկափուրն աշխարհի տնտեսապէս ամենազարգացած երկրներից է, եւ մենք ցանկանում ենք զարկ տալ մեր երկրների միջեւ փոխադարձ առեւտրի ու ներդրումների աճին: Կարծում եմ դրա համար այսօր առկայ են անհրաժեշտ նախադրեալներ»:

Փաշինեանի խօսքով՝ Հայաստանն ալ Սինկափուրի պէս բարդ կամ անբարենպաստ աշխարհաքաղաքական միջավայրի մէջ է, չունի բնական հարուստ միջոցներ, զարգացման ռազմավարութիւնը կը կառուցէ մարդկային դրամագլուխի արդիւնաւէտ օգտագործման վրայ:

Սինկափուրի վարչապետ Լի Սիէն Լուն իր հերթին շեշտած է, որ Փաշինեանի հետ բանակցած են տնտեսական կապերը խորացնելու շուրջ, Սինկափուրի առաջնորդը երկար խօսած է իր երկրի մէջ տարբեր ոլորտներու մէջ հայերու ներդրած աւանդի մասին:

Նշենք, որ Սինկափուրի կառավարական «Իսթանա» նստավայրին մէջ Փաշինեանը դիմաւորած են հանդիսաւոր արարողութեամբ:

Լի Սիէն Լուի եւ Նիկոլ Փաշինեանի բանակցութիւններու արդիւնքներով Երեւանը եւ Սինկափուրը ստորագրած են զբօսաշրջութեան, կրթութեան, բնապահպանութեան ոլորտին մէջ համագործակցութեան յուշագրեր եւ կրկնակի հարկումը բացառող համաձայնագիր:

Փաշինեանը տնտեսական ոլորտի քանի մը հանդիպումներ ունեցած է, Հայաստանի եւ Սինկափուրի միջեւ առեւտրաշրջանառութիւնը շատ փոքր է. անցած տարի ընդամէնը 2,2 միլիոն տոլարի ապրանք, որմէ 1,5 միլիոն տոլարը Հայաստանի ներմուծումն է, չնչին մէկ մասն ալ արտահանումը:

Նախքան Սինկափուր ժամանումը, Հայկական պատուիրակութիւնը այցելած էր Վիեթնամ, ուր ունեցած էր հանդիպումներ երկրի վարչապետին ու Ազգային Ժողովի նախագահին հետ:

Հայաստանցի պաշտօնակցին Վիեթնամի վարչապետ Նկույէն Սուան Ֆուքը դիմաւորած է իր նստավայրին մէջ՝ հանդիսաւոր արարողութեամբ, առանձնազրոյցէն ետք երկու վարչապետերն ընդլայնուած կազմով բանակցութիւններ վարած են, ապա Նիկոլ Փաշինեանը եւ Նկույէն Սուան Ֆուքը լրատուամիջոցներու համար հանդէս եկած են յայտարարութեամբ:

Վիեթնամի վարչապետը ողջունած է Նիկոլ Փաշինեանի յետյեղափոխական գործունէութիւնը, ներքաղաքական կայունութեան հաստատումը:

Հայաստանի վարչապետը շեշտած է, որ մէկ տարուան ընթացքին վճռական քայլերու շնորհիւ իր խումբը կրցած է որակապէս փոխել երկրի տնտեսական եւ, մասնաւորապէս, ներդրումային միջավայրը:

Հայաստանի մէջ այսօր, ըստ Նիկոլ Փաշինեանի, արտասահմանեան ընկերութիւններու գործունէութեան համար խոչընդոտներ չկան: Ստեղծուած են նաեւ բոլոր անհրաժեշտ իրաւական մեխանիզմները՝ պետութեան կողմէ օտարերկրեայ ներդրողներու սեփականութիւնը պաշտպանելու համար:

Նիկոլ Փաշինեանը յայտնած է, որ Հայաստան-Վիեթնամ միջկառավարական յանձնաժողովի յաջորդ նիստը տեղի պիտի ունենայ Հոկտեմբերին՝ Երեւանի մէջ, անոր զուգահեռ տեղի պիտի ունենայ հայ-վիեթնամական գործարար համաժողով:

Բանակցութիւններու արդիւնքներով Երեւանն ու Հանոյը ստորագրած են կրթութեան եւ զբօսաշրջութեան ոլորտին մէջ համագործակցութեան համաձայնագիր, պայմանաւորուածութիւն ձեռք բերուած է մեղմացնել հարկային քաղաքականութիւնը:

# Հայաստանի եւ Կիպրոսի Խորհրդարաններու Նախագահները Դատապարտած են Թուրքիոյ Գործողութիւնները

Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արարատ Միրզոյեանը եւ Կիպրոսի Ներկայացուցիչներու պալատի նախագահ Տիմիթրիս Սիլուրիսը, կայացած հանդիպման ընթացքին քննարկած են Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը եւ Կիպրոսի բացառիկ տնտեսական գօտիին վրայ Թուրքիոյ գործողութիւնները:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին՝ Արարատ Միրզոյեանը նշած է, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը չի կրնար լուծուիլ առանց հակամարտութեան հիմնական կողմ հանդիսացող Լեռնային Ղարաբաղի որոշիչ խօսքի: Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգաւորումը՝ միջազգային հանրութեան կողմէ մանտաթ ունեցող կառոյցի՝ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահողներու հովանիի ներքոյ, եղած է ու կը մնայ միակ ձեւաչափը:

Կիպրոսի Ներկայացուցիչներու պալատը դեռ 1975 թուականին Եւրոպայի մէջ առաջինը, իսկ աշխարհի մէջ երկրորդը ճանչցած է Հայոց ցեղասպանութիւնը, աւելին, 2015 թուականին միաձայն ընդունած է Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող բանաձեւ, իսկ Ապրիլ 24-ը պետականօրէն սահմանած յիշատակի օր: Նոյն համոզմունքով է, որ 2015 թուականի Մարտ 24-ին Ազգային Ժողովը միաձայն ընդունած է Օսմանեան կայսրութեան կողմէ Պոնտոսի յոյներու եւ ասորիներու նկատմամբ իրականացուած ցեղասպանութիւնը դատապարտող յայտարարութիւն:



Արարատ Միրզոյեան եւ Տիմիթրիս Սիլուրիս

Ինչ կը վերաբերի Կիպրոսի հիմնախնդրին, ԱԺ նախագահը վերահաստատած է հայկական կողմի աջակցութիւնը Կիպրոսին: Կողմերը դատապարտած են Թուրքիոյ ոտնձգութիւնները Կիպրոսի բացառիկ տնտեսական գօտիին վրայ, որոնք կը խաթարեն տարածաշրջանային անվտանգութեան եւ կայունութեան ապահովումը:

ԱԺ լրատուութեան եւ հանրութեան հետ կապերու վարչութիւնը կը տեղեկացնէ, որ Միրզոյեանը Ազգային Ժողովի անունէն շնորհակալութիւն յայտնած է Կիպրոսի Ներկայացուցիչներու պալատի անդամներուն այս տարուան Յունիս 28-ին ՀՀ-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագրի վաւերացման համար:

# Ֆրանսայի Նախագահը Ըսած Է, Որ Ատրպէյճանին Պիտի Չվաճառէ Այնպիսի Զէնք, Որ Կրնայ Օգտագործուիլ Արցախի մէջ

«Ֆրանսա-Ատրպէյճան յարաբերութիւնները, յատկապէս ռազմարդիւնաբերական ոլորտում, մշտապէս գտնւում են մեր ուշադրութեան կեդրոնում», - հրաւիրուած ասուլիսի ժամանակ յայտարարած է Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակ Աննա Նաղդալեանը՝ լրագրողներու խնդրանքով մեկնաբանելով մամուլի մէջ շրջանառուող տեղեկութիւնը, թէ Ատրպէյճանը կը պատրաստուի զէնք գնել Ֆրանսայէն:

«Եթէ չեմ սխալւում դեռեւս Փետրուարի 5-ին Ֆրանսայի հայկական կազմակերպութեան համակարգող կոմիտէի կողմից կազմակերպուած միջոցառման ժամանակ Ֆրանսայի նախագահը նշած է, որ Ֆրանսան, ի տարբերութիւն այլ երկրների, միակ երկիրն է, որը խստօրէն պահպանում է էմպարկոյի իր պարտականութիւնները եւ որ Ֆրանսան Ատրպէյճանին չի վաճառի այնպիսի զէնք, որը կարող է օգտագործուել Արցախում», - ըսած է Նաղդալեանը:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակը կարեւորած է, որ Ֆրանսան իրապէս հետամուտ ըլլայ այս հարցի վերաբերեալ եւ ձեռնպահ մնայ Ատրպէյճանի հետ որեւէ համագործակցութենէ, որ կրնայ խաթարել տարածաշրջանին մէջ ռազմական հաւասարակշռութիւնը, ինչպէս նաեւ տարածաշրջանի կայունութիւնը եւ խաղաղութիւնը:

# Հայաստանը Ատրպէյճանի Գործողութիւններու Դէմ Պաշտօնական Բողոք Ներկայացուցած է ԵՈՒՆԵՍՔՕ-ին

Հայաստանը Ատրպէյճանի գործողութիւններու դէմ պաշտօնական բողոք ներկայացուցած է ԵՈՒՆԵՍՔՕ: Այս մասին Յուլիս 3-ին մամլոյ ասուլիսի ժամանակ յայտնած է Արտաքին գործոց նախարարութեան մամուլի քարտուղար Աննա Նաղդալեանը:

Մամուլի քարտուղարը յայտնած է, որ հայկական կողմը ԵՈՒՆԵՍՔՕ-էն հրաւէր ստացած էր որպէս դիտորդ մասնակցելու Պաքուի մէջ տեղի ունեցող ԵՈՒՆԵՍՔՕ-ի Համաշխարհային ժառանգութեան կոմիտէի 43-րդ նստաշրջանին: Հայկական կողմը դիմած էր ԵՈՒՆԵՍՔՕ-ին անվտանգութեան երաշխիքներու համար՝ հաշուի առնելով Ատրպէյճանի իշխանութիւններու կողմէ իրականացուող հակահայկական քարոզչութիւնը:

Միջոցառման նախաշեմին ԵՈՒՆԵՍՔՕ-ի գլխաւոր քարտուղարէն նամակ ստացուած է, որ կը յայտնէ, որ ատրպէյճանական կողմը հրաժարած է անվտանգութեան լրացուցիչ երաշխիքներ տրամադրելէ: Այդպիսով Ատրպէյճանը խոչընդոտած է հայկական պատուիրակութեան մասնակցութեան:

# Ղարաբաղեան Հակամարտութեան

Շարունակուած էջ 1-էն

«Սակայն ինչպէս համանախագահները, այնպէս ալ մենք մտահոգուած ենք շփման գիծին վերջին զոհերու կապակցութեամբ: Կարեւոր են զսպուածութիւնը, խաղաղութեանն ու արդիւնաւէտ բանակցութիւններուն նպաստող մթնոլորտի վերականգնումը: ԵՄ-ն կ՚աջակցի խաղաղութեան պահպանմանն ուղղուած գործունէութեան եւ պատրաստ է նպաստելու բնակչութեան խաղաղութեան նախապատրաստելուն ուղղուած միջոցներուն»,- աւելցուցած է ան:

## Վախճանած է Միացեալ Թագաւորութեան Մէջ Հայաստանի Դեսպան Արման Կիրակոսեան

Վախճանած է Մեծ Բրիտանիայի եւ Հիւսիսային Իռլանտայի Միացեալ Թագաւորութեան մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Արման Կիրակոսեան, կը հաղորդէ Արտաքին Գործոց Նախարարութիւնը:


Դեսպան Արման Կիրակոսեան

«Խորը կսկիծով տեղեկացանք, որ 63 տարեկան հասակում կեանքից վաղաժամ հեռացել է Մեծ Բրիտանիայի եւ Հիւսիսային Իռլանտիայի Միացեալ Թագաւորութիւնում Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Արման Կիրակոսեանը, ով առաջին իսկ օրուանից կանգնած է եղել նորանկախ Հայաստանի դիւանագիտական ծառայութեան եւ արտաքին քաղաքականութեան կայացման ակունքներում եւ իր անգնահատելի ներդրումն է ունեցել այդ գործում», - իր ֆեյսպուքեան էջի միջոցաւ յայտարարութիւն տարածեց Նախարարութիւնը, իր խորին ցաւակցութիւնը յայտնելով Կիրակոսեաններու ընտանիքին եւ հարազատներուն:

Դեսպանի մահուան կապակցութեամբ ցաւակցական ուղերձ յղած է Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեան:

«Անասելի ցաւ եմ ապրում. ես կորցրեցի վաղեմի ընկերոջս՝ Մեծ Բրիտանիայի եւ Հիւսիսային Իռլանտիայի Միացեալ Թագաւորութիւնում Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան, պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆէսոր Արման Ջոնի Կիրակոսեանին: Մեր ընտանիքը կորցրեց իսկական բարեկամի ու հրաշալի մարդու, ում հետ հանդիպումը միշտ սպասուած, հաճելի եւ օգտակար էր: Մեր ժողովուրդը եւ պետութիւնը կորցրեցին արժանաւոր զաւակին, պրպտող պատմաբան-գիտնականին, պրոֆեսիոնալ դիւանագէտին, հայրենիքին նուիրուած արժանապատիւ քաղաքացուն», - ըսուած էր Հայաստանի Նախագահի ուղերձին մէջ:

Արման Կիրակոսեանը Արտաքին Գործոց Նախարարութեան համակարգէն ներս կը գործէր 1992 թուականէն ի վեր, տարբեր տարիներու զբաղեցնելով արտաքին գործոց նախարարի տեղակալի, Միացեալ Նահանգներու, Յունաստանի, Աւստրիոյ եւ Հունգարիոյ եւ Միացեալ Թագաւորութեան մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպանի, ԵԱՀԿ-ի Հայաստանի առաքելութեան ղեկավարի, Վիեննայի ՄԱԿ-ի գրասենեակի եւ այլ միջազգային կազմակերպութիւններու մէջ Հայաստանի մշտական ներկայացուցչի պաշտօնները:

Յայտնի պատմաբան, խորհրդային Հայաստանի 1975-85 թուականներուն արտաքին գործոց նախարար Ջոն Կիրակոսեանի որդին է:

## Պոլսոյ Հայոց Պատրիարքի Տեղապահ Ընտրուած է Սահակ Եպիսկոպոս Մաշալեանը


Պոլսոյ պատրիարքական տեղապահ ընտրուած Սահակ եպիսկոպոս Մաշալեան

Պոլսոյ Հայոց պատրիարքարանէն ներս կայացած Եկեղեցական համագումարի ընթացքին 13 կողմ ձայնով պատրիարքական տեղապահ ընտրուած է Կրօնական ժողովի նախագահ Սահակ եպիսկոպոս Մաշալեանը: Այսպիսով, պաշտօնապէս մեկնարկած է Պոլսոյ աթոռի 85-րդ գահակալի ընտրութեան գործընթացը:

Շուրջ 1,5 ժամ տեւած ժողովէն ետք ընտրութեան արդիւնքներու մասին յայտարարած է նիստի ատենապետ Թաթուլ վարդապետ Անուշեանը:

Նորընտիր տեղապահ Սահակ եպիսկոպոս Մաշալեանը «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ նշած է՝ իր հիմնական առաքելութիւնն է ապահովել նոր պատրիարքի անկողմնակալ ընտրութիւններ:

«Եկեղեցական համագումարժողովը քուէներու մեծամասնութեամբ ինծի տեղապահ ընտրեց: Տեղապահը պիտի կարգադրէ ընտրութեան գործընթացը, գլուխը պիտի ըլլայ Եկեղեցական ժողովներուն, եւ ինքը պիտի ապահովէ, որ ընտրութիւնները անկողմնակալ կերպով կատարուին: Այս վստահութիւնը, որ եկեղեցական եղբայրները ինծի շնորհած են, շատ շնորհակալ եմ իրենց: Եկեղեցական դասին եւ ժողովուրդին վստահութեանն արժանի ըլլալ պիտի ջանամ», - ըսած է Մաշալեանը:

Տեղապահի պաշտօնի միւս թեկնածուի՝ Արամ արքեպիսկոպոս Աթէշեանի օգտին քուէարկած էին համագումարի մասնակից 11 հոգեւորականներ: Տեղապահի ընտրութեամբ աւարտած է նաեւ Աթէշեանի երկարամեայ փոխանորդութիւնը:

Պատրիարքարանը ընտրութեան արդիւնքներու մասին յայտնած է Թրքական պատկան մարմիններուն: Այնուհետեւ պիտի կազմաւորուի նոր պատրիարքի ընտրութեան նախաձեռնող յանձնաժողովը: Յառաջիկայ ամիսներուն պետութենէն պատրիարքական ընտրութիւն կայացնելու արտօնութիւն ստանալէ ետք յայտնի պիտի դառնան Պոլսոյ Հայոց 85-րդ պատրիարքի աթոռին յաւակնող թեկնածուներու անունները, որուն պիտի հետեւի քուէարկութեան իրաւունք ունեցող պատուիրակներու ցուցակներու յստակեցման գործընթացը: Յայտնի չէ, սակայն, արդեօ՞ք մինչեւ տարուայ վերջ պիտի ընտրուի նոր պատրիարք, թէ՞ ոչ:

## Շուէտի ԱԳՆ-ը Կը Հերքէ Թրքական ԶԼՄ-ներու Տարածած Ապատեղեկատուութիւնը

Օրերս Թրքական ու ատրպէյճանական լրատուամիջոցները տեղեկատուութիւն տարածած էին՝ պնդելով, որ Շուէտի արտաքին գործոց նախարար Մարկօ Ուոլսթրիոմը Յուլիս 5-ին տեղի ունեցած մամլոյ ասուլիսի մը ժամանակ յայտարարած է, որ «մեր կառավարութեան համար դժուար է 1915 թուականին հայերու եւ ասորիներու ցեղասպանութեան մասին պնդումները ընդունիլ» եւ աւելացուցած, որ որեւէ երկրի ցեղասպան յայտարարելու համար հարկաւոր են հիմնաւոր ապացոյցներ:


Շուէտի արտաքին գործոց նախարար Մարկօ Ուոլսթրիոմ

Շուէտի նախարարի վերոնշեալ յայտարարութեան հաւաստիութիւնը պարզելու համար Ermenihaber.am-ը հարցում ուղարկած է Շուէտի արտաքին գործոց նախարարութիւն, որուն ի պատասխան Շուէտի արտաքին գործոց նախարարութեան խօսնակ Էլին Թիպելլը յայտնած է, որ նախարարը նման յայտարարութեամբ հանդէս չէ եկած եւ վերոնշեալ հրապարակումները չեն արտացոլեր իրականութիւնը: Թիպելլը նաեւ ներկայացուցած է մամուլի ասուլիսի ընթացքին նախարարի խօսքը, որուն մէջ ցեղասպանութեան ճանաչման հարցին անդրադառնալու ժամանակ վերջինս մասնաւորապէս ըսած է.

«Այն հարցը, թէ ինչպէս պէտք է որեւէ կառավարութիւն որակէ պատմական զանգուածային բռնութիւնները, կը պարունակէ միջազգային իրաւունքի, ինչպէս նաեւ սահմանադրական, քրէական եւ քաղաքական նպատակներ: Նախապէս բազմիցս ըսած եմ, որ սա բարդ հարց է: Նկատի առնելով խնդրի բարդ էութիւնը, կառավարութիւնը քանի մը տարի առաջ դիմած էր փորձագէտի՝ հարցը ուսումնասիրելու խնդրանքով: Փորձագէտն ալ իր զեկոյցին մէջ նշած է, որ քանի որ հարցը շատ բարդ է, ուստի կառավարութիւններու մեծ մասը կը նախընտրէ պատմական զանգուածային այդ բռնութիւնները ցեղասպանութիւն չանուանել»:

Նշենք, որ Շուէտի խորհրդարանը Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւ ընդունած էր դեռ 2010 թուականին: Ի տարբերութիւն օրէնսդիր մարմնի՝ Շուէտի Արտաքին գործոց նախարարը թէ՛ 2018-ին, թէ՛ 2019-ին քանի մը անգամ յայտարարած է, որ երկրի կառավարութիւնը չի կրնար կատարուածը ցեղասպանութիւն որակել:

## Ալիեւը Մեծ Յոյսեր կը Կապէ Թրամփի Հետ Ղարաբաղեան Խնդրի Կարգաւորման Հարցով

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը Միացեալ Նահանգներու անկախութեան օրուան կապակցութեամբ այդ երկրի նախագահ Տանըլտ Թրամփին յղած նամակին մէջ յայտնած է, որ Ատրպէյճանը մեծ յոյսեր կը կապէ ԱՄՆ-ի՝ որպէս ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահ երկրի հետ ղարաբաղեան կարգաւորման հարցի վերաբերեալ:

«Մենք մեծ յոյսեր կը կապենք ԱՄՆ-ի՝ որպէս ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահ երկիր եւ անձամբ Ձեզի հետ, պարոն նախագահ, ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ եւ արդար կարգաւորման հարցի առումով՝ միջազգային իրաւունքի նորմերու համապատասխան եւ մեր երկրի տարածքային ամբողջականութեան շրջանակէն ներս»,- ըսուած է շնորհաւորական ուղերձին մէջ:

Ալիեւը նշած է, որ շարք մը ոլորտներու մէջ ԱՄՆ-ի ու Ատրպէյճանի միջեւ համագործակցութիւնը կը կրէ «ռազմավարական գործընկերութեան բնոյթ», այդ ծիրէն ներս ան կը յիշատակէ «Հարաւային կազային միջանցք»ի նախագիծն ու ահաբեկչութեան դէմ միջազգային պայքարը:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# Ի՞նչ Տեսակի Լրագրող. Կամ Լրագրութեան... «Ռէզիւմէ»



ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

*Շատ կարճ գրութիւն մըն է ասիկա: Կարճ, որովհետեւ մեր օրերուն մարդիկ ստիպուած են շատ աշխատիլ եւ քիչ կարդալ: Շատ աշխատիլ, իրենց առօրեայ հացը վաստակելու եւ արժանապատիւ կեանք մը ապրելու համար:*

*Մարդիկ կարճ կը կարդան, որպէսզի գլխապտոյտ չունենան... եւ կարողանան ծանր օրուան աւարտին, եւ գործէն-տուն երթալու ճանապարհին տեղ մը նստիլ եւ սանկ լաւ շունչ մը քաշել ու գարեջուրի մը շուրջ խօսիլ օրուան անցուդարձերուն մասին:*

*Տարիներ առաջ, երբ տակաւին Պուրճ Համուտի բնակիչ էի, ես ալ սովորութիւն մ՛ունէի, կէսօրէ ետքերը պզտիկ դադար մը առնել եւ այցելել կարգ մը բարեկամներու, որոնք պատրաստ էին արեւմտահայ գրականութեան մասին, իմ ոչ այդքան հաճելի խօսքերը լսել:*

*Արա Արծրունի, Յակոբ Մանուկեան, Պէպօ Սիմոնեան (հիմա լոյսերու մէջ թող պառկին) եւ դեռ ուրիշներ կը դառնային իմ սիրելի խօսակիցներս, չնայած անոր որ շատ յաճախ անոնց ոչ բոլոր գաղափարները կը կիսէի, կամ կը համաձայնէի անոնց կարգ մը միտքերուն հետ:*

*Շատ մը առիթներով ալ ստիպուած կ՛ըլլայի արեւելեան Պէյրութը հատել ու հասնիլ մինչեւ Համրա, լաւ գարեջուր մը վայելելու ու դիմացս նստած Մեթր Գասպար Տէրտէրեանին հետ Հայաստանի անցուդարձերուն մասին խօսելու:*

*Այն ժամանակ, տարերքս բանաստեղծութիւնն էր:*

*Բանաստեղծութիւն ամէն առիթի, ամէն շունչի, ամէն շարժումի, ամէն բողոքի, ամէն ծանօթութեան եւ ամէն կարմրութեան հետ:*

*Պէյրութը, որ նոր դուրս եկած էր պատերազմէն եւ հագած էր հարսի սպիտակ հագուստները, շատ ատեն չէր ուզեր հասկնալ զիս:*

*Պարզ է, ես կը խօսէի հայերէն, իսկ Պէյրութի բանաստեղծութեան մայթերէն եւ անոր նեղ ու մութ թաղերէն վեր կը բարձրանար արաբական արդի բանաստեղծութեան ամէնէն տարերային շունչը:*

*Կը ծանօթանայի գրողներու, հաց կը կիսէի անոնց հետ ու շատ անգամներ բոլորով մէկ կ՛երթայինք «համրացիներ»ուն համար շատ յայտնի «Պարոն Ցարութ»ին գարեջրատունը, մինչեւ գիշերուան ուշ ժամերը խօսելու եւ լսելու, պատմելու եւ ականջ տալու Պէյրութ քաղաքի մեծ ու փոքր արկածներուն մասին:*

*Տարերքը կը մնար նոյնը, իսկ բանաստեղծութիւն երկնելու անկասելի եռանդը կը վերածուէր կիրքի եւ մաս առ մաս կը բաժնուէր ճակատագրի ընկերներուս:*

*Ջեմ ալ յիշեր, որ քանի հոգի էին անոնք, որոնց հետ այդ օրերուն գրականութիւն ընելու, գրականութիւն ստեղծելու եւ գրականութիւն բերելու մեծխօսիկութիւնը կը կիսէի:*

*Այդ օրերուն այդպէս էր, նստած տեղս աշխարհի սիրտն էր, ու ես նստած տեղէս կը հաւատայի, որ եկած եմ աշխարհը փոխելու ...*

*Աւելի ուշ, երբ կը հեռանայի Պէյրութէն անգամ մըն ալ «պարոն բանաստեղծութեան» երեսը չէի տեսնէր, իսկ Երեւանի իմ գրողմրող ընկերներս կը կորսուէին մութի շղարշին մէջ, զիս դարձեալ մինակ ձգելով արեւմտահա-*

Շար.ը էջ 19

# Հոնկ Քոնկը Տագնապի Մէ՞ջ




*Դարձեալ տագնապալի վիճակ Չինաստանի Ժողովրդային Հանրապետութեան մայր ցամաքամասի եւ Հարաւի շրջանի ինքնավար Հոնկ Քոնկի մէջ:*

*1060 քառ. քիլոմեթր տարածութեամբ եւ մօտ 7.5 միլիոն բնակչութեամբ այս ինքնավար վարչական շրջանը նախապէս կը կոչուէր Սիանգանի, 1840-1842 անգլօ-չինական պատերազմի հետեւանքով Հոնկ Քոնկն անցաւ բրիտանական տիրապետութեան ներքեւ: Իսկ 1898ին Մեծն Բրիտանիա 99 տարուան համար վարձու առաւ այդ տարածաշրջանը, իր մերձակայ քանի մը կղզիներով, զայն վերածելով հեռաւոր արեւելքի իր խոշորագոյն առեւտրական կեդրոններէն մին:*

*Հոնկ Քոնկը արագօրէն վերածուեցաւ ծայրագոյն արեւելքի ամենաշքեղ եւ հարուստ քաղաքներէն մին: Քանի որ զարկ տրուեցաւ ժամանակակից առեւտրական մեծ ձեռնարկութիւններուն, որոնց շնորհիւ զարգացաւ նաեւ տասնեակ տեսակի արդիւնաբերական արտադրութիւններուն դէպի աշխարհի չորս ծագերը վաճառելը:*

*Յուլիս 1, 1997ին Մեծն Բրիտանիոյ վարձակալութեան շրջանն աւարտած ըլլալով, Հոնկ Քոնկը դադրեցաւ բրիտանական հովանաւորութիւնը վայելելէ եւ անցաւ Չինաստանի Ժողովրդային Հանրապետութեան գերակայութեան ներքեւ: Ստորագրուած երկկողմանի նոր միացեալ պայմանագրութեան համաձայն՝ Հոնկ Քոնկ կը ստանայ ինքնավար վարչական համակարգ «Մէկ Երկիր, երկու վարչակարգեր» դրութեան ներքեւ...:*

*Այս գերագոյն ինքնավարութեան երքեւ, Հոնկ Քոնկ կը մնայ աշխարհի ամենաբանուկ նաւահանգիստը եւ տնտեսութիւն ունեցող շրջաններէն մին: Այսուհանդերձ, Չինաստանի Ժողովրդային Հանրապետութիւնն սկսաւ իր գերակայութիւնն աւելի զգալի դարձնել Հոնկ Քոնկի վրայ, միջամտելով զանազան ասպարէզներէ ներս... եւ անհանգստացնելով տեղական իշխանութիւնները յատկապէս ուսանողութիւնը:*

*Տեղացիներուն «խորթ» երեւցող միջամտութիւններէն մին կը վերաբերէր վերջերս հրապարակուած դատա-իրաւական համակարգէն ներս առաջարկուած բարեփոխութիւնները: Արդարեւ որոշ դատավարութիւններ եւ արգելափակեալներ պիտի կարենային փոխադրուիլ չինական մայր ցամաքամասին վրայ:: Այս որոշումի կիրարկութեան դէմ է որ հարիւր հազարաւորներ բողոքի ցոյցեր կատարեցին եւ եղածը դեմոկրատական եւ ժողովրդավար ազատութիւններու դէմ ոտնահարում համարեցին: Երեւոյթ մը որ մեծապէս կրնար ազդել նաեւ Հոնկ Քոնկի տնտեսութեան բարգաւաճումին եւ ինքնավար համակարգի դիմագիծի վրայ:*

*Բողոքի շարունակական եւ զանգուածային ցոյցերու դիմաց Հոնկ Քոնկի եւ Չինաստանի իշխանութիւնները, որոշեցին ժամանակաւորապէս առկախել սոյն որոշումի գործադրութիւնը, առիթ ընծայելու համար վերատեսութեան ենթարկելու նոր օրինագիծի տրամադրութիւններն ու իրաւասութիւնները:*

*Ներկայ դրութեամբ Չինաստան կը դիմակալէ որոշ դժուարութիւններ թէ ներքին եւ թէ արտաքին հարթակներու վրայ, մասնաւորաբար ԱՄՆ-ի եւ Հոնկ Քոնկի հետ:*

*Նշենք նաեւ որ Հոնկ Քոնկի ազգայնականներն ու իրենց համակիր ուսանողական շրջանակները շատ խանդավառ չեն ինքնավար շրջանի մայր ցամաքամասի կցումէն մէկ երկիր երկու վարչակարգերու գօվավիճակէն: Այսուհանդերձ լաւագոյն լուծումը կողմերու միջեւ համախոհական գործելաոճի որդեգրումն է:*

**Գ . Մ.**

MARONIAN
INSURANCE SERVICES
Since 1975, we have proudly served your health and life insurance needs.
We will continue to stand by your side and secure your **family** and **business** with our full range of insurance policies.
HEALTH
LIFE
COMMERCIAL
CALL US FOR A
PERSONALIZED QUOTE
(818) 500 9585
805 E. Broadway, Glendale, CA 91205
sbmaronian@gmail.com
CA INSURANCE LICENSE # 0C99815
MaronianInsurance.com

# Ի Վերջոյ Պինալի Ելտըրըմ Յիշեց իր Քրտական Ծագումը

ՃՐՏԳ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՂՊԱՇԵԱՆ

Ի վերջոյ Պինալի Ելտըրըմ յիշեց իր Քրտական ծագումը, կամ աւելի ճիշդ իրմէ պահանջուեցաւ այդպէս ընել, որովհետեւ ան Պոլսոյ քաղաքապետի կրկնակի ընտրութիւններուն յաղթանակ արձանագրելու համար, քաղաքի քիւրտ քուէարկուներու աջակցութեան խիստ կարիքը ունէր. ան փոքր տարբերութեամբ վնաս կրած էր ընտրութիւններու առաջին փուլին իր մրցակից Էքրէմ Իմամօղլուի դէմ. Ելտըրըմ երկրի նախագահ Ռեճէփ Թայիփ Էրտողանի խորհուրդով Թուրքիոյ քիւրտական շրջանը գնաց եւ յատկապէս քիւրտ մտաւորականներու եւ ռազմիկներու ամրոցը՝ Տիգրանակերտ քաղաքը, եւ այնտեղէն յայտարարեց իր քիւրտական ծագումը, քիւրտերը համոզելու համար թէ ինք իրենց արիւնակից ըլլալով Իմամօղլուէն աւելի արժանի է Պոլսոյ քիւրտերու քուէները ստանալու:

Պետութեան ենթակայ լրատուական միջոցները լուրեր տարածեցին իբր թէ Էքրէմ Իմամօղլուն յունական ծագում ունի, մինչդեռ անոր մեծ հայրը (իմամ) եղած է, մահմետական կրօնաւոր եւ քարոզիչ, եւ հայրը թուրք քաղաքական գործիչ . ան ծնած է Տրապիզոն քաղաքը 1970 թ.. շրջանաւարտ է Պոլսոյ համալսարանէն (Business Management). առաջին անգամ քաղաքականութեամբ զբաղած է 2008 թ.-ին երբ անդամակցած է Հանրապետական Ժողովրդային Կուսակցութեան, եւ տարի մը ետք յաջողած է Պոլսոյ եւրոպական մասի Պէլեկտուզու փոքր քաղաքի քաղաքապետը ըլլալ, պարտութեան մատնելով Արդարութիւն եւ Բարգաւաճում Կուսակցութեան թեկնածուին: Քաջալերուած Իմամօղլուի յաջող ընթացքէն իր հինգ տարուայ պաշտօնավարած շրջանին, ՀԺ Կուսակցութիւնը որոշեց Իմամօղլուն իր թեկնածուն ըլլայ Պոլսոյ քաղաքապետի ընտրութիւններուն, ուր 16 միլիոն բնակչութիւն կայ որոնցմէ 10 միլիոնը քուէարկելու իրաւունք ունին:

Արդարութիւն եւ Բարգաւաճում Կուսակցութեան թեկնածուն Պինալի Ելտըրըմ ծնած է Արզինջան 1955 թ., ճարտարագէտ եւ ծովային նաւարկութեան մասնագէտ է. ան քիւրտական արմատ ունեցող թուրք քաղաքական գործիչ է եւ ԱԲ կուսակցութեան հիմնադիրներէն մին, այն կուսակցութիւնը որ կործանեց քիւրտական քաղաքները, այրեց անոնց գիւղերը, տարագրեց բնակչութիւնը եւ տակաւին կը շարունակէ: Ելտըրըմ ծառայած է իբր փոխադրութեան նախարար ( 2002-2013) եւ (2015-2016) շրջաններուն, ապա ընտրուած է ԱԲ Կուսակցութեան ղեկավար, որմէ ետք երկրի վարչապետ. եղած է երկրի վերջին վարչապետը (2016-2018) շրջանին, նախքան երկրի համակարգը փոխուիլը դէպի նախագահական եւ ի վերջոյ ստանձնած է ներկայացուցիչներու տան ղեկավարութիւնը. այդ բոլորը Էրտողանի եւ իր կուսակցութեան աջակցութեամբ, այդ պաշտօնէն հրաժարեցաւ երբ Էրտողան զինք ընտրեց իբր թեկնածու Պոլսոյ մէջ տեղի ունենալիք քաղաքապետի ընտրութիւններուն:

Պարզ է, որ Ելտըրըմ մեծ կարողութիւններու տէր է, փորձառու քաղաքական գործիչ եւ իշխող կուսակցութեան, պետութեան եւ երկրի նախագահի աջակցութիւնը վայելող անձ մը, սակայն այդ բոլորին հանդերձ ան անել կացութեան մէջ գտնուեցաւ. իր կարողութիւնները ունեցող որեւէ քաղաքական գործիչ, անպայման մեծ յաղթանակ պիտի արձանագրէր որեւէ քաղաքապետական ընտրութիւններու, բայց այդպէս չեղաւ որովհետեւ ան հաւատարիմ չէ իր ազգին եւ ժողովուրդին. Ելտըրըմ անուանումով ստանձնած էր իր նախկին պաշտօնները եւ այս առաջին չփումն էր ընտրողներու հետ ուր ձախողեցաւ. իր ուսուցիչը՝ Էրտողանը՝ փորձեց անոր երկրորդ հնարաւորութիւն մը տալ, քաղաքապետի կրկնակի ընտրութիւններով, թէեւ այդ պատճառով Էրտողան կորսնցուց իր քաղաքական հեղինակութիւնը:

Կը մնայ կարեւոր հարց մը, ի՞նչու Ելտըրըմ Պոլսոյ մէջ չյայտարարեց իր քիւրտ ծագում ըլլալը եւ այդ մէկը Տիգրանակերտի մէջ ըրաւ:

Անտարակոյս Պոլսոյ մէկ ու կէս միլիոն քիւրտերու արմատները Թուրքիոյ արեւելան եւ հարաւ արեւելան շրջաններէն են, սակայն Պոլսոյ միջավայրը, ապրուստի պայմանները, ուսուցման հնարաւորութիւնները առիթ ստեղծած են որ անոնք ընդհանրապէս ուսեալ եւ տեղեակ ըլլան քաղաքական անցուդարձերէն. աւելին անոնք իրատես են եւ կարելի չէ անոնց ազգային թելերուն վրայ խաղալ: Տիգրանակերտի եւ քիւրտական միւս շրջաններու մէջ ալ տասնեակ հազարաւոր ուսեալ քիւրտեր կան ի միջի այլոց մեծ մտաւորականներ, սակայն այդ շրջաններու քիւրտերը աւելի սակաւ զարգացած են, որովհետեւ միջավայրը գիւղական բնոյթ ունի եւ ժողովուրդը աւելի պարզ է. ուստի Ելտըրըմ փորձեց ազգային գծով մօտենալ այնտեղի քիւրտերուն, բայց ի զուր, հոն գնաց առանց նկատի առնելու թէ հոն է քիւրտական ազգային շարժումի կեդրոնը, եւ այդ քայլով որ տեղի ունեցաւ Էրտողանի թելադրութեամբ, հաստատուեցաւ թէ հոն է քիւրտական ազգային եւ քաղաքական որոշումներու կենտրոնը եւ ոչ թէ Պոլիս եւ պէտք է նախ անոնց հետ համացայնիլ:

Եթէ Էրտողան կը ցանկար իր թեկնածուի յաղթանակը ապահովել Պոլսոյ քաղաքապետի ընտրութիւններուն, ան պէտք էր քիւրտերուն հետ լաւ յարաբերութիւններ ստեղծէր, անոնց իրաւունքները ապահովէր եւ անոնց հետ որպէս Թուրքիոյ քաղաքացիներ վարուէր, ոչ թէ իբր թշնամիներ. եթէ ան լուսաւորուած միտքով մօտենար անոնց իբր երկրի քիւրտ քաղաքացիներ եւ ոչ թէ լեռնային քիւրտեր ինչպէս որ անուանած է Աթաթուրքը, այդ պարագային քուէներու մեծամասնութիւնը պիտի ապահովէր. իսկ եթէ ան հեռանար իր ազգայնամոլ մտայնութենէն, իր օսմանական մոլեռանդութենէն եւ քիւրտերէն ընդունուած անձ մը թեկնածու ընտրուէր, այն ատեն պանծալի յաղթանակ մը պիտի ունենար:

Էրտողանի մտածելակերպը նոյնն է իր մեծ հայրերու նման, Սուլթան Ապտուլ Համիտ Բ.-ի եւ «Իթթիհատ վէ Թերաքի» կուսակցութեան երեք ղեկավարներու Թալէաթ, Էնվէր եւ Ճեմալի. ան կը ջանայ կործանել, քանդել, ջարդել եւ ջնջել բոլոր անոնք որոնք կանգնած են երկրի թրքականացման դէմ. անոնք մէկ ու կէս միլիոն հայեր ջարդեցին, հարիւր հազարներով յոյներ կոտորեցին եւ տեղահանեցին, ինչպէս նաեւ այլ քրիստոնեաներ, սակայն այդ ժամանակները անցած են եւ կը թուի թէ քիւրտերը Խրիմեան Հայրիկին խրատը մեզմէ լաւ ըմբռնած են, անոնք թուղթի տեղ երկաթեայ շերեփ ունին ձեռքերնին, եւ 1925 թ. շէյխ Սաիտ Պէյրանիի ապստամբութիւնը կը շարունակուի մինչեւ այսօր երիտասարդ ուժերով:

Անտարակոյս քիւրտերը պէտք է օգտուին Իմամօղլուի արձանագրած յաղթանակէն, որուն իրենք մաս կազմած են եւ ներկայիս Պոլսոյ բոլոր քաղաքացիները յոյսով են որ ան իր խոստումին տէրը պիտի ըլլայ եւ հաւասար վերաբերում ցուցաբերէ բոլորին հանդէպ, թէեւ ինք անդամ է Հանրապետական Ժողովրդային Կուսակցութեան որուն մեծ հայրը Աթաթուրքն է: Կը թուի թէ Իմամօղլուն աւելի պիտի յառաջանայ եւ ինչու չէ ապագային երկրի նախագահը ըլլայ:

Ի՞նչ կը վերաբերի մեզի իբր հայեր եւ ի մասնաւորի Թուրքիոյ հայ համայնքին համար, «Ընտրուած է չարեաց փոքրագոյնը» ինչպէս որ կեւըսէ Պոլսոյ «Ակօս» թերթի հայերէն բաժնի խմբագիր՝ Բագրատ Էստուկեան. Սակայն մենք երբեք պիտի չակնկալենք, որ Էրտողանի համակիր Շիրինօղլուի նման կամ քաջ ազգային Կարօ Փայլանի նման մէկը պիտի ընտրուի այդպիսի պաշտօնի մը. ինչ որ մենք կարելի է ընենք, այդ «Չարեաց փոքրագոյն»ին միջոցաւ մեր իրաւունքները պահպանենք եւ ըստ կարելիութեան օգտուինք Իմամօղլուի որդեգրած քաղաքականութենէն. մեր առաջին փորձը կը թուի թէ Պոլսոյ Պատրիարքական ընտրութիւնը պիտի ըլլայ»:



Dignity MEMORIAL

Monrovia-ի Dignity գերեզմանատան մէջ
պիտի տրամադրուի յատուկ Հայկական բաժին մը
որուն անունը պիտի ըլլայ Արարատ:

**Շատ լաւ պայմաններով եւ յարմար ամսական վճարումներով:**

Նախքան Ձեր ծրագիրներուն ու առաւելութիւններուն համար
Ձեզի կառաչարկուի՝

1. Ձեր պայմաններուն եւ ծախսերու յարմար ծառայութիւններ
2. Ունինք նաեւ թաղման ու յուղարկաւորութեան ծառայութիւններ յարմար գիներով

Մանրամասնութեան համար դիմէլ՝

ISABEL CRISTINA KEMANIAN
*Pre-Planning Advisor*

200 E. Duarte Rd., Monrovia, CA 91016
(818) 284-8754
Email: isabel.kemanian@sci-us.com



## Շնորհանդէս, Դոկտ. Յովհաննէս Աւմարանեանի «Հայը եւ Հայաստանը Աստուածաշունչին Մէջ» Գիրքին

*Թէքէեան Մշակութային Միութեան Փասատինա-Կլենտէյլ Մասնաճիւղի կազմակերպութեամբ տեղի պիտի ունենայ Շնորհանդէս, Դոկտ. Յովհաննէս Աւմարանեանի «Հայը եւ Հայաստանը Աստուածաշունչին մէջ» նոր հրատարակուած գիրքին: Գիրքը պիտի ներկայացնէ հրապարագիր Գէորգ Քէօշկէրեանը:*

*Ձեռնարկը տեղի պիտի ունենայ Կիրակի, 14 Յուլիս 2019-ի երեկոյեան ժամը 5:00-ին, ԹՄ Միութեան Ալթատինայի Պէշկէօթիւրեան Կեդրոնի Սրահին մէջ: (1901 N. Allen Avenue, Altadena, CA 91107)*

*Մուտքը ազատ է եւ յայտագրի աւարտին պիտի ըլլայ պատշաճ հիւրասիրութիւն: Սիրով հրաւիրուած է գաղութիս մշակութասէր հասարակութիւնը:*

*Ծանօթ. Կը խնդրուի գործածել Ալըն փողոցի մուտքը:*




## Կարեն Ղարսլեանի «Ռեժիմը Խուճապի մէջ է» Գիրքի Ներկայացում Ապրիլ Գրատան Մէջ




*Նոր լոյս տեսած՝ «Ռեժիմը Խուճապի Մէջ է» հատորը ներկայացնելու է գրքի հեղինակ՝ Կարեն Ղարսլյանը յատուկ Սլայդշոու(սահիկներու) պատումի միջոցով որտեղ քննարկելու է հայաստանեան յեղափոխութիւնները՝ Շաբաթ օրը, Յուլիս 13, 2019, երեկոյեան ժամը 7:30ին, Ապրիլ Գրատան մէջ՝ 415 E. Broadway, Glendale, CA. Մուտքն է ազատ: Հեղինակը ներկայացնելու է Հայկ Մախմուրեանը:*

*«Ռեժիմը Խուճապի Մէջ է» վաւերագրական տրագիկոմեդիան ընդգրկում է 21 ու կէս արար եւ 168 գործող անձ ու բացայայտում է Հայաստանի սիրոյ եւ համերաշխութեան յեղափոխութեան խոր արմատները 1996-ից մինչեւ 2018 թթ.: Լեւոն Տէր-Պետրոսեանի, Ռոբերտ Քոչարեանի, Սերժ Սարգսեանի նախագահութեան եւ Նիկոլ Փաշինեանի վարչապետութեան ժամանակաշրջաններին առնչուող ամենանշանակալի շարժումները պատմւում են «Ռեժիմը Խուճապի Մէջ է» հանրայայտ արտայայտութեան դիտանկիւնից: Տարբեր ձեւակերպումներով տասնամեակներ շարունակ այն չարչրկել են այնպիսի յայտնի քաղաքական եւ հասարակական գործիչներ (Նիկոլ Փաշինեան, Լեւոն Տէր-Պետրոսեան, Արտաշէս Գեղամեան, Ջարուհի Փոստանջեան եւ այլն): Գրքում 300 էջից 91-ը Կարեն Ղարսլեանի ուրոյն նկարազարդումներն են, որոնցում անիմացիոն եղանակով պատկերուած են «Լեւոն, հեռացի~ր» (1996), «Պայքար, պայքար մինչեւ վերջ» (2008), «Բարեւի յեղափոխութիւն» (2013), «Էլեկտրիկ Երեւան» (2015), «ՊՊԾ գնդի գրաւումը» (2016) եւ «Իմ Քայլը» (2018) յեղափոխական շարժումները: Նկարազարդումներից մի քանիսը կցուցադրուեն Ապրիլ Գրատան պատկերասրահում:*

*Թատերգութեան առաջնախաղը տեղի է ունեցել Երեւանում 2019 թ. Յունիսի 18-ին («Թեք տեղ» Թատերախումբ, բեմադրիչ Նանոր Պետրոսեան):*

*Կարեն Ղարսլյանը բանաստեղծ, վիպասան, թարգմանիչ, երաժիշտ եւ տեսողական արուեստագէտ է: Հեղինակել է նաեւ «Ատերազմա» տպագրային ֆիլմ/վէպը («Ինքնագիր», 2016), «Գրողի ծոցը» տձեւ հայրեններին ժողովածուն («Ինքնագիր», 2010) եւ «X կադր/վայրկեան» մինիմալիստական վէպն ու այլ երկեր պարունակող ժողովածուն («Բնագիր», 2003): «X կադր/վայրկեան»-ի համար ՀՀ հանրային հեռուստաընկերութեան կողմից 2003 թ. յայտարարուել է տարուայ սկանդալային գրող: Արժանացել է 2004 թ. «Երիտասարդ արուեստագէտի մրցանակին» իր «Password» ընթացիկ անտիպ վէպի համար:*

###

*Տեղեկութիւններու համար հեռաձայնել՝ Ապրիլ Գրատուն (818) 243-4112, noor@abrilbooks.com*

www.massisweekly.com

## «Ուր Պիտի Ըլլանք Երբ Երկրաշարժ մը Պատահի ...»




*Բնութեան աղէտները միշտ ալ անակնկալի առջեւ կը բերեն բոլորս եւ շատ յաճախ անսպասելի են: Վերջին օրերուն պատահած ուժեղ երկրաշարժները շատ զգալի էին Գալիֆորնիոյ տարածքին վրայ եւ մեծ ահ ու սարսափ յառաջացուցին բնակչութեան մօտ:*

*Ըստ փորձագէտներուն, գալիք վեց ամիսներուն կը թելադրուի շատ զգուշ ըլլալ, աւելի լաւ պատրաստուիլ որովհետեւ յետցնցումներու (aftershocks) հաւանականութիւնը բաւական բարձր է:*

*Ինչպէս պատրաստուիլ երկրաշարժի մը եւ ինչ կանխազգուշութիւններ ապահովել.-*

*Նախքան ամէն ինչ, շատ կարեւոր է երկրաշարժի ապահովագրութիւն ստանալ կամ գնել, որովհետեւ մեծ վնասները՝ մեծ գումարներ ալ կրնան պահանջել:*

*- Գոնէ երկու շաբթուայ սննթամթերք, ջուր եւ տուփեղէն ուտելիքներ ապահովել:*

*- Նախնական դարմանումներու ծրար մը ապահովել/First Aid kit*

*- Ռատիօ մը եւ ձեռնալամբ մը ունենալ .*

*- Աւելի բարդ պատահարներու համար, կացին մըն ալ ապահովել:*

*Հարկ է հեռու մնալ պատուհաններէն կամ ապակիներէն եւ գետին ծռելով ապահով ապաստանարան մը գտնել:*

*Երկրաշարժէ մը ետք, ի հարկին՝ վառելանիւթի կամ «կազ»-ի ամբարը անմիջապէս պէտք է փակել:*

*Այս ձեւի եւ կամ այլ աղէտներու պարագային , ընտանեկան անդամներու միջեւ կարեւոր է հաղորդակցութիւնը եւ համաձայնութիւնը, թէ ամէն մէկը ինչ քայլ պէտք է առնէ՝ եթէ իր ապրած շրջանէն հեռու է, եւայլն, ըստ դէպքին եւ պահանջքին:*

*«Ուր պիտի ըլլանք երկրաշարժի մը պահուն» հարցումը յաճախ կը դրուի մեր առջեւ: Ուր որ ալ ըլլանք, պատրաստ ըլլանք եւ տոկուն: Գրելը եւ ցուցմունք տալը ամէնադիւրինն է, այո: Սակայն շատ կարեւոր է այս հարցին լրջութեամբ մօտենալ եւ նախօրոք ծրագրել: Ի վերջոյ մեր բոլորին ապահովութիւնը եւ կեանքը շատ կարեւոր է:*

(Համացանցային կայքէջերու վրայ աւելի լայն եւ մանրամասն տեղեկութիւններ կան երկրաշարժի վերաբերող ապահովութիւններու շուրջ:)

## Հակառակ Համակարգուած Արշաւին

Շարունակուած էջ 1-էն

կուտակած հարստութիւնը վայելողներուն նկատմամբ:

Հարցախոյզի այլ տուեալներէն ի յայտ կու գայ թէ, կառավարութեան նկատմամբ վստահութեան որոշակի անկումը չէ փոխանցուած նախկին իշխող Հանրապետական կուսակցութեան, որու ժողովրդականութիւնը կը շարունակէ մնալ 5 տոկոսի շուրջ, նոյնքան որ ան ստացած էր անցեալ Դեկտեմբերի խորհրդարանական ընտրութիւններուն ժամանակ:

Հարցախոյզի տուեալները կու գան նաեւ հաստատելու, թէ Փաշինեանի ժողովրդականութեան կտրուկ անկումի եւ քաղաքացիներու յուսախաբութեան մասին ընդդիմադրութեան հիւսած առասպելները չեն համապատասխաներ իրականութեան:

Այսօր հայաստանի մէջ կը տիրէ անբնական իրավիճակ, երբ զանգուածային լրատուութեան միջոցներու 80-90 տոկոսը կը գտնուի նախկին ռեժիմին յարող շրջանակներուն ձեռքը, որոնք բաւական համակարգուած ապատեղեկատուութիւն կը տարածեն, համոզելու համար ժողովուրդին, որ յեղափոխութենէն ետք ոչինչ չէ փոխուած երկրէն ներս եւ թէ, Փաշինեան չէ կատարած իր խոստումները:

Այս հարցախոյզը կու գայ անգամ մը եւս հաստատելու թէ, հակառակ կառավարութեան դէմ շղթայազերծուած լայն արշաւին, Հայաստանի ժողովուրդը շատ աւելի գիտակից է ու համբերատար, քան կը խորհին այդ շրջանակները:

«ՄԱՍԻՍ»

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

# Massis Weekly

**Volume 39, No. 27** **Saturday, July 13, 2019**

## Armenia and Singapore to Usher in a "New Opening" of Relations Between Both Countries




SINGAPORE – Prime Minister Nikol Pashinyan said on Monday that his government has successfully tackled corruption and Armenia's other chronic problems "characteristic of many post-Soviet countries". Pashinyan was speaking at a lunch hosted in his honor by Singapore PM Lee Hsien Loong

"In the course of the past year the government of Armenia has taken steps that have radically transformed the country's business environment, it has strengthened the rule of law, created a level playing field for all economic actors and foreign investors in particular. Corruption has declined sharply."

"We no longer suffer from symptoms characteristic of many post-Soviet countries," he declared. "The new Armenia opens up new opportunities for investing and engaging in economic activities."

Singapore Prime Minister Lee welcomed Pashinyan's official visit, reminding ties between Armenia and Singapore that go back 200 years to when the British founded modern Singapore, with Armenians among the first migrants to the new free port.

Although their numbers were not large, the Armenian community has made a significant impact here, PM Lee added.

"Signs of Armenian influence can still be found all over Singapore," PM Lee said. "As a former journalist who founded his own newspaper, PM Pashinyan would be pleased to know that Singapore's main broadsheet, The Straits Times, was co-founded in 1845 by an Armenian, Catchick Moses."

Several streets also bear the names of prominent Armenians who settled here, while the country's national flower – the Vanda Miss Joaquim – was bred by Singapore-born Armenian resident Agnes Joaquim.

Speaking in Armenian, Mr Pashinyan warmly expressed his appreciation of how the Armenian heritage has been "remembered and protected with the utmost care" in Singapore.

"No doubt, today we are proud to witness the valuable mark our small but enterprising community has left in one of the most wonderful places of the world," he said.

He added that he hopes to usher in a "new opening" of relations between both countries, especially to boost the growth of bilateral trade and investment.

Armenia and Singapore are alike in that they advocate multilateralism and free trade at a time when many are turning against these principles, PM Lee said.

He noted that Singapore is negotiating a free trade agreement (FTA)

**Continued on page 3**

## Bishop Sahak Mashalian Elected Locum Tenens of the Armenian Patriarchate of Istanbul



ISTANBUL -- Bishop Sahak Mashalian has been elected locum tenens of the Armenian Patriarchate of Istanbul during a closed door meeting held on Wednesday July 4th. Mashalian received 13 votes whereas Archbishop Aram Ateshyan received 11 votes.

The appointment of the new locum tenens signals the start of election processes of new patriarch after Archbishop Mesrob Mutafyan passed away in Istanbul on March 8 after a prolonged period of illness.

Mashalian is set to manage the activities of the Patriarchate before a new patriarch is elected.

**Continued on page 4**

## Armenian Parliament Speaker Blasts Turkish Expansionism in Cyprus



NICOSIA -- Visiting Nicosia on Friday, Armenian parliament speaker Ararat Mirzoyan described Armenia and Cyprus as "true friends" that share the common goal of containing Turkey.

"For centuries, Armenians and Cypriots fought against the Ottoman yoke, and today we, the Republic of Armenia and the Republic of Cyprus, each have assumed a special mission: to confront Turkey's expansionist policy," he declared in a speech delivered in the Cypriot parliament. "And we carry out this mission by supporting each other on vital issues."

Mirzoyan condemned Turkey for refusing to unconditionally normalize relations with Armenia out of solidarity with Azerbaijan. "The Armenian-Turkish relations are always discussed in the context of the third countries' interests, which is categorically inad-

**Continued on page 4**

## Governor Newsom Signs State Budget with $5 Million for Armenian American Museum

GLENDALE – California Governor Gavin Newsom signed the 2019-2020 state budget with $5 million included for the Armenian American Museum. The 2019-2020 budget provides $4 million in new funding for the museum and $1 million in reallocated funding. The approval brings the State of California's total investment in the museum to $8 million.

Governor Newsom proposed the new funding for the developing cultural and educational center in the May revise of his 2019-2020 budget proposal following a successful meeting between the Governor's office and museum leadership.

"My staff was enlivened by the progress and vision of the Armenian American Museum," stated Governor Newsom when expressing his support for the historic project during a recent interview. "We have to continue supporting the museum to raise more awareness of the extraordinary contributions of the Armenian community and to reflect on their history."

In early May, the museum's Board of Trustees, Construction Committee, and Alajajian Marcoosi Architects met with Governor



Newsom's Legislative Secretary Anthony Williams. Initiated by State Senator Anthony Portantino, the meeting was an important opportunity for museum leadership to present its vision for the cultural and educational center, provide a guided tour of the museum site at Central Park, and have a productive discussion directly with the Governor's team.

"I'm very pleased that Governor Newsom has proudly embraced the Armenian American Museum and put

**Continued on page 4**

# Vietnam, Armenia Agree to Expand Multifaceted Cooperation




HANOI — Vietnam Prime Minister Nguyn Xuân Phúc and his Armenian counterpart Nikol Pashinyan have agreed on plans to enhance the two countries' ties.

During their talks in Hanoi yesterday, the leaders were full of praise for political ties and said they wanted to arrange more meetings and visits between their governments, parliaments, businesses and citizens.

They also agreed to keep working together at the United Nations, within the Francophone community and in the Non-Aligned Movement.

The PMs said they would try to improve the efficiency of the Vietnam-Armenia inter-governmental committee on co-operation in economy-trade and science-technology.

They said they would focus on implementing the free trade agreement between Vietnam and the Eurasian Economic Union, to which Armenia is a member, considering this an important pillar of bilateral ties and momentum to create breakthroughs in trade and investment.

An arrangement was made to hold a business forum on the sidelines of the upcoming session of the bilateral intergovernmental commission, due this fall in Yerevan. Both sides expressed confidence that it would impart fresh impetus to the development of joint investment programs and economic cooperation between the two countries. Reference was made to the possibility of importing Armenian brandy and wine into the Vietnamese market.

They also decided to expand co-operation in education-training, healthcare, sports, tourism, security and defense.

PM Phúc made clear Vietnam's policy of attaching importance to strengthening the friendship with Armenia, as well as the country's resolve to develop the relationship across the board.

He said it was emblematic that Pashinyan was visiting Vietnam on the 60th anniversary of the landmark visit paid to Armenia by founder of the Socialist Republic of Vietnam Ho Chí Minh. 'We are glad that Armenia has overcome difficulties and is taking steps towards economic development, which is sure to enhance Armenia's standing in the international arena."

Nikol Pashinyan noted that his visit aims to create a turning point in the quality of the bilateral ties, contributing to forging co-operation and meeting the aspirations of leaders and people of both nations. "The distance between our countries cannot be an obstacle to the development of cooperation," Nikol Pashinyan said.

Host and guest exchanged views on regional and international issues, including the peaceful settlement of disputes in Asia-Pacific, including the East Sea, on the basis of international law.

Following the talks, the governments of the Republic of Armenia and the Socialist Republic of Vietnam signed an agreement on cooperation in the field of education and science. Attended by Nikol Pashinyan and Nguyn Xuân Phúc, the agreement was signed by Armenian Deputy Foreign Minister Avet Adonts and Deputy Minister of Education and Training of Vietnam Nguyn Vân Phúc.

# Putin, Pashinyan Discuss Eurasian Union During Phone Conversation

MOSCOW, YEREVAN — Russian President Vladimir Putin and Armenian Prime Minister Nikol Pashinyan discussed Armenia's current presidency of the Eurasian Economic Union (EEU) during a phone conversation on Friday.

The Kremlin and Pashinyan's press office said they also spoke about Russian-Armenian cooperation within the framework of another Russian-led alliance of ex-Soviet states: the Collective Security Organization (CSTO).

Statements released by them indicated that Putin and Pashinyan focused on an EEU summit in Yerevan scheduled for October 1 as well as the possibility of expanding the trade bloc's "external relations."

Earlier this week, Pashinyan had similar phone calls with the presidents of the three other EEU member states: Belarus, Kazakhstan and Kyrgyzstan. His office said they specifically discussed prospects for the signing of a free-trade deal between the EEU and Singapore.

"All of the phone calls related to current and long-term issues on the EEU agenda," Pashinyan said in a Facebook post that announced his conversation with Putin.

Pashinyan is due to visit Singapore later this week. The Armenian leader spoke with Putin from Vietnam where he arrived on Thursday on the first leg of his tour of Southeast Asia.

Pashinyan praised the EEU when he spoke at the bloc's last summit held in Kazakhstan in late May. Speaking about the priorities of the rotating Armenian presidency of the EEU, he singled out planned trade deals with other countries, including India, Egypt and Israel.

# Six Killed In Armenian Road Crash




YEREVAN -- Law-enforcement authorities in Armenia were investigating on Monday a weekend road accident which left six people dead and eleven others seriously injured.

A commuter minibus reportedly burst into flames after colliding with two cars on a highway bridge 54 kilometers south of Yerevan on Saturday. A photograph released by the Armenian Ministry of Emergency Situations showed all three vehicles engulfed by fire after what was one of the country's deadliest road crashes in years.

The Investigative Committee said the victims were the driver and five female passengers of the minibus. A statement released by the law-enforcement agency suggested that they burned alive inside the vehicle that carried mostly residents of nearby villages. All but one of the charred bodies were identified by Monday morning, according to it.

The statement said seven other passengers suffered serious burns and required hospitalization. Three of them remain in a critical condition, it added.

The Investigative Committee reported later in the day that it has arrested one of the two car drivers on suspicion of causing the crash. The 63-year-old suspect, Soghomon Hakobian, was also seriously injured. A spokeswoman for the committee told RFE/RL's Armenian service that Hakobian is intensive care at a hospital in Yerevan.

The earlier Investigative Committee statement said blood tests showed that neither Hakobian nor the other car driver was drunk. It said that investigators have questioned some of the injured individuals and eyewitnesses and will conduct forensic tests as part of their probe.

"The investigation is continuing," read the statement. "All investigative actions are being taken to ascertain the circumstances of the accident and verify circumstances mentioned in testimonies."

Most cars and other vehicles in Armenia are powered by pressurized natural gas which is considerably cheaper than petrol.

# Armenian Police Round Up Major 'Crime Bosses'

YEREVAN (RFE/RL) -- The Armenian police have detained and questioned in recent weeks dozens of men described by them as major crime figures.

The brief detentions were reported in several regions of Armenia as well as Yerevan. Nobody was apparently charged with a crime as a result.

A police statement said that in the northwestern Shirak province one "thief-in-law" and over a dozen "criminal authorities," terms commonly applied to crime bosses in the former Soviet Union, were taken into custody because of being suspected of various crimes or resisting police officers' orders. Officers also raided and searched the homes of 14 such individuals.

Around thirty other alleged crime figures were rounded up in the southern Ararat province, according to the police. They too are understood to have been released shortly after being arrested.

The police also conducted a similar operation in the northern Tavush province. They said police officers there had "prophylactic" conversations with individuals with criminal records or other ties to the underworld in an effort to prevent possible crimes.

"Prophylactic" arrests were also made in two other Armenian provinces: Aragatsotn and Syunik. In Yerevan, one "thief-in-law" not named by the police was taken in for questioning on Monday.

Incidentally, Andranik Harutiunian, a reputed crime figure also known as "Masivtsi Andik," was shot and killed in Yerevan late on Tuesday. Armenia's Investigative Committee was quick to launch a criminal inquiry into the 46-year-old-man's death. It did not report any arrests by Wednesday afternoon.

The police already carried out such mass detentions in June 2018. They were ordered by Valeri Osipian, the new chief of the national police service appointed following the April-May 2018 "Velvet Revolution."

## Ambassador Arman Kirakosyan Dies Aged 63



YEREVAN -- Armenia's Ambassador Extraordinary and Plenipotentiary to the United Kingdom of Great Britain and Northern Ireland Arman Kirakosyan passed away today aged 63, the Ministry of Foreign Affairs informs.

"From the first day Arman Kerakosyan has been standing in the origins of newly-independent Armenia's diplomatic service and foreign policy, and has made an invaluable contribution," the Ministry said.

It offered condolences to Ambassador Kirakosyan's family and "all those who mourn his death."

President Armen Sarkissian also offered condolences over the demise of "an old friend" Arman Kirakosyan.

"Our family has lost a true friend and a brilliant person, the meeting with whom was always expected, pleasant and helpful," the President said.

## Historic Buildings in Western Armenia Being Destroyed by Treasure Hunters



Armenian historic buildings in Bagin district of the Alacakaya town in Turkey's Elazig (Kharberd) province are being looted by treasure hunters, Akunq.net quotes Turkish sources as saying.

According to the source, the 600-year-old settlement faces the threat of complete destruction. The district is home to two Armenian and one Muslin neighborhoods, as well as a number of caves, churches, mills and graves.

The buildings in this large mountainous area have managed to survive, preserving their historical characteristics. However, no scientific studies have been carried out in the area to date.

The historic buildings that have withstood a number of natural disasters are now being destroyed by treasure hunters. They  not only destroy history, but also open 600-year-old graves in a hope to find precious metals like gold.

People living in neighboring villages appeal to relevant authorities, asking to take the historic buildings under protection and pass them on to the coming generations.

## Garni Museum to Host Concert Marking 150th Birthdays of Komitas, Tumanyan



Armenia's Garni Museum-Reserve to host concert marking 150th birthdays of Komitas, Tumanyan

A concert marking the 150th birthday anniversaries of prominent Armenian composer Komitas and writer Hovhannes Tumanyan will take place at Garni Historical-Cultural Museum-Reserve located 28 km east of the Armenian capital, Yerevan.

The jubilee concert initiated by National Center of Chamber Music is scheduled for 14 July, at 8:30pm, the

Continued on page 4

## Armenia PM's Wife Meets with Armenian Peacekeepers in Lebanon



BEIRUT -- Anna Hakobyan, wife of the Prime Minister of Armenia and chairperson of the boards of trustees of the My Step and City of Smile charitable foundations, visited on Tuesday UNIFIL's Shama military base and met with Armenian peacekeepers with the accompaniment of Armenia's Ambassador to Lebanon Vahagn Atabekyan.

At the military base, Hakobyan was greeted by commander of the Shama military base Bruno Pisciotta, who stressed that it is a great honor for him to host the wife of Armenia's Prime Minister. Talking about the Armenian peacekeepers, Pisciotta expressed satisfaction and highly appreciated their professionalism. The Italian commander stressed that the Armenian peacekeepers perform orders on time and with a high sense of responsibility.

"It's a great honor for me to be here today. Your presence here is very important, especially since Armenia is a country that is entangled in a war. Once again, I express gratitude to you for your mission. You are our pride, and by being beyond the borders of Armenia, you are serving the Republic of Armenia and the Republic of Artsakh (Nagorno-Karabakh Republic)," Anna Hakobyan said.

## Armenia and Singapore to Usher in




**Continued from page 1**

with the Eurasian Economic Union (EAEU), which Armenia is chairing this year.

"The FTA will catalyze more business and stronger economic relations between our regions," Mr Lee said, adding that he appreciates Armenia's strong support for the agreement. "I am heartened by the substantial progress made and hope that we will be able to conclude the FTA, especially the goods chapter, soon."

On Monday, both countries signed five agreements to cooperate in areas such as tourism, taxation, arts and culture, vocational training and plant exchange.

Armenia is one of five member states of the EAEU, which also comprises Belarus, Kazakhstan, Kyrgyzstan and Russia. The economic bloc represents a market of more than 180 million people with a combined gross domestic product $1.8 trillion.

Mr Pashinyan arrived in Singapore on Sunday and received an official welcome at the Istana on Monday morning. Apart from calling on PM Lee, he also paid a courtesy call on Singapore President Halimah Yacob.

On Monday afternoon, he and his delegation met business leaders at a round-table session organized by the Singapore Business Federation (SBF). Companies at the session, which was also attended by Senior Minister of State for Trade and Industry Koh Poh Koon, came from a wide range of industries including manufacturing, technology and agri-commodities.

"For many of us present today, Eurasia is an emerging region that some Singapore businesses have begun exploring for opportunities, "said Mr Ho Meng Kit, who is SBF's chief executive. "Today's round-table serves as a useful platform for us to better understand the developments and investment opportunities in Armenia, as well as exchange insights and forge closer economic cooperation between our two countries."

## Karén Karslyan to Discuss Contemporary Armenian Revolutionary Movements With his Book Launch at Abril Bookstore




GLENDALE – Author Karén Karslyan will release his new book in Armenian titled, The Regime is in Panic: A Documentary Tragicomedy with a special Slideshow presentation and discussion of contemporary Armenian revolutionary movements on Saturday, July 13, 2019 at 7:30pm at Abril Bookstore - 415 E. Broadway, Glendale, CA. Admission is free with reception to follow. Author will be introduced by activist Hayk Makhmurian.

The Regime is in Panic, a documentary tragicomedy consisting of 21.5 acts and 168 dramatis personnae, unearths the roots of the 2018 revolution of love and solidarity in Armenia going as far back as 1996. The most significant movements associated with the presidencies of Levon Ter-Petrosyan, Robert Kocharyan, Serzh Sargsyan, and the premiership of Nikol Pashinyan are depicted from the perspective of the notorious phrase “the regime is in panic,” the various derivatives of which have for decades been periodically exploited by numerous public and political figures (such as Nikol Pashinyan, Levon Ter-Petrosyan, Artashes Geghamyan, Zaruhi Postanjyan, etc.). 91 out of 300 pages are Karén Karslyan’s authentic animated illustrations of the following remarkable revolutionary movements: “Levon, Go Away!” (1996); “Struggle, Struggle Until the End” (2008); “The Revolution of Hello” (2013), “Electric Yerevan” (2015), “Hostage Crisis of Sasna Dzrrer” (2016) and “My step” (2018). Some of these illustrations will be exhibited during the presentation at Abril Bookstore.

The premiere of the play took place in Yerevan, on June 18, 2019 (directed by Nanor Petrosyan, Tech Degh theater company).

Karén Karslyan is a poet, novelist, translator, musician, and a visual artist. He is the author of The Regime Is in Panic, a tragicomedy (Actual Art, 2019),Aterazma, a typographic film/novel (Inknagir, 2016), Doomed to Spell, a collection of deformed hayrens (Inknagir, 2010), X Frames/Sec, a collection of works including a minimalist novel of the same name and a few poems (Bnagir, 2003). Armenia’s public TV declared him the Scandalous Writer of the Year 2003 for X Frames/Sec. He is the recipient of 2004 Young Artists Award for the manuscript of Password, a novel in progress.

## Manushag Armenian Children’s Magazine Launches Across the U.S.!

Houston, TX – Manushag Armenian Children’s magazine was released in all 50 states in June 2019. This quarterly magazine subscription is mailed directly to children and will help them become even more excited about their faith, culture, and heritage. It is written in both Armenian and English to engage every child, no matter their reading level!

Parents have long craved for modern and child-friendly Armenian literature that children themselves can get excited about. This colorful 32 page magazine will be released quarterly and features alphabet lessons, history stories, Bible stories, recipes, coloring pages, Q&A on Armenian issues and more!

Manushag has already been greeted with enthusiastic responses by parents in communities across the U.S., by Armenian education leaders and religious leaders.

“I’m excited to offer Manushag Children’s Magazine to all children with the goal to further spark their curiosity, interest and excitement in their Armenian heritage through a colorful and fun medium” – Ara Karamanian, M.D., founder.




Manushag Children’s Magazine is created under a 501(c)3 non-profit, and will not contain any advertising or political messaging. Just good, healthy material for our children to learn and grow.

This quarterly magazine subscription ($25/year) and samples of the magazine are available at www.Manushag.org. It can be sent directly to children and grandchildren for an exciting surprise in the mail. Any questions or inquiries can be directed to info@manushag.org or via telephone at 832-895-7272.

## Bishop Sahak Mashalian Elected Locum Tenens

**Continued from page 1**

Bishop Sahak Mashalian spoke to media representatives thanking all who voted for him. "The Church Congregation-Assembly chose me as a locum tenens with majority of the votes. The placeholder should order the election process, the head all Church meetings, and he must ensure that the elections are held impartially. I am very grateful to have this confidence that my church brothers have given me. I should try to be worthy of the clergy and people's trust," said Mashalian.

The Patriarchate will announce today's election results to Turkish authorities and the Holy See of Etchmiadzin. Then a new Patriarch election commission will be formed. After receiving the privilege of holding a Patriarchal election in the coming months, the names of candidates running for the seat of the 85th Patriarch of Constantinople will be known, followed by the clarification of the lists of delegates entitled to vote. It is not known, however, whether a new patriarch will be elected by the end of the year.

## Armenian Parliament Speaker

**Continued from page 1**

missible and results in instability in the region and continuity of military conflict" Mirzoyan stated.

Speaking about the Nagorno-Karabakh conflict, he praised successive Cypriot governments’ “principled position on all issues vital for Armenia and the Armenian people.”

Mirzoyan went on to accuse Ankara of illegal commercial activities in Cyprus’s territorial waters. "I cannot but not touch upon the encroachments of Turkey towards the exclusive economic zone of the Republic of Cyprus, which is unacceptable, and it has been condemned by the international community. Such destructive and illegal actions shown by Turkey do not promote the provision of regional security and stability". Mirzoyan declared.

Mirzoyan thanked Cyprus for being in the forefront of recognizing the Armenian Genocide. " Our friend Cyprus has had its most important role in the international recognition of the Armenian Genocide. Today I am in a parliament, which is the first country in Europe and the second in the world that in 1975 recognized the Armenian Genocide. I express my deepest gratitude to the House of Representatives of Cyprus for declaring April 24 as the Armenian Genocide Memorial Day by state, and unanimously adopting the resolution criminalizing the denial of the genocides. Armenia and Cyprus has repeatedly proved their faithfulness to human values and reaffirmed the commitment directed to the continuous efforts of genocide prevention".

Mirzoyan also emphasized the importance of the trilateral format of Armenia-Cyprus-Greece cooperation. Stating it creates new perspectives for deepening multi-layer cooperation between the participant states. "I am sure that the formation of the parliamentary platform of cooperation will give an opportunity for the parties to more effectively use the whole potential of cooperation," said Mirzoyan.

The three countries share a long history of mutual animosity with Turkey. Armenian and Greek peoples were both victims of genocide perpetrated by the Ottoman Turks during World War One.

## Governor Newsom Signs State Budget

**Continued from page 1**

his support behind this amazing project,” stated Senator Portantino. “The Governor clearly recognized the significance of the project to the State of California for all of California to embrace and Mr. Williams left the board briefing quite impressed with this historic effort.”

The museum has reached a historic milestone for the project with the Governor’s signing of the 2019-2020 state budget as the cultural and educational center approaches its historic groundbreaking year in 2020.

“We are grateful to Governor Newsom as well as to Senator Portantino and the State of California for supporting the Armenian American Museum,” stated Executive Chairman Berdj Karapetian. “We have reached a historic milestone for the project and look forward to the historic groundbreaking of the landmark center.”

The City of Glendale, home to one of the largest Armenian diaspora communities, has dedicated a premier location for the museum in downtown Central Park.

The major funding announcement comes on the heels of the Board of Trustees’ selection of the museum’s project design team as well as the exhibition design and master planning firm.

## Garni Museum to Host Concert

**Continued from page 3**

center said.

Three leading Armenian music groups – the State Chamber Orchestra of Armenia (Artistic Director and Chief Conductor Vahan Martirosyan), the State Chamber Choir of Armenia (Artistic Director and Chief Conductor Robert Mlkeyan) and Hover State Chamber Choir (Director Sona Hovhannisyan) – will perform during the concert.

The music groups will perform under the baton of conductors Vahan Martirosyan and Robert Mlkeyan. Several soloists will also take part in the event.

## Նիկոլ Փաշինեան ԵՊՀ Վիետնամցի Շրջանաւարտներուն Հրաւիրած է Երեւան




Վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ տիկին Աննա Յակոբեան այցելած են Վիետնամի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւն, ուր տեղի ունեցած է ընդունելութիւն «Վիետնամ-Հայաստան Բարեկամութիւն» ընկերակցութեան անդամներու մասնակցութեամբ:

Ընկերակցութեան անդամներն են՝ խորհրդային տարիներուն Հայաստանի համալսարաններուն մէջ կրթութիւն ստացած անձինք: Անոնք ջերմօրէն ողջունած են վարչապետին եւ տիկնոջը՝ ընդգծելով, որ Հայաստանէն պահպանած են ջերմ յուշեր եւ մնայուն կապի մէջ են Հանոյի Հայաստանի դեսպանութեան հետ:

Վարչապետը նշել է, որ ուրախ է հեռաւոր Վիետնամի մէջ տեսնել Հայաստանի բազմաթիւ բարեկամներ, որոնք իրենց ներդրումը ունին երկրի զարգացման գործին մէջ: «Խորհրդային տարիներին Հայաստանի բուհերում ուսում է ստացել շուրջ 1000 վիետնամցի ուսանող եւ այսօր մենք այս երկրում ունենք ոչ թէ մէկ, այլ 1000 դեսպան»,- ըսած է Նիկոլ Փաշինեանը՝ աւելցնելով, որ Վիետնամի վարչապետի հետ հանդիպման ընթացքին քննարկած է նաեւ կրթութեան ոլորտէն ներս համագործակցութեան զարգացման, ուսանողներու փոխանակման ծրագիրներու իրականացման հնարաւորութիւնները: Կառավարութեան ղեկավարը յայտնած է, որ այս տարի կը լրանայ Երեւանի պետական համալսարանի 100-ամեակը եւ ԵՊՀ բոլոր վիետնամցի շրջանաւարտներուն աչնան կը հրաւիրէ Երեւան՝ մասնակցելու յոբելեանական միջոցառումներուն:

«Վիետնամ-Հայաստան Բարեկամութիւն» ընկերակցութեան անդամները ողջունած են վարչապետի նախաձեռնութիւնը եւ շնորհակալութիւն յայտնած են հանդիպման համար: Ջերմ մթնոլորտի մէջ անցած ընդունելութեան ժամանակ անոնք կատարել են նաեւ հայկական երգեր:

Նիկոլ Փաշինեան Վիետնամի մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Ռախսա Վարդանեանի ընկերակցութեամբ շրջած է դեսպանութիւնը՝ ծանօթանալով աշխատանքային պայմաններուն:

## Աննա Յակոբեան Այցելած է ԵՈՒՆԻՖԻԼ-ի Հայկական Ջոկատը



Լիբանան գտնուող ՀՀ առաջին տիկին Աննա Յակոբեան ընկերակցութեամբ Լիբանանի մօտ ՀՀ դեսպան Վահագն Աթաբէկեանին այցելութիւն տուած է երկրի հարաւային Շամա գաւառակին մէջ գտնուող ԵՈՒՆԻՖԻԼ-ի կեդրոնատեղի, ուր իր խաղաղարար առաքելութիւնը կ՚իրականացնէ ՀՀ խաղաղապահներու ջոկատը: Զինուորական կայանին մէջ Աննա Յակոբեանին դիմաւորած է ԵՈՒՆԻՖԻԼ.ի հրամանատար Բրունո Պիշիոտտան՝ շեշտելով, որ իր համար մեծ պատիւ է հիւրընկալել Հայաստանի ղեկավարի տիկնոջը:

Սոյն թուականի Յունիսի 30-ին, Իտալիոյ Ֆոլինիօ քաղաքի «Քարիթասի» (Caritas) կազմակերպութեամբ եւ Յունաստանի հայ կաթողիկէ համայնքի առաջնորդարանի աջակցութեամբ ու գործակցութեամբ, տեղի ունեցաւ հայիտալական միջմշակութային համագործակցութեան ձեռնարկ մը: Հայաստանէն մասնակցեցաւ «Նուռ» նուագախումբը՝ բարեսիրական համերգով, որ տեղի ունեցաւ Սկոպոլիի բերդին մէջ:

«Հայերն այսօր»-ի տեղեկացմամբ, համերգին ներկայացուեցաւ ինչպէս հայկական, այնպէս ալ իտալական երաժշտութիւն եւ խոհանոց:

Համերգը բարեյաջող ընթացաւ, ներկաներուն մէջ կային տարբեր երկրներու ներկայացուցիչներ:

## Արագածոտնի Մարզպետը Պարգեւատրած է Սուրիահայ Բժիշկը



Բժիշկ, վիրաբոյժ, գիտութիւններու թեկնածու Բիւզանդ Քահքէճեանն իր ողջ կեանքը ապրած է Հալէպի մէջ: Մինչ 2012 թուականը Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի մասին նոյնիսկ չէր ալ լսած:

Հալէպի մէջ գտնուող բժշկական թարմանատան մէջ աւելի քան 30 տարի աշխատած եւ մեծ յաջողութիւններու հասած վիրաբոյժը երբեւէ չէր կրնար պատկերացնել, որ արդէն հասուն տարիքին պիտի տեղափոխուի Հայաստան եւ բնակութեան վայր ընտրէ Արագած լեռան փեշերուն գտնուող հեռաւոր գիւղ մը:

Սուրիոյ մէջ ծաւալած երկարատեւ պատերազմի ժամանակ շատերու պէս վտանգուեցաւ նաեւ անոր ընտանիքի կեանքը, հրթիռակոծուեցաւ նաեւ իր թարմանատունը, եւ ան այլեւս մտածելու այլ բան չունէր՝ թողեց տունն ու տեղը եւ տեղափոխուեցաւ Հայաստան:

«2012 թուականի ապրիլն էր: Այդ պահուն մենք այլեւս ոչ մէկ ճանապարհ ունէինք, մեր միակ ճանապարհը մեր տունն էր: Հայաստանէն բացի ուրիշ այլ տեղ մեզի ապահով չէինք պատկերացներ: Անմիջապէս նստեցանք մեքենան ու եկանք հայրենիք: Ուրիշ ո՞ւր երթայինք: Ընտանիքիս համար շատ դժուար էր, բայց հայրենիքը մեզի այնքան ջերմութեամբ ընդունեց, որ Հայաստանը դարձաւ մեր տունը: Ես պատրաստ եմ իմ կարիքը ունեցող ցանկացած մարդու օգնել, որ առողջանայ: Ես կուզեմ օգնել հայերուն իմ մասնագիտութեամբ»,- կը պատմէ Բիւզանդը եւ կաւելցնէ, որ հայրենիքի մէջ ընտրած է առաջին իսկ հնարաւոր բնակավայրը:

Երբեւէ չլսուած գիւղը առանց վարանելու ընտրած է եւ որոշած բնակութիւն հաստատել այնտեղ: 2012 թուականէն կաշխատի Ծաղկահովտի բժշկական կեդրոնին մէջ, ուր իր մասնագիտութեան կարիքը վաղուց կը զգային: Բնակարանի հարցն ալ հեշտութեամբ լուծուած է՝ բազմաբնակարան շէնքերէն մէկուն մէջ պետութիւնը տուն յատկացուցած է, եւ կեանքը աստիճանաբար հունի մէջ մտած: Սիրած աշխատանքով կրցած է օգտակար ըլլալ բնակիչներուն, սիրուած ու յարգուած անոնց կողմէ: Հիմա արդէն Ծաղկահովիտ խոշորացուած համայնքի բնակավայրերուն մէջ բոլորը անոր լաւ կը ճանչնան, առողջական խնդիրները լուծելու, վիրահատութիւններ կատարելու համար անվարան կը դիմեն իրեն՝ բժիշկ Բիւզանդին:

Անոր կատարած աշխատանքը նկատած ու գնահատած է առողջութեան կեդրոնի ու մարզի ղեկավարութիւնը: Եւ պատահական չէ, որ մասնագիտական տօնի առթիւ բազմաթիւ շնորհաւորանքներու հետ մէկտեղ ՀՀ Արագածոտնի մարզպետ Դաւիթ Գէորգեանը բժիշկ Բիւզանդին եանձնած է պատուոգիր:

## Իրանի Շահինշահր Քաղաքի Միակ Հայկական՝ «Սրբոց Վարդանանց» Դպրոցը Փակուել է

Թեհրանի հայոց ազգային «Ռոստոմ» օրիորդաց դպրոցի փակուելուց եւ նոյն անուան տղայոց դպրոցի երերուն վիճակում յայտնուելուց յետոյ, Սպահանի հայոց թեմի թեմական խորհրդի որոշումով, նոյն ճակատագրին է արժանանում նաեւ Շահինշահր քաղաքի հայոց միակ՝ «Սրբոց Վարդանանց» դպրոցը, գրում է Թեհրանի ԱՐԱՔՍ շաբաթաթերթը:

Այսուհետ, «Սրբոց Վարդանանց» դպրոցի աշակերտները հայկական դպրոց հասնելու համար պիտի ամէն օր նուազագոյնը 40 քիլոմեթր ճանապարհ կտրեն՝ մինչեւ Սպահան, այլապէս պարտաւոր են յաճախել ոչ հայկական դպրոց, ինչը, բնականաբար, աւելի հաւանական է:

Դպրոցը փակւում է, հակառակ այն փաստի, որ պետական կողմը, տեսնելով աշակերտութեան սակաւ թիւը, թոյլ էր տուել այն դարձնել երկսեռ: Սա բացառիկ արտօնութիւն էր դպրոցը բաց պահելու համար:

www.massispost.com
Daily News Updates

# «ԱՍԱՏՈՒՐ» ֆիլմի Առիթով Այսպիսին է Խիղճն ու Ոգին Հայի

Այս խենթ աշխարհի օրէնքներն ինչու~, այսքան դաժան են եղել հայ ազգի համար

ՄԻՔԱՅԷԼ ՀԱՄԱՄՉԵԱՆ

*Ֆիլմը նկարահանուել է «Հայկ» կինոստուդիայում Հայաստանի Հանրապետութեան Մշակոյթի նախարարութեան պատուէրով: Սցենարի հեղինակներն են Գրիգոր Յարութիւնեանը եւ Վալերի Գասպարեանը, բեմադրիչը՝ Գրիգոր Յարութիւնեան, օպերատոր եւ տեսամոնտաժող՝ Յովհաննէս Գէորգեան:*

*Ֆիլմը ժանրային տեսակէտից կարելի է ընկալել որպէս վաւերագրական-խաղային ֆիլմ, իսկ ոճի առումով ընկալւում է որպէս իտալական նեոռեալիզ՝ տարբերակ՝ նատուրալ նկարահանումներով պատմութեան սիւժէն ներկայացւում է առանց աւելորդ գունազարդումների կամ տեխնիկական հնարքների: Բուխարիկի պարբերաբար ցուցադրութիւնը խորը իմաստ է պարունակում, երբ խօսքը հայի մասին է: Մեր ազգի կրակը անմար է: Ամէն օր պատուհանից նայում եմ Արարատին ու մտքովս էլ չի անցնում, որ նա Հայաստանում չէ: Նա հայի սրտի, մտքի, հոգու մէջ է:*

*Հաւատում ես ֆիլմին, ռեժիսորը հանդիսատեսին նստեցնում է ֆիլմի հերոսի դիմաց եւ ստեղծում է երկխօսութեան պատրանք: Թւում է թէ ֆիլմի հերոսը իր պատմելու արդիւնքով հնարաւորութիւն է տալիս հանդիսատեսին հարցեր տալ ու լսել պատասխանը: Ֆիլմը նայւում է մի շնչով:*

*Իմ կարծիքով ֆիլմի բեմադրիչը մի բարդ խնդիր էլ է լուծել, որը կոչւում է- պարզ է, յստակ է եւ իրական:*

*Կարծում եմ լաւ կը լնէր, եթէ սեւ-սպիտակ կադրերի սիւժէի ժամանակ, գլխաւոր հերոսին նոյնպէս ներկայացուէր սեւ-սպիտակ տոներով, նրան նոյնպէս վերադարձնելով այդ ժամանակները, ինչը աւելի յուզական կը դարձնէր ֆիլմը: Սակայն, սա զուտ մէկ հանդիսատեսի կարծիք է:*

*Բարդութիւնը պարզութեան մէջ է, այս հարցը Գրիգոր Յարութիւնեանը լուծել է: Ներկայացուող սիւժէի թեմայի հետ երաժշտական ուղեկցութիւնը չափաւոր է եւ ներդաշնակ ձայնային տոնի հետ՝ ձայնագրող օպերատոր՝ Լեւոն Հախվերդեան:*

*Ես ենթադրում եմ, որ տեքստը գրուել է հայերէն, ֆիլմում տեքստը կարդում է գործող գլխաւոր անձը՝ Կիւզելեանը, սակայն տեքստի թարգմանիչ գրուած է նոյնպէս Կիւզելեանը: Եթէ ֆիլմը թարգմանուել է անգլերէն, շատ գովելի փաստ է, կ՛առաջարկէի թարգմանել նաեւ ռուսերէն:*

*Ֆիլմը մի մարդու կամ մի ընտանիքի պատմութիւն չէ, այլ մի ամբողջ ժողովրդի պատմութիւն է: Ֆիլմը ձայնաւորուել է ֆիլմի հերոսի ձայնով, մաքուր, գրնգուն, մի քիչ էլ ըմբոստ արեւելեան հայերէնով, ինտոնացիան՝ արեւմտահայերէնի հնչողութեամբ, ինչը աւելի գեղեցկացնում է մեր լեզուն՝*

«Մեր լեզուն մենք ենք որ կանք:
Նա պիտի մեր առաջին
Ու վերջին սերը լինի,
Ի՞նչ ունենք էլ աշխարհում,
Ի՞նչ ունենք էլ աշխարհում,
Որ այսքան մերը լինիե (Համօ Սահեան):

*Ֆիլմի սիւժէն չեմ ուզում վերլուծել, հնարաւոր չէ աւելի լաւ պատմել, քան ինքը հերոսը՝ մի ամբողջ կեանքի, մի ամբողջ ազգի պատմութեան սիմֆոնիա է:*

*Սցենարիստին ուղղեմ խօսքս, թէ Ասատուրին չգիտեմ, բայց այդպիսի սիրոյ խոստովանութիւնը ֆիլմի նախերգանքում, չի կարող հանդիսատեսին թողնել անհաղորդ այդ պատմութեանը, ինչը ձայնաւորում է ֆիլմի հերոսը՝ հոգով, երեխայի անկեղծութեամբ, սենտիմենտալ երանգաւորմամբ,-*

*«Ամուսինը պէտք չէ գովի իր կնոջը, բայց նա արտակարգ մի կին է...»: Գովաբանական էպիտետների շարքը նրա սրտից են հնչում, ոչ թէ բերանից:*

*Ֆրունզէ Մկրտչեանը ինձ պատմել է, թէ մի առիթով գիւղում մի զառամեալ ծերունու հարցնում է,- Հայրիկ, որն է եղել քո կեանքի ամենաերջանիկ պատմութիւնը: Ծերունին ջրակալուած աչքերով, ձեռնափայտին հենուած, հազիւ լսելի ձայնով, պատասխանում է երգելով,- Գարուն էր նորից, իմ սէր առաջին...: Ինչքան յուզիչ է անկեղծ ու զուսպ սիրոյ խոստովանութիւնը: Հայ ազգին մինչեւ մեր օրերն է հասցրել այդ սէրը, ընտանիք հասկացողութեան գենետիկօրէն նուիրուածութեան զգացողութիւնը:*

*Ֆիլմի հերոսը արեւելեան Հայաստանում շատ է եղել, բայց երբեք չի ապրել ու զարմանալի է որտեղի~ց այս մարդուն այդքան Հայաստանի Սարեանական գոյներ:*

*Նրա սիրելի կինը՝ Վիվիէնը երգում է «Սեւ աչերէն շատ վախեցիր« (Տիգրանեան /Իսահակեան), այնպիսի զուլալ ձայնով, այնքան զմայլուած, իսկ Ասատուրը հպարտութեամբ զուգահեռներ է տանում Հայկանուշ Դանիէլեանի հետ: Ահա թէ ինչպիսին է հայ ընտանիքը: Դա միայն Կիւզելեանները չեն, դա մի ամբողջ ազգ է: Ինչքան լաւն էք դուք Կիւզելեաններ:*

*Ռեժիսորը առանց անտեղի իրարանցման, կարծես աննկատ, որպէս քնարական երաժշտութեան՝ ադաջիո, ներկայացնում է Կիւզելեանի ընտանիքը, ամբողջացնելով ողջ աշխարհի համար, ինչպիսի սրբութիւն է ընտանիքը հայի համար, ու այդ ներկայացման վերջում նրա աղջիկները ազնուական զուսպ զգացողութեամբ իրենց երախտապարտութիւնն են յայտնում ծնողներին, հնչում է դաշնամուրը ու աղջիկների խօսքը՝ Ասատուրի թաւ ու հիւթեղ ձայնով (հիմա հասկացայ տիտրերում գրուած թարգմանութիւնը ինչին էր վերաբերւում):*

*Այս ֆիլմի հերոսին կոչել հայի Բա~խտ, թէ՝ պոետ, թէ՝ բարերար, թէ՝ անսահման կեանք, թէ՝ հաւատարիմ բարեկամ, թէ՝ ֆիլանտրոպ, թէ հասարակական գործիչ եւ էլի մարդկային վեհանձն շնորհներ, բայց չես կարող մոռանալ ասել «զարմանահրաշ ասմունքողե»- Պետրոս Դուրեանի «Տրտունջք»-ի արտասանութիւնը՝ ձայնի ինչպիսի տեմբր, տոնը, խօսքի դադարները, ինտոնացիան, առանց փչաքաղուելու անհնար է լսել Մեծն Դուրեանի խօսքի ռեքվիեմը:*

*Ասատուրը կարդում է սրտով, կարդում է հոգով, այդ ձայնը բարձրացնում է Պառնաս, որպէս իր ազգի յաւերժ բողոք,-*

*«Այս ճակատագիրն ի՞նչ սեւ է, Աստուա~ծ, Արդեօք դամբանի մրուրով է գծուածքդ»:*

*Ասատուր Կիւզելեանը ասմունքի դասական Վարպետ է, արժէ որ նրան լսեն Երեւանի Կինոյի ու Թատրոնի համալսարանի ուսանողները, որ հասկանան ի՞նչ է նշանակում կարդալ բանաստեղծութիւն՝ անմնացորդ հաւատալ ասածդ խօսքին, անմնացորդ նուիրուելով պոետի հաւատին:*

*Ասատուրը իր կեանքի պատմութեան մէջ այնպիսի Մեծերի մասին է պատմում (որոնց հետ ընկերութիւն է արել), որ ցանկացած մարդու համար այն կարող է մեծարման դափնեպսակ դառնալ: Նա այդ Մեծերի մասին պատմում է ջերմեռանդօրէն, խորը ակնածանքով, երախտապարտութեան անթաքոյց զգացումով:*

*Ֆիլմը ունի ուսուցողական արժէք՝ մարդկային եօթ մեղքերի մէկից՝ հիասթափութիւնից ինչպէս խուսափել, ինչպէս պայքարել, ինչպէս հաւատալ, ինչպէս սիրել եւ ինչ է հայրենասիրութիւնը: Ֆիլմը աւարտւում է Շիրազի «Իմ սուրբ հայրենիք» բանաստեղծութեան «Crescendo» տոնային արտասանութեամբ՝*

...Քո փառքի համար թէ մի օր վառուեմ,

Մոխրաքիծ անգամ ինձնից չի մնայ:

*Բանաստեղծութեան ընթերցումով Ասատուր Կիւզելանը իր խօսքը աւարտում է խոստովանութեամբ,- «Ահա իմ Աւետարանը Հայրենիքի նկատմամբ»:*

*Ասատուր Կիւզելանի լաւատեսութիւնը ռեժիսորը ներկայացրել է նաեւ Ջորջ Բերնարդ Շոուի աֆորիզմով, որպէս ֆիլմի էպիգրաֆ:*

*Կարծում եմ միայն պէտք է շնորհակալութիւն յայտնել ֆիլմի հեղինակներին եւ կոչ անել, որ ֆիլմի նկարահանման այս մոդելը կարող է օրինակ ծառայել մեր ժողովրդի մեծերի դիմանկարների կինեմատոգրաֆիական պատկերասրահ ստեղծելու համար:*

*Շնորհակալութիւն Պարոնայք:*

**********

Միքայէլ Համամչեան

Տեխնիկական գիտութիւնների դոկտոր,

ՀՀ ինժեներական ակադեմիայի իսկական անդամ՝

Երեւան, 28 Յունիսի 2019թ «Ասատուր» ֆիլմը դիտելուց յետոյ


A. Guzelian with HRH Princ harles
Windsor Palace 2010 Feb. 10
at My Love Yerevan Gala Dinn r



# «Իմ Երգն իմ Առօրեան է, Ես Ապրում եմ Երգով». Ադամ Բարրօ



Ադամ Բարրօ, նոյն ինքը՝ Մուրադ Ամիրխանեան, առՋեւում՝ Բաստիլը, Գարնիեն ու Լա Սկալան...

Մեծ բարիտոնը 45 տարեկան է...

Ադամ Բարրօյի հետ, առաՋին հանդիպման առիթով, ֆրանսացի երաժշտագէտ Ալեն Դիւուոն ասել է. «Երգչի ձայնը բացայայտելիս, առաւել եւս՝ նրա հետ հանդիպելիս, ալքիմիական գաղտնախորհուրդ փոխակերպումների ականատես ես լինում ու նա, ում ծանօթ ես «իրական» կեանքից, վերազանցում է ինքն իրեն, ընդգրկում այն, ինչը հասու չէ գիտակցութեանդ, մի բան, որ ոմանք Աստուած, իսկ միւսները՝ գեղեցկութիւն են կոչում»: Ցիրաւի, տեղին բնութագրում...

Ադամ Բարրօյի կենսագրութիւնը նորովի ներկայացնելու կարիք չկայ, նրան արդէն ճանաչում են բոլորը, թէ՛ Հայաստանում, թէ՛ արտերկրում, նա արդէն նուաճել է միայն անունով ճանաչուած ու պահանՋուած լինելու դափնին:

Ադամ Բարրօն, համաշխարհային ճանաչման ճանապարհին, յաղթահարելով կեանքի բոլոր դժուարութիւնները, համեստօրէն աշխատում է, նորանոր ծրագրեր մշակում: Անցած մէկ տարուայ եւ առաՋիկայ կայանալիք համերգների մասին էր մեր զրոյցը:

Նա հաճելի զրուցակից է, կիրթ, ներքին հաւասարակշիռ հանդարտութեամբ, դրական լիցքերով ու անսահման լաւատեսութեամբ, նրա գեղեցիկ հայերէն խօսքն անգամ, դասական երգի նման է հնչում: Հանդիպել էինք պարզապէս սուրճ խմելու եւ զրուցելու, բայց այնքան գեղեցիկ ու յագեցած զրոյց էր, ասացի «Ադամ պէտք է գրեմ քո մասին», ասաց. «Շատ եմ խնդրում, ինձ չգովես»: Գովաբանելու, առանձնապէս, կարիք չունի միՋազգային մրցոյթների մի շարք Մեծ ու ԱռաՋին մրցանակների դափնեկիրը:

Մարդու կենսագրութիւնն ու անցած ճանապարհն է նրա լաւագոյն գովասանագիրը: Նա ամէն ինչում կատարելութիւն է սիրում: Բարձրագոյն դիպլոմով ու ժիւրիի միահամուռ դրուատանքով, փայլուն աւարտել է Փարիզի բարձրագոյն երաժշտական դպրոցը, որտեղ ուսանել է Կարոլին Դիւմայի դասարանում, իսկ Փարիզի Սկոլա Կանտորումը, ուր նրան դասաւանդել է Աննա Մարիա Բոնդին, Ադամ Բարրօյին շնորհել է վարպետութեան բարձրագոյն դիպլոմ: Նա արժանացել է նաեւ Սկոլա Կանտորումի մեներգչի բարձրագոյն դիպլոմին եւ ժիւրիի միաձայն շնորհաւորանքին:

Ադամ Բարրօն վարպետութեան դասեր է առել այնպիսի հանրայայտ անհատների մօտ, ինչպիսիք են՝ Ժոզէ Վան Դամը, Ֆրանսուա Լը Ղուն, Ջեչիլիա Բարտոլին եւ Գաբրիէլ Բաքեյը: Ադամ Բարրօյի ձայնային հզօր կարողութիւնները եւ բեմական տաղանդը արտայայտւում են նաեւ նրա օպերային դերերով՝ Վերդիի Ռիգոլետտօ, Սպարաֆուչիլեի, «Սամսոն եւ Դալիլա», Աբամելիխի դերը, Դոնիցետիի Դոն-Պասկուալէ օպերայում, գլխաւոր դերը հենց նրան էր վստահուած: Այս դերերը եւրոպական տարբեր օպերաներում երկարատեւ ծափերի են արժանացել:

Տարբեր է բարիտոն Ադամ Բարրօյի երգացանկը, համաշխարհային օպերաներից մինչեւ հարազատ հայկական շարականները: Ես հիացայ նաեւ՝ երբ լսեցի նրա ռուսերէն կատարումները Փարիզի Ռուս մշակոյթի եւ գիտութեան կեդրոնում ռուս մեծ կոմպոզիտոր Մուսորգսկու 180-ամյակին նուիրուած համերգի ժամանակ, ռուս ունկնդիրների հետ, նորովի բացայայտեցի նրա ողՋ տաղանդն ու փայլը...

Բեմում Ադամ Բարրօն էր, դաշնամուրի մօտ՝ Անն Քերեն, ծրագրում՝ ռուս մեծ կոմպոզիտորների յայտնի ստեղծագործութիւնները՝ թւում էր համերգը վերՋ չի ունենայ, երկարատեւ ծափահարութիւններ, բրաւոներ, բիսեր... եւ այսպէս, նրա բոլոր համերգներին...

Ադամ Բարրօյի լաւագոյն յուշերից է նաեւ՝ Լոս Անճելոսի «Ձիպեր Հոլլում» (Zipper Holle) կայացած համերգը, ասում էգ «Կոմիտասի «Կռունկը» կատարելուց յետոյ, զգում էի դահլիճի յուզմունքը, իւրաքանչիւր հանդիսատեսի սրտի բաբախիւնը, դա շատ կարեւոր է ինձ համար, առհասարակ, արտիստի համար»: ՎերՋին լաւագոյն տպաւորութիւններից է «Աւրորա» մրցանակաբաշխութիւնը Մոսկուայում: «Շատ ցաւալի էր, որ արդէն կորցրել էինք Շառլ Ազնաւուրին, նա ներկայ պէտք է լինէր այդ օրը, եւ ես մեծ փափաք ունէի, որ կ՚երգեմ «Քեզ համար Հայաստան» երգը եւ նա դահլիճում նստած, ինձ կը լսի, բայց ցաւոք... այդպէս չեղաւ... Իմ մանկութեան ամենավառ յուշը նրա հետ հանդիպումն է, երկրաշարժից մէկ տարի անց, Գիւմրիում: Ուրախ եմ, որ ներկայ էր նրա որդին՝ Նիկոլան: Համերգի աւարտին, նա մօտեցաւ, շնորհաւորեց, խօսեցինք, երկուսս էլ շատ յուզուած էինք՝ գեղեցիկ հանդիպում էր: Անդրադառնալով մրցանակաբաշխութեանը, պէտք է երախտագիտութիւնս յայտնեմ կազմակերպիչներին, յատկապէս Մարինա Ալեսին, այդ օրը երգեցի նրա հեղինակած, մայրիկին նուիրուած «Պատրանքի թեւով» երգը: Կատարելիս յուզմունքը խեղդում էր ինձ, բայց արհեստավարժ արտիստի յուզմունքը հանդիսատեսը հազուադէպ է նկատում: Ես կարողացայ յաղթահարել պահի ցասումը՝ մօրս էի յիշում... դժուար էր...(ի դէպ երազում տեսած մօր յորդորով էլ Մուրադ Ամիրխանեանը դարձաւ Ադամ Բարրօ Մգ Ագ): Երազիս մայրս եկաւ, ինձ Ադամ Բարրօ էր կոչում, արթնացայ, հասկացայ, որ վերեւից, կարծես նախանշան լինէր, եւ փոխեցի անունս, այսպիսով, ունեցայ բեմական գեղեցիկ յիշուող անուն, հեշտացնելով ֆրանսացիների գործը, կատակում է, չէ որ Ամիրխանեան եւ՛ դժուար են արտաբերում, եւ՛ դժուարութեամբ էլ՝ գրում են...

Ֆրանսիա եւ Հայաստան, երկուսն էլ շատ կարեւոր են ինձ համար: Մշտապէս կապի մէՋ եմ, տարին մի քանի անգամ տարբեր ծրագրերով մեկնում եմ իմ երկիրը, իմ օրրանը... Այնտեղ շատ անելիքներ ունեմ: Թէպէտ, բազմաթիւ բարեգործական ծրագրեր եմ իրագործել, բայց ինչ էլ անեմ, քիչ է: Գիւմրիում ուզում եմ տաղանդաւոր երաժշտասէր երեխաները լաւ կրթաթոշակ ստանան, դա իմ երազանքն է: Ես շատ անելիքներ ունեմ իմ ծննդավայրում, Արցախում՝ նոյնպէս... Պատրաստւում եմ դասեր տալ այնտեղ, (մաստեր կլասս), ո՞վ գիտէ, գուցէ բացայայտեմ շատ տաղանդաւոր մէկին, աՋակցեմ, որ նա անցնի այնպիսի գեղեցիկ ճանապարհով, ինչպէս ես անցա... Պէտք է իմ փորձը փոխանցեմ նոր սերունդներին, որ, որքան հնարաւոր է շատ լսեն դասական երաժշտութիւն եւ ռաբիսը նրանց ականՋներին խորթ թուայ, ցաւոք այդ անճաշակ երգերը նրանք լսում են ամէնուր, սա մեծ խնդիր է, եւ զրոյցի երկար թեմա, ես շնորհակալ եմ իմ ծնողներին, որ ինձ կարողացել են հեռու պահել այդ չարիքից ու սերմանել են ճաշակովը, դասականը»:

«Ես դանդաղ եմ առաՋ գնում, բայց հաստատուն քայլերով: Իմ գործը մեծ նուիրումով եմ անում, այնուամենայնիւ, կեանքում, ինձ համար ամենակարեւորը մնում է իմ ընտանիքը, իմ Հայաստանում ապրող երկու գեղեցկուհի աղՋիկները, երկու թոռնիկներս, ես արդէն, Աստծոյ օրհնութեամբ պապիկ եմ: ԵրՋանիկ եմ, որ կողքիս ունեմ իմ Աննային, իմ կինն ու ամենամտերիմը: Միշտ աղօթում եմ հարազատներիս եւ ընկերներիս համար, ուզում եմ բոլորը առողՋ լինեն, դրանով՝ ես լիարժէք երՋանիկ կը լինեմ: Մնացածը՝ ես ինքս կ՚անեմ: Հայաստանն իմ տունն ու հայրենիքն է, Ֆրանսիան՝ ապրելու եւ ստեղծագործելու օրրանը: Այս երկիրն ինձ երբեք օտար չի եղել, չնայած ստեղծագործական բարդ ճանապարհին, Փարիզն ինձ մեծ յաՋողութիւններ է բերել, իմ ճանապարհին միշտ լաւ, բարի ու կարեւոր մարդկանց եմ հանդիպում, այդ հանդիպումներն ու ծանօթութիւնները լցնում են իմ կեանքը, նոր գաղափարներ առաՋ բերում: ՎերՋին յիշարժան ու կարեւոր հանդիպումը ինքնաթիռի մէՋ եղաւ, պատկերացրէք, երկու գիւմրեցի երաժիշտ հանդիպում են ինքնաթիռում եւ օդում ծնւում է մի գեղեցիկ գաղափար՝ համերգ Փարիզի Մադլեն եկեղեցում, նուիրուած Կոմիտասի 150-ամեակին: Մի գիւմրեցին ես էի, միւսը՝ Մոնրէալում բնակուող Մաեստրօ Պետրոս ՇուՋունեանը: ԱռաՋին անգամ երաժշտական պատմութեան մէՋ, Կոմիտասի ստեղծագործութիւնները կը ներկայացուեն իր ժամանակակից ֆրանսացի կոմպոզիտորներ Կլոդ Դեբուսիի (1862-1918) եւ Մորիս Ռավելի (1875-1937) հետ միասին: Մաեստրօն նոտայագրել է նուագախմբի եւ յատուկ այս համերգի համար երեք կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործութիւնները, որը առաՋին անգամ կը ներկայացուի նաեւ՝ ֆրանսացի հանդիսատեսի դատին: Ես կ՚երգեմ զուգերգով, սիրուած երգչուհի Աննա Կասեանի հետ, կը նուագակցի ֆրանսական «2E 2M» նուագախումբը, Պիեռ Ղուլիեի ղեկավարութեամբ: Շատ երՋանիկ եմ, որ այս գաղափարը կեանքի կոչուեց եւ այն լինելու է հենց Մադլենում: Սա իմ ցանկութիւնն էր, որը միանշանակ ընդունուեց բոլորի կողմից: Երեք անգամ Գաւոյի սրահում երգել եմ, բայց Մադլենը շատ կարեւոր է, նրանով, որ այն աղօթքի վայր է, իսկ երգելով, աղօթքը կրկնապատկւում է: Շատ կարեւոր է նաեւ, որ այս ծրագիրը հաւանութեան արժանացաւ Փարիզի քաղաքապետի կողմից, աՋակցում են նաեւ՝ մեր առաքելական եւ կաթոլիկ եկեղեցիները միասին, մեր դեսպանատան բարձր հովանու ներքոյ»:

«Շատ երՋանիկ եմ այս համերգի համար: Կոմիտասը մեր երգի Բարտոկն է, Բարտոկից առաՋ, կարեւոր է ֆրանսացիներին ներկայացնելը»:

«Իմ բազում ծրագրերում, առաՋնային է՝ այստեղ նպաստել իւրօրինակ, բազմաբեղուն, մտածուած ծրագրերի իրագործմանը: Աշխատում եմ ժամանակակից կոմպոզիտորների հետ, ինձ համար, Տիգրան Համբարեանի Աւ. Իսահակեանի խօսքերով գրուած «Քայլերգ»-ը տաղանդի բացայայտում էր, որն արժանի է բարձր գնահատանքի նաեւ՝ Հայաստանի սահմաններից այն կողմ, այն նոյնպէս կհնչի Մադլենում»:

«Իմ երգն իմ առօրեան է, արթնանում եմ երգով, օրուայ ողՋ ընթացքում երգն իմ անբաժան ուղեկիցն է: Երկու տարեկանից երգում եմ»:

Շուտով «QUANTUM» ձայնեիզների տանը կը թողարկուի Ադամ Բարրօյի «Աւէ Մարիա» խտասալիկը, որի նախաբանը գրել է ֆրանսայի յայտնի երաժշտագէտ Ալեն Դիւուոն:

Այն յատկանշական է նաեւ նրանով, որ ներառել է Սեբաստացու Աւէ Մարիան: Աշխարհի որ ծայրում էլ համերգ լինի, անպայման հայկական մի ստեղծագործութիւն ընդգրկում է ծրագրում:

Ադամ Բարրօն ֆրանսերէնով ինքակենսագրական գիրք է գրում, պատմելու շատ բան ունի մեզ: Այս տարի, Հայաստանում, Ազնաւուրին նուիրուած համերգներ են լինելու, նրա երգացանկից Ադամ Բարրօն ունի հոգեհարազատ երգեր, որոնք կը կատարի այդ համերգներում:

Շուտով, ֆրանսական հեռուստատեսութեան «FRANCE 3» եւ «W9» ալիքներով, կը դիտենք նրա հարցազրոյցները եւ ելոյթները:

Հոկտեմբերին, Խստոնիայի Ազգային Սիմֆոնիկ նուագախմբի հրաւէրով Ադամ Բարրօն հանդէս է գալու Ռոսսինիի «Ստաբատ Մա-

Շար.ը էջ 19

# Ողջոյն Արմինների Երկրի Արմին Նաիրեանների Արքաների Դուստրերի Եգիպտոսի Փարաւոնների Թագուհիներին

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

*Մ.Թ.ա. 1580-1090 թուականների Եգիպտոսի փարաւոնների 18-րդ թագաւորութեան արքունի դիւանի տարեգրութիւններն են յայտնաբերուել՝ Գահիրէ քաղաքից 300 ք.մ. հեռաւորութեան Ամառնա բնակավայրի 1887 թուականի պեղումներից: Այն ծառայել է ոչ միայն Եգիպտոսի, այլ նաեւ Առաջաւոր Ասիայի երկրների պատմութեան ուսումնասիրողների համար: Այդ դիւանի պատումները շարադրուած են 300 կաւէ տախտակների վրայ, բովանդակում Ամենհոտեպ 3-րդ (1455-1419), Ամենհոտեպ 4-րդ (1419-1400) փարաւոնների դիւանագիտական նամակագրութիւնները արմին-նաիրեանների Արարչական Եդեմի առաջին բնակիչներ՝ Ադամ-Եւա ամուսիններ, տիեզերական «Իմաստութեան» պտուղը քաղելու համար՝ «Ես եմ որ է-ն» մունչացել հպարտն Աստուած վիրաւոր, վռնտել նրանց Եդեմից, կանչել, որ յախուռն բազմանային, իրենց քրտինքով հանապազորդ հաց ու իմաստութիւն արարէին: Գնացին լցրին աշխարհը, Հինդու-ների՝ Հնդկաստան երկրից, մինչեւ աշխարհի վերջի ծովեր, այլ ցամաքամասեր: Հնդեւրոպական ժողովուրդներ անուանեցին նրանց: Արարչական դրախտիկ երկիր հայկական լեռնաշխարհում բազմացած նախաբնիկ մարդիկ աստուածներ արարեցին, լեռների գագաթներից պայթած կրակի իմաստով իրենց երկիրը՝ կրակի, լոյսի, արեւի «ԱՐ-ԱՐԱ» աստուծոյ ածանցուած անունով՝ Հայասա-ազգի, Արատտա, Արմանի, Սուբիր-Սուբարտու, Միտանի, Արմինա, Արմէ Շուպրիա-անուանեցին: Իրենց բնօրրան երկրի անուններով էլ՝ նաիրեաններ, կրակի, լոյսի, արեւի Արա աստուծոյ արեւորդիներ, արորդիներ, արայորդիներ, արմիններ կոչեցին: Հայկական լեռնաշխարհի հարաւի տարածքում նաեւ ստեղծեցին պետական իշխանութիւններ, այն նորէն կրակի իմաստով Նաիրի կոչեցին, իսկ որպէս մետաղների հանքերով հարուստ լեռնաշխարհ Միտանի կոչեցին: Եգիպտոսի Ամենհոտեպ եւ այլ փարաւոններ՝ կրակի իմաստով Միտանի երկիրը՝ Նահարինի (կրակ իմաստով) էին անուանել:*

*Մ.Թ.ա. XVIII-րդ դարում, հայկական լեռնաշխարհի հարաւ-արեւմուտքի նաիրեաններ (կրակի երկրի մարդիկ) Միտանի մայր երկիրը գտնւում էր բուն Սուբարիների Սուբարտու երկրի հիւսիս ու հիւսիս արեւմտեան շրջանում: Սուբարացիները անյիշելի ժամանակներից տեղաբնիկ նաիրեաններ էին: Միտանի պետութիւնը արեւելքի հզօր թագաւորութիւն էր, մայր ոստանը՝ Վաշշուկաննի: Նրա աստուածները կրել են հնդեւրոպական ցեղերի մարդկանց ու աստուածների նման անուններ: Որպէս հայկական լեռնաշխարհի հնդեւրոպական ժողովուրդների բնօրրանի բնիկներ՝ նաիրիեանների Միտանի պետութիւնը ու նրա բնակիչները հնդեւրոպական մշակոյթի կրողներ էին: Միտանի, «Նի» վերջածանց բաղադրիչը, հայկական լեռնաշխարհի հնդեւրոպական տեղանունների ու անձնանունների ընդհանրութիւն ունէր: Նաիրի-Միտանի երկրի սահմանակից խեթերը նրանց լեզուն կոչել էին «Հուրիլի» երկիրն էլ կրակի իմաստով «Հուրլու»: Երկրի կարեւոր կեդրոնների տաճարները նուիրուած էին կրակին, արեւին ու լոյսին: Նաիրեանների-Միտանի թագաւորների անունները հնդեւրոպական ծագում ու նաիրեանների ցեղային բնութագիր ունեն:*

*Մովսէս Խորենացին, հայկազուն արքաների ցանկում յիշատակել էր ոչ միայն մի արքայատոհմի, այլ նաեւ հայկական լեռնաշխարհի այլ գահատոհմերի անուններ: Մասնաւորապէս յիշատակել՝ «Պարետից-Վաշտակով» արքաների շարքը, որոնք թագաւորել են՝ XVI-XIII դարերին: Այդ ժամանակահատուածը համընկնում է նաիրեանների Միտանի թագաւորութեան ժամանակաշրջանի դէպքերին: Նաիրեանների Միտանիի վերջին հզօր տիրակալների անունները՝ Պարադառնան ու Վասաշատան համընկնում են Պարետ-Վաշտակ անուններին: Նրանց գահակալութեան տարիները համապատասխանում են նաիրեանների Միտանի թագաւորութեան ժամանակահատուածին:*

*Հայոց պատմագրական աւանդոյթում, Միտաննի պետութեան հնդեւրոպական նաիրեանների գահակալները համարուել են հայկազուններ, բնիկ Արմին արքաներ, նրանց թագաւորութիւնը Արմին-հայերի պատմութեան անբաժանելի մասն է կազմում: Նրա անկումից յետոյ, այնտեղ կազմաւորուել են կրակ իմաստով «Բիանա» փոքր իշխանութիւններ, նաիրեանների Արամ-Արամէ արքան նրանց միաւորել Բիաինիլի կոչուած համադաշնակցային կեդրոնական պետութիւնում:*

*Նաիրեանների Միտանի կոչուած արմինների պետութիւնը, մ.թ.ա. 18-րդ դարից կարեւոր ճանապարհային հանգոյց եղել, էական դերակատարութիւն ունեցել Առաջաւոր Ասիայի քաղաքական ու տնտեսական կեանքում, որի թագաւորները արեւելքում կրել են «Մեծ Թագաւոր» տիտղոսը: Նրանց քաջերի զէնքերը արեւելքում հասել էին՝ հիւսիսային Միջագետք, արեւմուտքում՝ Ասորիք, Միջերկրականի ծովեզերք, Կիլիկեան Տաւրոսի լեռներ, հիւսիսում՝ Եփրատ ու Արածանիի միախառնման շրջաններ, Աղձնիք, Ծոփք ու Ասորեստանի տարածքի մեծ մասը: Հայկական լեռնաշխարհում՝ հնդեւրոպական նաիրեանների աշխարհակալութիւն: Արդե՞օք, Հայկ Նահապետի հինգերորդ շառաւիղ՝ Հարմա-ի որդի, Արամ Նահապետի աշխարհակալութի՞ւնն էր այն, որին պիտի յաջորդէին Արմինա երկրի Արա-Արայան թագաւորական տոհմի արքաների եւ Երուանդունի-Արտաշէսեանների աշխարհակալութիւնները: Խեթական պետութեան դէմ յաջող պատերազմական գործողութիւններ մղելով, Միտանի-ն իր ազդեցութիւնն էր տարածել Փիւնիկեան եւ Սիրիա-Պաղեստին տարածաշրջաններ, սահմանակիցը փարաւոնների երկրի ընդարձակ տիրոյթների:*

*Անխուսափելի էր պատերազմը Միտանի պետութեան ու Եգիպտոսի փարաւոնների երկրի միջեւ: Եգիպտոսը, քաջալերուած հէքսոսների դէմ մղուած կռիւներով, պատերազմ սանձազերծել Միտանի պետութեան դէմ: Թութմոս 4-րդ փարաւոնը (1465-1455), իր նախնիների նման արշաւանք կազմակերպել Միտանի երկրի գերիշխանութեան տակ գտնուող Միջերկրական Ծով-ի արեւէքին յարող տարածքներին տիրելու: Երկարատեւ պատերազմ, կողմերի առանձին յաջողութիւնները աշխարհաքաղաքական փոփոխութիւններ չէին առաջացրել: Թութմոս-ը սթափ գնահատելով շրջանի քաղաքական իրադրութիւնը ու իր երկրի յետագայ շահերը, աւելի նպաստաւոր էր համարել Միտանի պետութեան հետ դաշնակցային ու բարեկամական յարաբերութիւններ ունենալ՝ քան պատերազմական վիճակ լինէր: Հաշտութիւն էին առաջարկել, Միտանի արքայ Արտաշամա Ա. Արքայի հետ խաղաղութեան ու բարեկամութեան դաշնագիր կնքել: Կողմերի միջեւ կնքուած դաշնագիրը ամրապնդելու համար խնամախօսներ ուղարկել Արտատամա Ա-ի արքունիք, նրա դուստրը կնութեան խնդրելու: Նրանք եօթ անգամ այցելել էին արքային, նրա համաձայնութիւնից յետոյ արքայադուստրը դառնում Եգիպտոսի Մոտեմույէ անունով թագուհի: Ամառնա-ի պեղումների սալիկների վրայ արձանագրուած նամակներից յայտնի դարձել, որ Արտատամա Ա.-ի դուստրը Եգիպտոսի յաջորդ փարաւոն՝ Ամենհոտեպ (1455-1419) 3-րդի մայրն էր:*

*Ամենհոտեպ 3-րդի իշխանութեան 10-րդ տարում՝ 1445 թուականին, խնամախօսներ ուղարկել Նաիրի-Միտանի յաջորդ արքայ Սուտառնա Ա.-ի արքունիք, խնդրելով նրա դուստր՝ Գիլու Հեպային կնութեան տալ իրեն: Վեց անգամ այցելութիւնից յետո յաջողուել էր ստանալ արքայի համաձայնութիւնը: Գիլա Հեպան, 317 կանանց ուղեկցութեամբ ժամանել Եգիպտոս: Ամենհոտեպ 3-րդը ունեցել էր Խուրրի երկիրց ոչ արքայական ծագումով Թիա անունով կին եւս: Նրա դամբարանի արձանագրութիւնից յայտնի է դարձել, որ նրա ծնողները Նաիրի երկրից են եղել: Թիան, «արքայի մեծ տիկին» տիտղոսով ազդեցիկ դիրք ու խելացի կնոջ համբաւ ունեցել արքունիքում, փարաւոն ամուսնուն օգնել երկրի կառավարման գործերում: Նրա ոչ արքայական ծագման պատճառով, քուրմները պահանջել էին ամուսնալուծուել նրանից: Փարաւոնը մերժել էր: Եգիպտագէտ Պետրին, քննել էր Միտանի արքայադուստրերի դիրքը Եգիպտական արքունիքում, նշել, որ Թիա-ի դէմքը տարբերուել է Եգիպտական մարդկային տիպից: Նեֆերտիտի կերպարանքի գիծերը ճշտելով Թիա-ի հետ, հաւանական համարել, որ երկուսն էլ նոյն ցեղին էին պատկանել:*

*Ամենհոտեպ 3-րդը գահակալել է երկար ժամանակահատուածում: Ջնայած տարեց հասակին, ցանկացել կրկին ամուսնանալ ու կնութեան առնել Միտանի պետութեան արքայադուստրերից մէկին: Նրա հարսնացուն, Միտան-ի Տուշրատա արքայի դուստր՝ Տագու Հեպան էր, յետագայում յայտնի Նեֆերտիտի-ն: Փարաւոնը, խնամախօսութեան դեսպաններ էր ուղարկել, որոնք իրենց հետ տարել էին իր նամակը՝ «Իմ եղբայր, ինձ կնութեան ուղարկիր քու դուստրը որպէս տիրուհի Եգիպտոսի»: Երկար բանակցութիւններ էին սկսուել, Տուշրատաա արքան մեծ քանակութեամբ ոսկի պահանջել: Փարաւոնը պատասխանել, «Ինչ որ ուղարկել եմ քիչ, չնչին է, եթէ համաձայնես դուստրդ ինձ կնութեան տալ, նուէրները աւելի շատ»: Խնամախօս դեսպանին են ներկայացրել հարսնացուն, նրան հաւանել էր ու խիստ սքանչացել նրա տեսքով: Տուշրատա արքայի պատասխան նամակով վերադարձել էին Եգիպտոս: Արքան, իր նամակով, փարաւոնից նորէն ոսկի պահանջել: Դեսպանի հաղորդած տեղեկութիւնները հարսնացուի մասին գոհացրել էր փարաւոնին: Դեսպանը, փարաւոնի նոր նուէրներով վերադարձել Հայկական լեռնաշխարհի Միտանի երկիր, որպէսզի արքայադուստրը առաջնորդէր Եգիպտոս:*

*Տուշրատա արքան, արքայանիստ Վաշշուկաննի ոստանում, վեցամսուայ ընթացքում արքայադուստրի համար օժիտ էր պատրաստել: Երկրի իշխաններն էլ մասնակցել էին օժիտի նուիրաբերմանը: Արմին-Հայ, քու նախնիների իւրաքանչիւր սովորութիւն, աւանդոյթ, առաքինութիւն տարել քեզ հետ, դու էլ քու հարազատների ու բարեկամների դուստրերի պսակադրութեանը եւ նրանց օժիտների նուիրաբերմանը մասնակցում: Նախնիներից աւանդոյթները փոխանցում յետնորդներիդ, սիրում ու յիշում նրանց, որոնք իրենց աւիւնը ու ծինները փոխանցել են քեզ, որ մոլորակի հետ գոհունակ ճամբորդես արարչական յաւերժութեան քու ճամբաներով:*

*Վաշշուկաննի մայր ոստան, արեւն էր բազմել նրա հանդիպակաց բարձր լեռների գագաթին, Նաիրեանների երկրի հրաշագեղ դուստրի ճանապարհին լոյս վառելու: Ոստանի հրապարակ, արքայադուստր Տագու Հեպա-յի ոսկեզօծ քառանիւ կառքն էր, երկու կողմերին մի քանի շարքերով ու ռազմական հանդերձով ձիավար մարտիկներ էին կանգնել: Արքայադուստրի նաժիշտների, սպասաւորների երկար շարանով շքեղազարդ կառքերն էին հրապարակ մտնում, այնքան երկար էր նրանց շարքը, որ վերջին կառքը չէր նշմարւում: Հարսանեկան շքախումբի թափօրին հետեւում զինական մարդկանցով շրջապատուած կառքեր, արքայադուստրի հարսանեկան օժիտն էին տանում: Ոստանի հազար-հազար մարդիկ հրապարակ գալիս, վաղորդայն արեւի լոյս ցանում արքայադուստրի վրայ, այգածաղիկի փունջեր փռում ոստանով անցնող նրա ճանապարհին: Վաշշուկաննի տաճարի քրմապետը, իր կառքին կցորդած փայտէ կառոյցով մեհեան է հրապարակ բերում, կանգնում արքայադուստրի մօտ, այսպէս է խօսում.*

*-Արքայադուստր Տագու, քու նախնիների արեւի ու լոյսի աստուած ԱՐԱ-յի մեհեանն է այս: Այն պահապան լինի քու ճանապարհին: Երբ Եգիպտոս ժամանես, Նաիրեանների երկրի Արա աստուծոյ պաշտամունքի լոյսը վառիր նրանց մեհեաններում, որ արեւի ու լոյսի պաշտամունք լինէր:*

*Թմբուկների, շեփորների որոտներով խմբեր են գալիս հրապարակ: Թմբկահարները զարկում են պինդ, որ հեռու Եգիպտոս աւետէին արքայի հարսնացուի ժամանումը: Ոստանի պարման-պարմանուհիներ, իրարու թեւանցուկ արած իրենց նախնիների շուրջ*

Շար.ը էջ 18

## Ինչպէս Պահպանել Ուղեղի Երիտասարդութիւնը. 5 Խորհուրդ

*Զօրաւոր, ստեղծագործական եւ խելամիտ մնալու համար փոխեցէք ձեր սովորութիւնները:*

*Քանի մը սերունդ առաջ մարդիկ չատ կ՚ուզէին ապրիլ 50 տարի: Բարեբախտաբար, այսօր մեզմէ չատերը հնարաւորութիւն ունին ապրելու 20-40 տարի աւելի: Այնուամենայնիւ, տարիներու ընթացքին ուղեղի համար աւելի ու աւելի դժուար կը դառնայ իտէալական կատարել իր աշխատանքը:*

*Նստակեաց կեանքը, վատ սովորութիւններն ու անառողջ սնունդը կը խանգարեն ամբողջ մարմինը, նոյնպէս՝ ուղեղը:*

*Հասակի հետ կ՚աւելնայ Ալցհէյմըրի հիւանդութեան առաջացման եւ զարգացման հաւանականութիւնը:*

*Կենսական մարմնի վաղաժամ ծերացումը կանխարգիլելու եւ միտքը յստակ պահելու համար պէտք է հետեւիլ քանի մը օգտակար խորհուրդի:*

*Փոխեցէք ձեր սննդային սովորութիւնները: Առողջ սննդակարգին հետեւիլը օգտակար է ոչ միայն կազմուածքին եւ ընդհանուր ինքնազգացողութեան, այլ նաեւ ուղեղի աշխատանքին համար: Սկսեցէք կենսակերպի մէջ փոքր փոփոխութիւններ ընելէ: Օրինակ՝ փոխեցէք ուշ ժամերու սուրճը՝ բուրաւէտ կանաչ թէյով: Անիկա կը պարունակէ աւելի քիչ քաֆէին եւ աւելի չատ անթիօքսիտանթներ, որոնք կրնան պահպանել ուղեղի բջիջները: Փորձեցէք հրաժարիլ նաեւ ապխտած մթերքներէն:*

*Առողջ սննդակարգ ըսելով նկատի չունինք, որ ամէն օր պէտք է ուտել միայն հազար եւ վարսակ: Ուղեղի բջիջները պահպանելու համար կան բանջարեղէնի չատ տեսակներ, պտուղներ, ծովամթերք եւ այլն:*

*Նուազագոյնը 20 վայրկեան զբաղեցէք մարմնամար զանքով: Շարժական աշխուժութիւնը չատ կարեւոր է ուղեղի աշխատանքին համար: Մարմնամարզանքը կը զօրացնէ արեան շրջանառութիւնը, կը լաւացնէ յիշողութիւնը եւ կը նպաստէ ուղեղի նոր բջիջներուն առաջացման: Այդպէս կ՚առաջանան նոր նեյրոնային կապերը:*

*Մարմնամարզանքը կրնայ այնպիսի ազդեցութիւն ունենալ ուղեղի աշխատանքին վրայ, ինչպէս հակաճնշախտ ները: Մարմնական աշխուժութիւնը կ՚օգնէ ազատելու ճընշախտէն:*

*Զբաղեցէք որեւէ մարզանքով առնուազն 1.5 ժամ շաբթուան ընթացքին: Օրական 20 վայրկեանը նոյնպէս լաւ ցուցանիշ է: Ասիկա պէտք է ընել յանուն առողջութեան:*

*Յաճախ լքեցէք յարմարաւէտութեան գօտին: Ձեր ուղեղը աւելի երկար երիտասարդ կը մնայ, եթէ դուք լարէք զայն տարբեր խնդիրներով: Ի տարբերութիւն հանրային համոզ - մունքներու՝ ուղեղը ծրագրուած չէ եւ կրնայ փոխուիլ: Եթէ ուզէք, կրնաք, օրինակ՝ ազատիլ հին սովորութիւններէն եւ փոխարինել զանոնք նորերով: Ուղեղի այս յատկութիւնը կը կոչուի նեյրոփլասթիքութիւն:*

*Օտար լեզու սորվիլը կամ երաժշտական գործիք նուագելը կ՚օգնէ պահպանելու ուղեղի փլասթիքութիւնը, քանի որ անիկա կը նպաստէ նոր նեյրոնային կապերու ձեւաւորման: Շատ օգտակար է նաեւ հաղորդակցուիլ այլ մասնագիտութիւններու ներկայացուցիչներու հետ: Այսպիսով, դուք նաեւ կ՚ընդլայնէք ձեր մտահորիզոնը:*

*Յագեցէք քունէն: Քնացած ժամանակ մեր կլիմֆաթիկ համակարգը կը մաքրէ ուղեղը նեյրոթոքսիններէն, որոնցմէ ոմանք կ՚առաջացնեն Ալցհէյմըրի հիւանդութիւն եւ ալֆսինուկուինից, որուն կուտակումը կը յանգեցնէ Փարքինսընի հիւանդութեան:*

*Ուղեղի մաքրման գործընթացը ժամանակ կը պահանջէ:*

*Այդ իսկ պատճառով մարդը օրական 7-9 ժամ պէտք է քնանայ: Ապրեցէք աշխոյժ հասարակական կեանքով: Մարդը հասարակական էակ է: Բայց տարիքի հետ, մեր հասարակական շրջանը կը նեղնայ, մենք կը սկսինք աւելի քիչ խօսիլ այլ մարդոց հետ: Ընտանիքի եւ ընկերներու հետ փոխ յարաբերութիւններու պահպանումը կենսական նշանակութիւն ունի քոկնիթիւ առողջութեան համար: Հետազօտութիւնները ցոյց կու տան, որ ուրիշներու հետ քիչ շփուող մարդոց մտաւոր ունակութիւնները կը կրճատուին 70%-ով:*

*Կեանքի ամբողջ ընթացքին պէտք է աւելի չատ ժամանակ անցընել սիրելիներու հետ, զբաղիլ որեւէ նախասիրութեամբ եւ նոր բան սորվիլ: Այնուհետեւ, աւելի մեծ տարիքի, ուղեղը շնորհակալութիւն պիտի յայտնէ ձեզի լաւ յիշողութեան եւ յստակ մտքի համար:*

## Ազգային Խոհանոց. Հայկական Նշաբլիթ Բաղադրիչներ

*Խմորի համար՝ Ալիւր - 500 կրամ, Նուշ - 1 քկ, շաքար - 1.35 քկ, հաւկիթի սպիտակուց - 4 հատ, Ջուր - 200 մլ: Զարդարելու համար՝ Նուշ - 100 կր:*

*Պատելու համար՝ շաքարաջուր - 150 կր ( 100 կր շաքար, 50 կր ջուր):*

*Պատրաստման եղանակը.*

*Տաք ջուրով կաթսայի մը մէջ լեցնել շաքարը եւ խառնելով աւելցնել յարած սպիտակուցը, որմէ ետք աւելցնել աղացած նուշը: Անընդհատ խառնելով՝ տաքցնել այդ զանգուածը 15 վայրկեան: Կարեւոր է, որ շաքարը ամբողջութեամբ հալի:*

*Տաքցած զանգուածը վերցնել կրակէն, քիչ մը սառեցնել եւ խառնելով աստիճանաբար աւելցնել ալիւրը, հասցնել մինչեւ սենեակային ջերմաստիճանի: Պատրաստ զանգուածը լեցնել հրուշակագործական պարկի մէջ եւ բուսաիւղով ու ալիւրով պատուած ափսէի մէջ 30 կրամնոց թխուածքաբլիթներ ձեւաւորել: Թխելէ առաջ, թխուածքաբլիթին կեդրոնը դնել նուշի կէս մը: 30-35 վայրկեան թխել 180 աստիճան տաքութեամբ ջեռոցի մէջ: Նախքան լրիւ սառիլը վրան շաքարաջուր լեցնել:*

*Բարի ախորժակ:*

## Հասունութիւնը Ապրելով Կուգայ Կանացի Ըլլալու Գաղտնիքը

*Կանացիութիւնը կ՚ենթադրէ հասունութիւն եւ իմաստութիւն:*

*Վարդագոյն այտերը եւ բոլորին ժպտիլը, բնականաբար, հրաշալի է, սակայն, եթէ բացի այդ դուք ոչինչ գիտէք եւ կրնաք ընել, ուստի կանացիութիւնը լիարժէք չէ:*

*Հասուն կինը ան է, որ.*

*- Կը ճանչնայ ինքզինք՝ իր իւրայատկութիւնները, խառնուած քը:*

*-Գիտէ, թէ ինչ կ՚ուզէ եւ ունակ է ուզելու:*

*- Անցեալի համար քէն կամ վիրաւորանք չի պահեր:*

*- Կը կառուցէ իր կայնքը այնպէս, ինչպէս իրեն համար հաճելի պիտի ըլլայ, այլ ո՛չ թէ դրացիներուն կամ ընկերներուն:*

*- Շնորհակալ է ճակատագրէն այն ամէնուն համար, որ արդէն ունի:*

*- Կը կարենայ օգնութիւն խնդրել եւ շնորհակալ ըլլալ ատոր համար:*

*-Կը կարենայ «ոչ» ըսել անոր, ինչը իրեն համապատասխան չէ:*

*- Կը կարենայ իմաստութիւն դրսեւորել եւ տեսնել իր գործողութիւններուն հեռանկարները:*

*- Կը կարենայ սխալներուն համար ներել մերձաւորները:*

*-Կը կարենայ ինքն իրեն ներել գործած սխալներուն համար:*

*- Կը կարենայ ներողութիւն խնդրել, երբ ուեւէ մէկուն ցաւ կը պատճառէ:*

*-Կը կարենայ արտայայտել իր բոլոր՝ թէ՛ լաւ, թէ՛ վատ, զգացմունքները՝ շրջապատողներուն անվնաս եղանակով:*

*-Կը կարենայ սպասել եւ ազատ ձգել:*

*-Կը սիրէ մինակ մնալ եւ միշտ գիտէ, թէ ինչով պէտք է զբաղի:*

*- Ուրիշներուն վրայ չի ձգեր իր կեանքի պատասխանատուութիւնը, չի փորձեր ուրիշներուն համար*

*Աստուած դառնալ:*

*- Երբ իրեն որեւէ բան հաճելի չի թուիր, կը փոխէ ինքզինք, գիտակցելով որ այդպէս աւելի արդիւնաւէտ է:*

*- Կը կարենայ ընտրութիւն կատարել՝ ամէն անգամ առանձնացնելով գլխաւորը եւ մերժելով աւելորդը:*

*-Կը կիսուի աշխարհի հետ իր կարողութիւններով՝ առանց յետին մտքերու:*

*-Իրեն լիովին կ՚ընդունի այնպէս, ինչպէս կայ:*

*- Գիտէ, որ կեանքը քաղցր մեղր չէ, ուստի կրնայ դժուարութիւնները արժանապատուօրէն յաղթահարել:*

*- Գիտէ կեանքի իմաստը եւ այն, թէ ինչու այդ կայնքը իրեն տրուած է: Հնարաւոր է, որ անիկա անոր ուժ կու տայ յաղթահարելու դժուարութիւնները:*

*Ըլլալ այսպիսի կնոջ կողքին՝ հաճոյք է: Եւ ասիկա չի վերաբերիր միայն տղամարդոց: Առաջին հերթին՝ պարզապէս իրեն համար:*

*Այդպիսի ամբողջական կերպար ձեր մէջ երկու շաբթուան մէջ չի ձեւաւորուիր: Նոյնիսկ մէկ տարին բաւարար չէ: Ատիկա բաւական խորքային աշխատանք է, երկար ճանապարհ: Եւ կախարդական դեղահատ ալ գոյութիւն չունի: Հնարաւոր չէ մէկ օր քունէն արթննալ այդպէս, որքան ալ մեծ ըլլայ կարճելու նպատակին հասնելու ճանապարհը:*

*Հասունութիւնը կարելի չէ ժառանգել, անիկա անհնար է ներս «ընդունիլ»: Հասունութիւնը կու գայ ապրելով: Կեանքի անցած ճանապարհով, սեփական իւրայատկութեան գիտակցումով:*

*Հասունութիւնը կու գայ կենսափորձով:*

## Գեղեցկութեան 10 Արդիւնաւէտ Խորհուրդ

*Իւրաքանչիւր կնոջ երազանքն է միշտ ըլլալ գեղեցիկ, խնամուած եւ հմայիչ:*

*Ուստի 10 խորհուրդ, որոնք, իրօք, արդիւնաւէտ են:*

*1) Որպէսզի եղունգներուն ներկը շուտ չորնայ, անհրաժեշտ է ձեռքերը մտցնել պաղ ջուրով ամանի մէջ:*

*2) Եթէ դէմքի քրեմը ձեր մաշկին չէ համընկած, մէկ կողմ մի նետէք զայն, այլ օգտագործեցէք ոտքերու համար:*

*3) Առաւօտեան դէմ քը շփեցէք խոտաբոյսերով կամ իւղերով ներծծուած սառոյցով: Մաշկը զգալիօրէն աւելի նուրբ կը դառնայ:*

*4) Որպէսզի շուրթերը ըլլան գեղեցիկ եւ փափուկ, գիշերը անոնց վրայ քսեցէք հնդկընկոյզի կամ նուշի իւղ:*

*5) Որպէսզի ազատիք աչքերու տակի շրջանակներէն, բաւական է խնդրայարոյց հատուածներուն վրայ պաղ բան դնէք:*

*6) Մի մոռնաք 25 տարեկանէն ետք աչքերուն շուրջբոլորը քրեմ քսելու:*

*7) Ամրան ընթացքին օգտագործեցէք թարմացնող սփրէյներ:*

*8) Աչքերուն վրայի յարդարումը կարելի է մաքրել հնդկընկոյզի իւղի միջոցով:*

*9) Փորձեցէք իրարու խառնել մուգ եւ բաց ստուերաններկերը. հրաշալի երանգ կ՚ունենաք:*

*10) Եթէ մազերու արմատներուն մօտ օգտագործէք մանկական փոշի՝ մազերը իրենց թարմութեամբ ձեզի կ՚ուրախացնեն ողջ օրը:*

National Notary Association
Notary Public
MEMBER
Garine Depoyan
626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepoyan@gmail.com

# Ողջոյն Արմինների Երկրի

Շարունակուած էջ 16-էն

պարեր բռնում, արեւի ճառագայթներին յենած իրենց մեհեանների հրապարակներում աստուածներին նուիրուած պարեր էին: Պարի շարքերը, լեռների լանջերից եկած զեփիւռի թեւերին յենած, ցորեանի արտերի ոսկեայ հասկերի դողի նման օրօրւում, կարծէս արեւի ճառագայթներն իջել հրապարակ՝ ողջերթի մաղթանք մատուցելու արքայադուստրին: Պարմանուհիներն են բացատ եկել, առանձին մենապարեր բռնում, կիսաթափանց հանդերձներից լոյս ճառագում: Պարմանները գնում պինդ գրկում նրանց, որ նրանց լոյսը վարարէր իրենց հոգիներին: Հապա՜ տղայ աղջիկ զոյգապարեր, նրանց նազանքը, աչքերից պայթած կրակը հրդեհում տղաների սրտերը, նրանց առնում իրենց յաղթ բազուկներին, շրջանաձեւ պտտւում հրապարակում: Նաիրեանների-Միտանի արի պարմաններ, շարքեր կազմած լեռնականների խրոխտ պար բռնում, ճակատում իրար, զարկում իրար, ապա հեռանում ու քաջերին վայել մարտական սխրանքները նմանակող պարեր բռնում: Արի Արմին-հայեր, ձեր որդեաց հարսանեկան հանդէսների, աստուածների ծնունդների խրախճանքների պարերը՝ նախնիներիդ շուրջ պարերի արձագանգն են, քու ցեղի արարչական ոգու անմար բռնկումներն են:

Կառքերի անիւների համաչափ զարկերն հասնում հրապարակ: Տագու Հեպան կառքից իջնում, խոնարհւում հօրը: Տուշրատտա արքան ձեռքը դնում նրա գլխին, օրհնում նրա ճանապարհը, պատուիրում բարձր պահել ցեղի ու Նաիրեանների Միտանի երկրի փառքը, նրա աստուածների հաւատքի լոյսը բոցավառէիր նրանց մեհեաններում, փարաւոնների երկրի տիրուհին եւ ԱՐ-ԱՐԱ աստուծոյ իմաստութեան խորհուրդի պատգամաբերը լինէիր:

Նորէն թմբուկներն են զարկում, փողեր հնչում, Տագու Հեպան ողջերթի մենապար բռնում, բեհեզեայ հագուստից աստղեր բռնկում, հրապարակի մարդիկ բռնում այն, ամբարում իրենց ծոցերում՝ որպէս յուշ իրենց արքայադուստրի: Հեպան, ցորեանի ծովակների վրայ սահող ոսկեհեր փերի, փոթորկայոյզ ծովի ալիքների վրայ ճախրող յաւերժի հարս էր դարձել: Տուշրատտա հայրը գրկում նրան, համբոյր շաղում ճակատին, բարձրացնում կառքի նստատեղ: Հարսանեաց կառքերի կարաւանն էր ընթացք վերցնում, հրապարակն էր պոռթկում ողջերթի մաղթանքներով, սափորներով ջուր ցանում Տագու Հեպայի կառքի ետեւից, ջուրն էր որպէս գետակ հոսում նրա առաջ, աստուածները ջրի նման երկար կեանք չնորհէին իրեն: Փարաւոնի նամակների հաւաքածոյից յայտնի է դարձել Տագու Հեպա՝ Նեֆերտիտի օժիտի ցանկը: Այն մէջբերում եմ՝ իմանալու նախնիներիդ պատուախնդրութիւնը իրենց դուստրերի պսակադրութիւնների հանդէսներին,, բարեպաշտ աստուածներին նուիրումը, երկրի անչափ հարստութիւնը: Այսպէս՝ ոսկեայ ու արծաթեայ առարկաներ, անօթներ, հագուստների թանկարժէք գործուածքներ, ասեղնագործուած իրեր, ոսկեհիւս պատմուճան, բազուկների ու սրունքների դրուագուած ապարանջաններ, զարդեղէն, բաժակներ, տուփեր, անուշաբոյր իւղերով սրուակներ, ոսկեայ ու արծաթեայ արձանիկներ, ձիերին լծուած արծաթապատ կառքեր, զէնք ու զրահ, սաղաւարտներ, ոսկիով ու գոհարներով զարդարուած աղեղներ, զէնքեր: Տարեց փարաւոնի կեանքը երկարացնելու համար կախարդական բալասան: Ուղարկուել նաեւ Աշշուրից (Ասորեստան) որպէս աւար բերուած Իշտար աստուծոյ քանդակը՝ հիւանդութեան ատեն փարաւոնին բուժելու:

Հնագէտ Բեցոլդը խօսելով Նեֆերտիտի օժիտի մասին գրում է՝ «Պետական թելադրանքներ, կառավարման սկզբունքներ, կրօնական գաղափարներ թելադրուել կատարելու: Հարսի օժիտի պատրաստութեան ժամանակ խնամախօսները վեց անգամ այցելել էին Տուշրատայի արքունիք, մինչեւ որ արքայադուստրը ճանապարհէին Եգիպտոս: Արքան օրհնէր էր դստերի օժիտը, թելադրրանքներ արել կառավարման սկզբունքների ու կրօնական գաղափարների մասին: Արմին-Հայ, քու նախնիների նման դու էլ օրհնում ես քու տնից հարս գնացող դուստրիդ՝ հաւատափոխ եղած քու Աստուծոյն ուղղուած մաղթանքի խօսքեր չռայլում: Ամառնա բնակավայրի պեղումներից շատ արժէքաւոր գտածոյ է հասել նոր սերունդների մարդկանց, Նեֆերտիտի դիմաքանդակն է այն, կերտուած նուրբ դիմագծերով, երկար պարանոց, նշանաձեւ աչքեր, երազկոտ դիմագիծ, չափազանց հմայիչ կին: Այդպէս էր Նաիրեանների Միտանի Արմին դուստրը, այդպէս է Աստղիկ դիցուհին, այդպէս են հայոց դուստրերը:

Եգիպտոսի աւանների մարդիկ փարաւոնի ոստան էին ժամանել դիմաւորելու իրենց տիրակալի տիրուհուն: Արքայադուստր Տագու Հեպան, իրեն հետեւող կառքերի կարաւանով, փարաւոնի ոստանի գլխաւոր դարպասում էր: Պահակազօրքի մարտիկները բարձր պահել իրենց սուրերն են խաչաձեւում, թմկահարները ու փողահարները ազդարարում փարաւոնի հարսի ժամանումը: Տագու Հեպայի ոսկեպատ կառքն է անցնում արեւից բռնկած սուսերների լոյսի շողերի միջով, արքայական գունդն է պատիւներով դիմաւորում նրան, շարք բռնում կարաւանի երկու կողմերին, դանդաղ քայլքով գնում դէպի մայր ոստանի պալատ: Ոստանն է բուռն խանդաղատանքով, բարձր կանչերով, դիմաւորում երկրի տիրակալի հարսին: Տագու Հեպան, հարսանեաց չքեղ հանդերձով կանգնում կառքի առաջամաս, դէմքից պայթած ժպիտով ողջոյնում ոստանի մարդկանց: Եգիպտացիները հիանում են Նահարինա երկրի դուստրի գեղեցկութեամբ, կանչում՝ «Նեֆերտիտին» եկաւ, «Գեղեցկուհին եկաւ» իմաստով:

Փարաւոնի պալատի հրապարակ, հոծ բազմութիւն, արքունիքի մարդիկ, պալատական փառաւոր պատիւներով դիմաւորում իրենց երկրի նոր տիրուհուն: Եգիպտոսի քուրմերի շուրջ պարեր, զարմացել էր Տագու Հեպան, այն բոլորովին նման չէր իրենց աշխարհի պարերի կչռոյթներին, իրենց երկրի հովիկներին ու ցորեանի ծովակներին յենած պարողների շարքերի ծփանքին: Թմբուկ զարկում, փողեր հնչում, չէ՛, սիրտ ալեկոծող, հոգին զմայլացնող հնչիւններ չէին, աստուածների սքանչանքով լեցուն դէմքին ժպիտ չէր հոսել: Արքունի պալատական կանայք ու սպասեակներ նրան ուղեկցում պալատի իրեն յատկացուած սենեակներ:

Կարճ ժամանակ անց մահանում է Ամենհոտեպ 3-րդ փարաւոնը, արու զաւակ չունենալու պատճառով գահ է բարձրանում նրա փեսայ՝ Թիա թագուհու դուստրի ամուսին, Ամենհոտեպ 4-րդ երիտասարդ փարաւոնը (1419-1400): Նոր փարաւոնը անմիջապէս հօր մահը յայտնել Միտանի Տուշրատտա արքային, խնդրել շարունակել իր հօր հետ սկսուած բարեկամական յարաբերութիւնները, ինք որոշել է Նեֆերտիտին ընդունել իր կնանոցը, որպէս՝ «Մեծ իշխանուհի բոլոր կանանց եւ տիրուհի հարաւի ու հիւսիսի»:

Ամենհոտեպ-4-րդ երիտասարդ, ուժեղ փարաւոնը անհատականութիւն էր, նրա կատարած բարեփոխումները փոխել են Եգիպտացիների սովորոյթները, որոնք երկրում սուր բախումներ էին առաջացրել: Նա ժխտել է երկրի բոլոր աստուածներին, ընդունել միաստուած՝ ՐԱ աստուծոյ պաշտամունքը: Նաիրի-Միտանի արմինների արեւի, կրակի, լոյսի գերագոյն աստուած ԱՐ-ան էր հասել Եգիպտոս, տառերի փոխատեղումով դարձել ՐԱ: Նեֆերտիտի-ի հօր օրհնութեան թելադրանքն էր, որ իրենց աստուածների խորհուրդի պաշտամունքը տանէր հեռու Եգիպտոս, որ նրա մարդիկ գնային կրակի ու լոյսի աղբիւրից ճշմարտութիւն որոնէին, որ ամէն առաւօտ արեւից լոյս քաղէին, ողողէին իրենց դէմքերը, ցօղէին իրենց աչքերը: Երկրի գերագոյն աստուծոյն անուանել էին Աթոն (արեւի Սկաւառակ), փարաւոնը իր անունը փոխել էր որպէս Էխնաթոն՝ Աթոնի վահան: Աշխարհի մարդիկ, ձեր միաստուած ուսմունքից հազար-հազար տարիներ առաջ, Միտանի երկրի դուստրը հեռու Եգիպտոս տարել արեւի, լոյսի, կրակի Արա աստուծոյ պաշտամունքը, տիրակալի հետ երկրոմ «Միաստուածութիւն» արարուել:

Էխնաթոնը իրեն նուիրել է Նեֆերտիտի-ի թելադրած հայրենի երկրի ԱՐԱ արեւ աստուծոյ նոր կրօնի պաշտամունքի քարոզչութեանը: Գրել է ներբողներ, կառուցել Ախենաթոն (Աթոն աստուծոյ քաղաք) անունով նոր մայրաքաղաք: Հրամայել է այնտեղ կառուցել Նեֆերտիտի-ին նուիրուած՝ արեւ աստուծոյ տաճարը, այն զարդարել Նեֆերտիտի-ի ու նրա երեք աղջիկների պատկերներով: Այս գրութեան վերջում նայի՛ր այդ տաճարին, արեւի լոյսի ճառագայթներն են այնտեղից լուսարձակւում, դու էլ նրա լոյսով գնա՛ նախնիներիդ հաւատքի լոյսի աղբիւրը, հաւատա՛ նրա ճշմարտութեանը, հաւատա՛ «վայրկեան մը շող մութ յաւիտեանն արժէ»: Էխնաթոնը իր գրած ներբողներում գովերգել է Նեֆերտիտի-ի հմայքն ու գեղեցկութիւնը, ինչպէս՝ «ես սիրում եմ քաղցր շունչը քու, ամեն օր հիանում քու գեղեցկութեամբ, իմ ցանկութիւնն է լսել քու ձայնը հմայիչ, որ հնչում է ինչպէս շրջող հիւսիսային քամի»: Էխնաթոնի կրօնա-հաւատամքային յեղափոխութեան մէջ խոշոր ու առաջնային ազդեցութիւն էր ունեցել արեւապաշտ Նեֆերտիտի-ի դերակատարութիւնը, որը իր հետ բերել էր որպէս հօր օրհնութիւն, որպէս իրենց նախնիների արեւի ու լոյսի պաշտամունք:

Էխնաթոնի ու Միտանի թագաւոր Տուշրատայի յարաբերութիւնները բարեկամական չէին եղել: Նա չէր ուղարկել Ամենհոտեպ 3-րդ փարաւոնի խոստացած նուէրները: Տուշրատտա արքան մեծ ցանկութիւն է ունեցել ստանալու դստերի ոսկեայ երկու արձանները, որոնք նկարագրել էին խնամախօս դեսպանները: Ամենհոտեպ 4-րդ-Էխնաթոն փարաւոնը, ոսկեայ արձանների փոխարէն Տուշրատային ուղարկել է ոսկեզօծուած փայտեայ արձաններ: Փարաւոնի արարմունքը վիրաւորանք համարել իրեն: Նրանց բարեկամական յարաբերութիւնները սկսել էին հետզհետէ խամրել եւ յետագային խզուել: Միտանի-ի ռազմական ու տնտեսական կարողութիւնները թուլացել էին, Եգիպտոսի փարաւոնի համար նպաստաւոր չէր եղել նման պետութեան հետ յետագայ բարեկամութիւնը շարունակել:

Էխնաթոնը ու Նեֆերտիտի-ն արու որդի չէին ունեցել: Կեանքի 30-րդ տարում մահացել է փարաւոնը, գահը փոխանցուել փեսաներ՝ Սեմնեխկարին, ապա պատմութեան բեմահարթակ ելած հռչակաւոր Թութանհամոնին: Ամուսնու մահից յետոյ, Նեֆերտիտի-ն մի քանի տարիներ եւս ապրելով՝ մահացել 37 տարեկան հասակում: Երեք սերունդ շարունակուել էր Եգիպտոսի ու Նաիրի-Միտանի թագաւորական ընտանիքների ազգակցական-խնամիական կապերը: Եգիպտոս հարս էին գնացել Արտատամա I-ի Սուտեմոյէ դուստրը, Սուտարնա I-ի դուստր Գիլու Հեպան, իշխան Ցուայի դուստր Թիան եւ վերջապէս Տուշրատա արքայի դուստր Տագու Հեպա՝ Նեֆերտիտի-ն: Նաիրեան աշխարհի արքայադուստրերը մեծ համբաւ ու ազդեցութիւն են ունեցել Եգիպտական արքունիքում, նշանաւորուել՝ իրենց բացառիկ իմաստութեամբ, հմայիչ գեղեցկութեամբ, իմաստուն խորհրդականներ հանդիսացել իրենց փարաւոն ամուսիններին:

Նաիրեանների Միտանի արքայադուստրերի հետ Եգիպտոս էին մեկնել նաեւ հարիւրաւոր կանայք՝ որպէս թագուհիների սպասաւորներ ու նաժիշտներ: Նրանք, Եգիպտական արքունիք են տարել հայրենի երկրի սովորութիւնները, բարքերը, կրօնա-հաւատամքային հայեացքները: Այդ ժամակաշրջանին է համընկել Եգիպտոսի նոր թագաւորութեան ժամանակահատուածը՝ Եգիպտոսի 18-րդ թագաւորական հարստութեան փարաւոնների գահակալութիւնը, որը Եգիպտոսի պետութեան բարգաւաճման շրջանն է համարւում: Եգիպտական պետութեան այդ բարգաւաճումը ստեղծուել է Նաիրեանների Միտաննի պետութեան ու Եգիպտոսի փարաւոնների միջեւ հաստատուած ազգակցական ու բարեկամական կապերի ազդեցութեամբ: Արմինա երկրի արարչական մարդկանց պատմական առաքելութիւնն էր մօտիկ-հեռու երկրներում՝ Եգիպտոս, Ասորիք, հեռու արեւմուտքում վառելու «ԱՐԻ», կրակի ու լոյսի արեւորդիների մարդկանց ոգու կրակը, իրենց լեռնաշխարհում արարած քաղաքակրթութեան հրեղէն լոյսը, հիմա էլ շարունակւում է իրնց Արմին նախնիների սերունդների արեւորդիների մտքի ու իմաստութեան լոյսի ճառագումը աշխարհներ:

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



*Կարպիս Պալըքճեանի մահուան քառասունքին առիթով յաւարտ Ս. Պատարագի հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ Կիրակի, 14 Յուլիս, 2019ին:*

*Խնդրողները՝*

*Տիկ. Շաքէ Պալըգճեան*

*Որդին Տէր եւ Տիկ. Կէրի եւ Ժանէթ Պալըգճեան եւ զաւակունք*

*Գարինա Պալըգճեան եւ Թոռնիկը Ալպեր Պալըգճեան*

*Թոռնիկը՝ Օրիորդ Արիէլ Վասպորդ*

*Քոյրը՝ Տիկ. Վէրժինիա Մէրմէրեան*

*Տէր եւ Տիկ. Սարգիս Աւ. Քհնյ. եւ երէցկին Թալին Փէթոյեան եւ դուստրը*

*Տիար Արա Մէրմէրեան*

*Տօքթ. եւ Տիկ. Կրէկըրի եւ Ալիս Քիթապճեան եւ զաւակունք*

*Հանգուցեալի յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*Վանիկ Ռըզեանի մահուան տխուր առիթով Լոս Անճելոսի Հ.Մ.Մ.ի վարչութեան անդամները իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի տիկնոջ եւ ընտանեկան պարագաներուն:*

## Նախկինների Ակտիւացած «Չէզոքները»

Շարունակուած էջ 2-էն

*թեան պաշտպանութեանը: ԱԱԾ անունը հենց այնպէս չհնչեց, քանի որ եթէ մի մասը այդ գործին լծւում էր ինքնակամ՝ միայն յանուն շահի եւ անուն հանելու, ապա մի մասն էլ լծուել է հասկանալիօրէն այն պատճառով, որ նախկինները զբաղուած էին բոլորի մասին կոմպրոմատներ հայթայթելու եւ ապա դրանք որպէս մարդկանց իրենց կողմը քաշելու գործիք օգտագործելով:*

*Եւ ահա, եթէ դիտարկուի նախորդ տարիների իշխանական մամուլը, ապա պարզ տեսանելի է, թէ ինչպէս են կոնկրետ անձանց «ռասկրուտկա» արել եւ դարձրել յայտնի իրաւաբաններ: Իհարկէ, այդ անձանց մէջ եղել են նաեւ խելացիներ, որոնք իրենց գիտելիքը պարզօրէն բարտեր են արել շահի հետ, եղել են նաեւ այնպիսիք, որոնք երբեք էլ աչքի չեն ընկել առանձայատուկ «քաջութեամբ» եւ իշխանութեան թեւի տակ տաքուկ տեղը եղել է իրենց երազանքների գագաթնակէտը, եղել են նաեւ այնպիսիք, որոնք շատ լաւ հասկանում էին, որ եթէ չդառնան այս մեքենայի մի մասնիկը, ապա իրենք իրենցով ոչնչի չեն հասնի:*

*Եւ ահա, նախկին իշխանութիւնները աճեցրել եւ «ռասկրուտկա անելով՝ յայտնի են դարձրել» (նրանց մի մասին էլ բարեյաջող պաշտօնների են նշանակել) «իրաւաբանների մի ամբողջ պլեյադա», որոնք բոլորն էլ այս կամ այն կերպ պարտական են նախկիններին:*

*Եւ այսօր, ահա, նրանք բոլորը, ներկայանալով իբրեւ թէ չէզոք դիրքերից՝ լծուել են իրենցից մեկի պաշտպանութեանը, բայց ոչ թէ՝ որովհետեւ ուշաթափւում են այդ մէկի համար, այլ քանի որ հասկանում են, որ սա նաեւ իրենց հարցն է:*

*Այսօր, երբ իշխանութեան է մէկ այլ ուժ, եւ երբ բոլոր ոլորտները փաստացի ազատականացուել են, եւ ամէնուր գործում է մրցակցայնութիւնը, նրանց զգալի մասն այսպիսի պայմաններում որոշակի ժամանակ անց ուղղակի կը դադարի գոյութիւն ունենալ որպէս մասնագէտ:*

*Նրանք սովոր չեն մրցակցութեանը, նրանք սովոր են ունենալ իշխանութեան հովանին եւ «աճել» այդ հովանու սատարութեամբ. երբ այդ հովանին առաջ է մղում իրենց եւ դաշտից հնարաւորինս դուրս թողնում այլոց:*

*Հենց այդ պատճառով էլ նրանք խելահեղ ջանասիրութեամբ «մարտի են դուրս եկել»՝ բացայայտ երազանքով, որ մի օր նախկինները հետ կը գան, եւ իրենք նորից կը վերագտնեն իրենց տաքուկ, ապահով եւ անմրցունակ տեղերը:*

*Եւ այն, ինչ այսօր անում են բազմաթիւ, այսպէս կոչուած՝ չէզոք իրաւաբաններ, ոչ այլ ինչ է, քան պայքար նախկինների վերադարձի համար: Որովհետեւ հասկանում են՝ Սահմանադրական ճգնաժամն այսօր վերջին օղակն է, որտեղ քանդւում է նախկին իշխանութիւնների կողմից իրենց ձեռամբ հաստատուած իրավական մենաշնորհը:*

*Նրանք նման են այն օլիգարխներին, որոնք իրենց հարստութիւնը կուտակել են ոչ թէ ազատ մրցակցային շուկայական պայմաններում, այլ իշխանութեան կողմից իրենց տրուած ոչ բնական մենաշնորհների միջոցով, եւ այդ օլիգարխները, բնական է՝ ատում են ազատ մրցակցային տնտեսութիւնը, որովհետեւ այդ պայմաններում երբեք չեն աշխատել եւ չգիտեն՝ ինչպէս պիզնես վարել ազատ, մրցակցային՝ օրինական պայմաններում:*

## Ի՞նչ Տեսակի Լրագրող

Շարունակուած էջ 6-էն

*յերէն գրելու կիրքիս եւ բառերու անտառին մէջ կորսուելու մեծ փափաքիս հետ:*

*Բանաստեղծութիւնը կը դառնար յօդուած, յօդուածը կը կոչուէր ակնարկ, ըսելիքը կը շպրուէր ու տեղ կը գտնէր, որպէս պրիսմակ եւ այսպէս շնորհիւ յատկապէս Պէյրութի «Արարատ»ին ու Պոլսոյ «Ժամանակ»ին ես կը շարունակէի տաք հացի համար, ամէն օր իմ խմորս շաղել, խմորին աւելցնել ձէթ եւ ջուր ու յետոյ նետել գրաշարներուն առջեւ, որպէսզի անոնք ալ այդ արիւնքրտինքով շաղուած բառերս տային լոյսին ... եւ ընթերցողներուս:*

*Հիմա արդէն 7 տարի կ՛ընէ, որ ես լրագրութեամբ կ՛ապրիմ:*

*Ըսել չէ, որ կը գրեմ միայն թերթիս սիւնակները լեցնելու համար, այլ կ՛ապրիմ լրագրութիւնը վայելքի պէս:*

*Առաւօտուն աչքերս կը բանամ երեւանեան աշխարհի զարգացումներուն եւ յետոյ հեղ մը Պէյրութին, ու հեղ մըն ալ Պոլսին նայելով մեծ օրակարգս կը բանամ: Ու ամէն տեսակի դժուարութիւն մէկդի նետելով, ես ամէն օր կը սորվիմ հաշտ ապրիլ լրագրողի աշխարհիս հետ:*

*Արագ դէպքեր, մեծ զարգացումներ, ստեղնաշարին առջեւ քառասուն տարեկան մարդու յոգնութիւն եւ կարօտ, գրելու կիրքին առջեւ ամէն պահ մեռնելու վախ եւ կեանքի ու տարիքի արագ թաւալումին մէջ մեծ հարցումներու եւ մեծ սպասումներու կեդրոնը ըլլալու մտասեւեռում...*

*Այս բոլորը կան, կան անշուշտ նոր երազներ, նոր ընկերներ, նոր միջավայր եւ նոր յոյսեր, սակայն երէկուան գրելու կիրքը կը դանդաղի...*

*Կը դանդաղի բառին ռիթմը, եւ երէկ աշխարհը ամէն գնով փոխելու մեծ լարումը տեղի կու տայ, բարի անկիւն մը նստելու եւ մեղմ երաժշտութիւն մը լսելու մեծ գոհացումին առջեւ:*

*Այս բոլորը կը կատարուին շատ հեզասահ կերպով, ինչպէս երեկոյեան ժամերուն գրասենեակի տօթէն խամրած վարագոյրը բանալս, կամ գրասենեակէն մինչեւ «Շանթ»ի սթիւտիօ ոտքով իջնելս ու աստիճանները հատ-հատ չափելս...*

*Ի դէպ հոս Պէյրութի հին աստիճանները չկան, այդ աստիճանները, որոնք կը հատէին մեր եւ մեր ծնողներու ապրած ու կիսած ծեր ու վարպետ քաղաքին ճակատագիրը:*

*Պէյրութի աստիճանները այդ օրերուն պարզապէս կը խօսէին բանաստեղծութեան բառերով ու յաճախ կատաղի բառերով կը պատմէին մեր սիրոյ մասին ...*

*Սէրը, որ միշտ գրողի սրտին մէջ խունկի մը պէս պիտի վառի, սէրը, որ մեզ կը կապէ մեր անցեալի երազներուն, մեր յոյսին, մեր կարմիր կաղամարին ու գաղափարին եւ սէրը, որն Աստուած խոստացած էր մեզի, երբ անդրմանիշակագոյն իր հեռու ամրոցէն գրիչ մը երկարեց, առանց սակայն մտածելու, որ լրագրողը երկու անգամ պէտք է մեռնի...*

*Նախ այն օրը, երբ բանաստեղծը եւ բանաստեղծութիւնը սպաննեց իր հոգիին մէջ եւ յետոյ այն ատեն, երբ բոլորը սկսան սիրել իր գրածները եւ անոր խօսքերուն մէջ տեսան «մեծ մարդու» մը գաղափարները:*

*Երկրորդ մահը անշուշտ վտանգաւոր չէ, ահռելին առաջին անգամ մեռնիլն է, ու մինչեւ այդ մահուան հասնիլը, խօսիլը անոր հետ ու վերջն ալ այդ մահուան աչքերուն մէջ նայիլը:*

*Հիմա չեմ գիտէր իմ ազգս, մեծ ու արդէն շատ ծերացած, ինչ տեսակի լրագրողի կարիքն ունի:*

*Կամ ինչ կ՛ակնալէ լրագրողէ մը, որ իր առաջին մահը վաղուց արդէն տեսած է եւ կը պատրաստուի իր նոր կեանքին:*

*Լրագրող սիրելիներ, ինչ տեսակի լրագրող. գովո՞ղ, բարձրացնո՞ղ, փառաբանո՞ղ, սխալ ուղղութիւններ ցոյց տուո՞ղ կամ թէ պարզ ու անկեղծ, որ կը խօսի ձեր սրտերուն հետ, ու մեծ-մեծ քարոզներ կարդալու տեղ բարի շունչ մը կը ձգէ հարիւր կամ քիչ մը նուազ տարիներու բեռ ունեցող մեր թերթերու ճակատներուն...*

*Միայն ըսէք, թէ ինչ տեսակի լրագրող է պէտք եղածը. կամ ալ ազգս քիչ մը յոգնած եւ բաւական ծերացած, այսօր ինչ երանգի լրագրութեան կարիքն ունի:*

## Իմ Երգն իմ Առօրեան է

Շարունակուած էջ 15-էն

*տեր» մեծակտաւ ստեղծագործութիւնում, ստանձնելով բազմաձայն երաժշտական ստեղծագործութեան բասի առանձին մասը: Մրցանակների մասին չի սիրում պատմել, դրանք շատ են, իմացայ, որ վերջինը Լոնտոնում է ստացել, ասում էգ «Իմ լաւագոյն մրցանակը՝ բեմից տեսնել իմ երգից հաճոյք ստացող հանդիսատեսին»:*

*Բոլոր մարդիկ կարիք ունեն գնահատուած ու սիրուած լինելու, յատկապէս արտիստը, որի համար ապրեցնող ու ոգեշնչող է հանդիսատեսի սէրն ու գնահատականը...*

*Անելիքները եւ ծրագրերը շատ են, իսկ առջեւում դեռ երկար ստեղծագործական տարիներն են, Բաստիլի, Գարնիեի եւ Լա Սկալայի բեմերն են...*

*Աստծոյ օրհնանքով ու յաջողութեամբ, ինչպէս կ՛ասէր հենց ինքը՝ ահեղ երկրաշարժից ծնողներից զրկուած, կեանքի դառնութիւնը ճաշակած, բայց միշտ լաւատես ու կենսախինդ, Յուլիսի 6-ին, 45-ը նոր բոլորած Ադամ Բարրոն:*

*Կը հանդիպենք Սեպտեմբերի 28-ին, ժամը 20-ին, Փարիզի Մադլէն եկեղեցում, իսկ, մինչ այդ հանդիպումը, եկէք ջերմօրէն շնորհաւորենք Ադամ Բարրոյի փառահեղ ծնունդը, մաղթելով նրան առողջութիւն եւ նորանոր նուաճումներգգգ*

*ՄՈՆԻԿԱ ԱՌԱՔԵԼԵԱՆ*
*ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԷՏ,*
*ԼՐԱԳՐՈՂ*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին

## ՄԱՐԶԱԿԱՆ

## ԱՄՆ-ի Կանանց Ֆուտպոլի Հաւաքականը՝ Աշխարհի Ախոյեան




Ֆրանսայում կայացաւ կանանց աշխարհի առաջնութեան եզրափակիչը, որտեղ ԱՄՆ-ի հաւաքականը 2:0 հաշուով առաւելութեան հասաւ Հոլանդիայի ընտրանու նկատմամբ:

Գրեթէ ամբողջ խաղն անցաւ ամերիկուհիների վերահսկողութեամբ: 61-րդ րոպէին 11-մեթրանոցի օգնութեամբ հաշիւը բացեց Մեգան Ռաֆիոնը: 8 րոպէ անց իր թիմի առաւելութիւնը կրկնապատկեց Ռոուս Լեյվլը:

Այսպիսով, ԱՄՆ-ի ընտրանին երկրորդ անգամ անընդմէջ հռչակւում է աշխարհի ախոյեան: Ընդհանուր առմամբ իր պատմութեան մէջ չորրորդ անգամ:

## Պրազիլիան Դարձաւ Ամերիկայի Գաւաթի Յաղթող




Պրազիլիան առանց դժուարութեան յաղթեց Պերուին ու դարձաւ Ամերիկայի Գաւաթի յաղթող Ամերիկայի Գաւաթի խաղարկութեան եզրափակչում Պրազիլիայի հաւաքականը 3:1 հաշուով պարտութեան մատնեց Պերուի ընտրանուն:

Խաղի հաշիւը 15-րդ րոպէին բացել է Էվերթոնը: 44-րդ րոպէին Գերերոն 11-մեթրանոցի շնորհիւ խփել է պատասխան գնդակը: Ընդամէնը մէկ րոպէ անց Ժեզուսը կրկին առաջ մղեց իր թիմին: Խաղավերջում եւս մէկ 11-մեթրանոց նշանակուեց, այս անգամ հիւրերի դարպասին. այն անվրէպ իրացրեց Ռիչարլիսոնը:

Այսպիսով, Պրազիլիան իր պատմութեան մէջ 9-րդ անգամ դառնում Ամերիկայի Գաւաթի յաղթող:

## Դէ Խեան Նոր Պայմանագիր Կը Կնքի «Մանչեսթեր :Եունայթեդ»-ի Հետ

«Մանչեսթեր Եունայթեդ»-ի դարպասապահ Դաւիդ դէ Խեան կը շարունակի պաշտպանել Եունայթլտի գոյները: Այս մասին հաղորդում է Sunday Mirror-ը:

Աղբիւրի փոխանցմամբ՝ սպանացին պատրաստ է նոր պայմանագիր կնքել «կարմիր սատանաներ»-ի հետ, ըստ որի՝ տարեկան կը ստանայ 20 մլն եւրօ աշխատավարձ:

Համեմատութեան համար նշենք, որ ներկայումս Դէ Խեան շաբաթական վաստակում է 222 հազար եւրօ, իսկ նոր համաձայնագրով կը ստանայ 390 հազար եւրօ:

Այսպիսով, 28-ամեայ խաղացողը կը դառնայ ՄՅՈՒ-ի երկրորդ ամենաբարձր վարձատրուող խաղացողն Ալեքսիս Սանչեսից յետոյ (557 հազար եւրօ):

## Ուիմբլդոն. 15-ամեայ Գաուֆը Պարտուեց Հալեպին

Ուիմբլդոնի մրցաշարի ամենաերիտասարդ մասնակից, 15-ամեայ ամերիկացի թենիսիստուհի Կորի Գաուֆը 1/8 եզրափակիչում մրցեց ռումինացի Սիմոնա Հալեպին եւ պարտութիւն կրեց երկու սեթում՝ 3:6, 3:6: Պայքարը տեւեց 1 ժամ 15 րոպէ:

Հալեպի յաջորդ մրցակիցը կը լինի չինացի Զժան Շուայը:

## Մեքսիկան Նուաճեց ԿՕՆԿԱԿԱՖ-ի Ոսկէ Գաւաթը



Ֆուտպոլի Մեքսիկայի հաւաքականը նուաճեց ԿՕՆԿԱԿԱՖ-ի Ոսկէ գաւաթը (Հիւսիսային եւ Կեդրոնական Ամերիկայի առաջնութիւն):

Շիկակոյում տեղի ունեցած եզրափակիչում մեքսիկացիները նուազագոյն հաշուով առաւելութեան հասան ԱՄՆ-ի հաւաքականի նկատմամբ:

73-րդ րոպէին միակ կոլը խփեց «Լոս Անճելըս Գելաքսիի» կիսապաշտպան Ջոնաթան Դոս Սանթոսը:

Մեքսիկան 11-րդ անգամ նուաճեց այս տիտղոսը (1965, 1971, 1977 ,1993, 1996, 1998, 2003, 2009, 2011, 2015, 2019) եւ այդ ցուցանիշով առաջատար է:

## Մահացել է լեգենդար ֆուտբոլիստ Սարգիս Յովիւեանը



80 տարեկան հասակում կեանքից հեռացել է Երեւանի «Արարատի» նախկին յարձակուող, լեգենդար ֆուտպոլիստ Սարգիս Յովիւեանը: Այդ մասին յայտնում է ֆուտպոլային ակումբի ֆէյսպուքեան էջը:

Սարգիս Յովիւեանը ծնուել է 1938թ Նոյեմբերի 17-ին, Սուխումում: 17-ը չբոլորած՝ նա խաղացել է տեղի ակումբում: 1957-ին փորձաշրջան է անցել Քութայիսի «Լոկոմոտիվում», սակայն հրաւէր է ստացել Երեւանի «Սպարտակից» եւ տեղափոխուել Հայաստան: Հանդէս է եկել «Սպարտակում», որը 1963 թուականին վերանուանուել է «Արարատ», ինչպէս նաեւ Մոսկուայի ԲԿՄԱ-ում եւ «Սպարտակում»: 1969թ աւարտել է ելոյթները:

1970-1972թթ Սարգիս Յովիւեանը եղել է Գիւմրիի «Շիրակ», ապա Վանաձորի «Լոռիի» թիմերի աւագ մարզիչը, 1972-1978թթ՝ Երեւանի օլիմպիական հերթափոխի ֆուտպոլի մարզադպրոցի տնօրէն: 1980-1981թթ աշխատել է Երեւանի «Արարատում»՝ որպէս մարզիչ:

1982-1984թթ գլխաւորել է Արտաշատի «Օլիմպիա» եւ Հոկտեմբերեանի «Սպարտակ» թիմերը:

1988-1989թթ եղել է ՀԽՍՀ Սպորտկոմիտէի Սպորտային խաղերի վարչութեան ֆուտպոլի բաժնի պետ: 2001-2004թթ գլխաւորել է Հայաստանի պատանեկան հաւաքականը:

Երեւանի «Սպարտակի» եւ «Արարատի» կազմում նա ԽՍՀՄ բարձրագոյն խմբում անցկացրել է 147 խաղ, խփել 28 կոլ:

«Արարատ» ՖԱ-ն ցաւակցել է լեգենդար խաղա

## Ուսանողական Խաղեր. Արթուր Աւետիսեանը՝ Օղակներ Վարժութեան Ախոյեան

Հայաստանի մարզիկներն առաջին մետալն են նուաճեց Նեապոլում տեղի ունեցող ամառային 30-րդ համաշխարհային ուսանողական խաղերում՝ Ունիվերսիադայում:

Մարմնամարզութեան օղակներ վարժութիւնում նա վաստակելով 14.900 միաւոր, զբաղեցրել է առաջին տեղը եւ արժանացել ոսկէ մետալի: Արթուր Աւետիսեանը մէկ հարիւրերորդականով առաջ է անցել 2017թ Ունիվերսիադայի փոխ ախոյեան, Թուրք Իբրահիմ Ջոլակից:

Իսկ ահա կանանց հրաձգութեան 10 մ ատրճանակով վարժութեան որակաւորման փուլին մասնակցած Էլմիրա Կարապետեանը 560-13x արդիւնքով զբաղեցրել է 24-րդ տեղը եւ դուրս մնացել պայքարից: